

9610

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ
ՔՈՒՐԴ ԳՐՈՒԵՐ



27

891.57
2.78

ԽԱՅԱՏԵՑՐԱԾ · 1 9 3 6 · ՅԵՐԵՎԱՆ

40653

891.57

12-78

~~днрръ զուգելիք~~

Geffrey

~~purple-eyes~~

angstelij

621

4x62

22

28.11.64

Ville -

6683

2/11/81

18 NOV 2000



“Կորդ” Ժղբայրի Ա. քայլաւոր

ԱՎ

գույշ պատճեն

891.57

Ա. Մարգար

Ա-78

26.11.86.

ԽՈՐՀԵՐԴԱՅԻՆ
ՔՈՒՐԴ ԳՐՈՂՆԵՐ

ՄԱՏՈՂԻԱ


6010
40658

Կազմեց

Ա. Ա. Գ. Ա. Ա.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵԼԻԱՆ

1986



29 JUN 2006

Կայուցիք

Օմանական

Առաջ և Վեհապետ

11 36 թ.

Ք Բ Գ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ռ Ա Զ Ի Ն
Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Բ Ը

Հայ բուրժուազիայի մեծագույն վիպասան Իափփին յերա-
զում եր՝ ապագա հայ բուրժուակա՞ն հանրապետության մեջ ըլլ-
դական տարրը ներձուլել հայերն, և քուրդ քոչվորներին դարձնե-
նատակաց բանվորներ հայ կապիտալիստների գործարաններում:

Կղանելու նույն ախորժական եյլն տածում գեպի հայերը ցա-
րական Ծուռաստանը և սուլթանական թուրքիան: Այդ եր մանր
ազգությունների ճակատագիրը կապիտալիստական սիստեմում:
Սակայն հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը հիմնովին շուռ
տվեց մարդկային հասարակության պատմության ընթացքը և
ուրիշ կերպ անորոշեց մանր ազգությունների բազրությունը հոկտեմ-
բերյան հեղափոխությունն ստուգեց տնտեսական և քաղաքական
նպաստավոր պայմաններ՝ ցարական Ծուռաստանում ճնշված մանր
ազգությունների համար պահպանելու, զարգացնելու և ստեղծե-
լու իրենց ազգային կուլտուրան նոր սոցիալիստական հիմունքնե-
րի վրա, սաեղեկու «ձեռով ազգային և բովանդակությամբ սո-
ցիալիստական» իրենց կուլտուրան:

Ենինի և Ստալինի ազգային քաղաքականությունն արագո-
քեն տվեց իր պատմական պտուղները: Խորհրդային մեծ միության
լայնածավալ հողի վրա ապրող բազմաթիվ մանր ազգություններ
կարճ ժամանակվա ընթացքում կուլտուրապիս դրսերվեցին, տպա-
տորեն զարգացրին իրենց ազգային կուլտուրաները՝ զարգարե-
լով խորհրդային սոցիալիստական միասնական և բազմածե կուլ-
տուրայի մեծահարուստ գանձարանը: Մի շաբք ազգություններ
ազելի հեղացրին իրենց լեզվի և կուլտուրայի զարգացման գոր-

(13295-58)

Պատվիտի լիազոր 294, Պատվիր 21,
Հքաս. 3476, Տիրամ 2000

Հանձնված և արտադր. 8 հոկտ. 1935 թ.

Շատրադրված և ապագրելու 10 հունվարի 1936 թ.

Գիտարատի տպարան, Խնուռնի 4

ծը՝ անցնելով լատինական այբուբենի գործածության, մյուսներն առաջին անդամ ստեղծեցին իրենց համար այբուբեն, տառջին անդամ պատմության մեջ ստեղծեցին գրավոր տրտահայտվելու հնարավորությունն վերջին կարգին և պատկանում նաև քուրէ ժողովուրդը:

Հայաստանի խորհրդային իշխանությունը կումունիստական կուսակցության ղեկավարությամբ քուրդ ժողովրդի նկատմամբ կիրառում է Լենինի և Ստալինի ազգային քաղաքականությունը: Այդ քաղաքականության շնորհիվ քոչվորական քուրդ ցեղերը, վորոնք գարերով շահագործվել ու կեներվել են տղետ ու սահմարձակ ցեղակեների մարտիկ տակ՝ արնախում հոգեօրականների, ցարական չինոնիշիկների, ագան վաշխառուների և նույն այդ ցեղակեների կողմից, հետզհետե անցնում են նստակյաց կանքի ստանում են պետությունից հող, համտիմբվում են կոլեկտիվ տնտեսությունների մեջ և սկիզբ են դնում իրենց անտեսական և կուլտուրական վերածնությանը: Այդ վերածնության ամենամեծ աղջակն և բրդական այբուբենը վորը մշակվեց հայաստանի սոցիալիստական մայրագաղաքում քուրդ և հայ գիտական ուժերի ձեռքով և հնարավորություն ստեղծեց բրդական դյուղերում զբոցներ բանալ Թերեանում ճիմել քրդական տեխնիկում և հրատարակել «Ծիյա Թազա» քրդական լրագիրը: «Ծիյա Թազա»-ի և տեխնիկումի շուրջը համախմբվեցին ոռուական և հայկական գլորոցներում կրթություն ստացած այն քուրդ յերիտասարդները, վորոնք մեծագույն խանդակառությամբ ձեռնամուխ են յեղել քրդական խորհրդային կուլտուրայի և քրականության զարգացման գործին: Այդ ընկերներից աչքի յեն ընկնում: Արաբ Շամիլը, Հաջրի, Զնդին, Ար Ավալը, Զամսե Զալիլը, Զարդոյե Գինջոն, Նուրին, Անմատե Միքաղին, Վաղիրե Նաղըրը, Աթար Շարոն և ուրիշները: Այդ քուրդ յերիտասարդներին ոզնության են համանում իրենց խորհուրդներով ու ցուցումներով հայաստանի խորհրդային գրողները, վորոնց մեջ կան քրդերն լեզվուն տիրապետող ընկերներ (չ. Մկրտչյան, Հր. Քոչար և ուրիշները):

Քուրդ ժողովուրդը չափազանց հարուստ և ժողովրդական բանահյուսությամբ: Քրդական եպոսն իր բովանդակության հարը-

տությամբ, իր զգացմունքների խորությամբ ու արևելյան վառ յերանդավորությունիվ կարող ե մրցել արևելյան լավագույն եպոսների հետ: Մեզ հայտնի յեն նրա գրի առնված մեջ քանի կոթողւները միայն ԱՄամանթու ու Խաջազպարեա «Մամեն ու Զինեն», Զամաներու, «Մամեն ու Աշուն» և այն Բավական և ծանոթանալ այդ բլլթյուզ, «Մամեն ու Աշուն» և այն Բավական և ծանոթանալ այդ շաբքի հետ, վորովսով պարզ լինի, թե ստեղծադորդական ինչպիսի մեծ թուշք ունի քուրդ նահապետական ժողովուրդը: Քրդասի մեծ մեծ թուշք ունի քուրդ նահապետական ժողովուրդը: Կան եպոսի մեջ արտահայտվում են նահապետական ժողովրդի կենցաղը, հոգեբանությունը և մարդկային հարաբերությունները, վորովսով սկսում են վիշանալ մանակետության և փողի ներխուժությունը մից: «Մամեն ու Զինեն» մաքուր սկըրո գեճ լարված պալատական մից ի խորհրդների սքանչելի և բարդ մեջ հյուսվածք ե, մեջ յուրահատուկ էնտրիքների սքանչելի և սկըրո մանրամասնությունների մեջ: Պալատական կենցաղն իր բոլոր մանրամասնությունների մեջ: Վատական սկըր հպոխաներ են խտացված այդ սքանչելի եղանակական մեջ շաբք եղուսաներ ու խտացված այդ սքանչելի շիլ գրված իրեն պոսում, վոր տակալին չի ուսումնասիրված և չի գրված իրեն պարմանի բարձրության վրա: Միըր և հասարակական վորոյ հարաբերությունների բայլսման մեջ փայլուն արտացոլում ե նաև համբանափ «Միամանթու ու Խաջազպարեա», վորն այնքան հաճախակի քրավում և հայ բանաստեղծների ուշագրությունը: Նույնպիսի յեմա յե շոշափում նաև «Զամբիլ Ֆրուշը», վորի սոցիալական շեշտեն ավելի զորելի և քան ԱՄամանթու ու Խաջազպարեա եպոսինը: Նահապետական ընտանիքի հավատարմության գաղափարն և յերգում «Մամեն Աշուն»-ում, վորն ունի այնքան սրամիտ սյուժե և սքանչելի կառուցվածք: Աշաշդրավ են նաև քրդական ժողովրդը: Արդեռն իրենց հարուստ սյուժեյի որիգինալ պատկեր գական ի խորը հուգականությամբ: Այդ յերգերի բովանդակությունը մեծ մասմբ առպետական սիրոն ե, անհատական հերոսությունը ու մեջ մասմբ առպետական տիրապետության դեմ: Կան նը և ժողովրդական տրտունջը ալիքող անարդարության դեմ: Կան նը և ժողովրդական վրեմինդրության ու ավագակայլն արկածախըննաև եղեղական վրեմինդրին նվիրված բրդական եպոսն ու յերգերը, զրություններին նվիրված նվազների Քրդական եպոսն ու յերգերը, արտացոլում են սոցիալական տարբեր զանգվածների անշրջաց, արտացոլում են սոցիալական տարբեր

դաղափարախոսությունը Նրանց մի մասը վառարանում և հազբեցանում ե բեկերի և ելաջասիների տիրապետությունը։ Մյուս սամն, ընդհակառակը, արտահայտում ե ժողովրդական զանգվածների դգոստությունն այդ տիրապետության դեմ։ Հենց վերջին տիպին պատկանող գործերն ավելի մեծ գեղարվեստական արժեք են ներկայացնում (որինակ՝ Զամբլլ Փրոշը):

Մեր իրիտասարդ քուրդ ընկերները, այսպիսով, ունեն ժողովրդական մի արժեքավոր ժառանգություն, վորը հնարավորություն և տալիս նրանց՝ տայլու գեղարվեստուրեն մնայուն գործեր։ Դժվար և սպառիչ զատողություն անել այս անտոլոգիայում զետիգած գործերի մասին թարգմանությունների հիման վրա Այսուու ածենարիվ մի բան ակներև ե, վոր ընկերները քիչ են ոգտագործել իրենց ժողովրդական բանահյուսության հարուստ փորձը։ Նրանց զրգածքներում նկատելի յե լրացրական վօճի և սինմատիկ աղիացցիալ ազգեցությունը Արձակ պատմվածքները հաճախ չեն բարձրանուած լրագրաին ակնարիկ մակարդակից, իսկ չափածոները յերբեմն մնում են իրեն սոսկ պրիմիտիվ աղիացցիա։ Սակայն մինք ափելին իրավունք ել չունենք պահանջելու այդ ընկերներից, քանի վոր նրանք տակավին իրիտասարդ սկսնակներ են, և չունեն իրենց յետելից զրագոր գրականության վորեն փորձ։ Չպետք և մոռանալ, վոր մենք գործ ունենք քրդական գրականության առաջին ձնծաղիկներ, վորոնք նոր նոր սկսում են իրենց գլխիկները բարձրացնել զարագոր գրազբյության ու հետամնացության թանձը սառույցի տակից։ Յեթե այս տեսանկյունից նայենք այս անտոլոգիաին, ապա մեզ համար պարզ կլինի նրա պատմական նշանակության ամբողջ մեծությունը։ Քեզարվեստորեն տակավին չզարդացած ձեկերի մեջ քուրդ իրիտասարդ դրույներն արտահայտում են իրենց ժողովրդի քաղաքական-պատմական ինքնագիտակցության պայծառ լուսաւացը։ Քուրդ զրովի համար պարզ ե, վոր իր ժողովրդի արդունախում թշնամիները քարերի ընթացքում յեղիլ են ոտար կեղեցողների հետ միասին քուրդ աղնվականությունն ու հոգեօրականությունը և այդ ժողովուրդն իր աղատությունը, իր անտեսական և կուլտուրական զարգացման ճանապարհը գտել ե պրոլետարիա-

ար սոցիալիստական հեղափոխության և նրա դիկտատուրայի մեջ։ Քուրդ զրովը գիտակցում ե, վոր աշխարհը բաժանված է յերկու թագավորական երկու այլ բանակների պարփառը շատ տվելի լուրջ ե հատ ավելի բաղդարուց, քան յերկու քրդական եղանակական վագաղակարին վրեժիքն գրությունը և ամուսնությունը։ Նա խորապես համոզված ե, վոր աշխարհի բոլոր հաջախաների կեղեքածների հույն ու հայրենիքը խորհրդային արությունն ե։ Նա մտածում է խորհրդային հայրենիքից զուրս դաշտավայր իր արք ճնշված ու կեղեցված գասակարգարին յեղաբար ների ասախին։

«Բայց մեր իրկրից դուրս, մեղ այնքան մոտիկ ելի մենք ունենք յերբայրներ բակում և քուրդ բանաստեղծ Զամբե Զալիլը նա դույց և տալիս, վոր քուրդ ժողովուրդը խորհրդային հայաստանի և խորհրդային միության բոլոր ժողովուրդների հետ միասին զնում և գեղի «նոր, անդասակարդ, ազատ մարդկությունը»։ Քուրդ բանաստեղծը քաղաքական բարձր գիտակցությամբ և լոր զգացունքներով առողջական մի բանաստեղծություն և նվիրում իր սոցիալիստական հայրենիքի մայրաքաղաքին։ Յերիշավանին։

«Զգա Յերեան, Ալագրապի պես
Բարձրացիք հապարտ, նոր անման,
Մենք մեր կրծքերով կպաշտպանենք քեզ։

Անսոլոգիալի ամենառաջազրավ գործը Լենինգրամի արենցան գիտությունների զոցնա Արար Շամիլովի վիպակն և Շեշտագյովի քրգերը։ Ոչերկանման այս վիպակում Շամիլովը նկարագրում է քուրդ բեկերի և աղաների համայականություններն ու զավարությունները քոչորական ցեղերի զեմ և զնում և այդ քոչվորներին սատակւացության վարժեցնելու և նրանց աղաների և փիրերի իշխանությունից աղատագրի պրոլետը։

«Շատ ժողովուրդներ են մեզ պես սկսել իրենց կյանքը, առում և Շամիլովի հերոսներից մեկը, տեղից տեղ քոչելի վոչիար ու տափարով ապրուստ արել, բայց նրանք վախտին են գլխի բնկել, խելք արել, նստակաց կյանք են սկսել հող վարել, հաց ցանել, քաղաքները շինել իսկ մենք առաջի պես բեկերի խոռոշով

հեք ժամանում նրանց համար, Եղ մեկա թե՛ մի հեր յերկու վորդի ունենաւ ու մեկը ծնվի, որորոց մտնի, չորհթաթ ան՛, հետո յել վոտ առնի, մեծանա, դառնա կարդին տղամարդ, իսկ են մեկելո հենց ենենց ել որորոցումը մնաւ Այ, մենք ել եղ մեկել վորդու նման ենք ինչ ծնվել ենք. Ե, քանի հարյուր տարի առ, սկի յի յել հարդի, հեջ չենք մեծացել, ու միշտ որորոցի մեջ ենք մնացել Համա վախտն առ, վոր մենք ել վոտ առնենք, մեծանանք ուրիշ ժողովուրդների նման ու նրանց նման ապրենքք:

Քոչվորական կյանքից ազատագրվելու ձգտումը կա քրդական համարյա բոլոր գրողների զրվածքներում: Նրանք պայշառում են նաև կենցաղալին հետամնացության ուրիշ յերեւություն գեմի Հաջիելի Զնդին իր «Չողան» պատմվածքում աշխատում ե ցույց տալ, թե ինչպես վաղահաս ամուսնությունը ճնշում, այլանդակում, ժամանակից առաջ ծերսցում ե քուրդ կնոջը և թե ինչպես խորհրդային իշխանությունը պայմաններ ե ստեղծել հառարակական այդ չարիքի առաջն առնելու Պայքարելով՝ քրդական էին կենցաղի և նրա հետ կապված այլանդակությունների գեմ քուրդ յերիտասարդ գրողները գովերլում են քրդական նոր կոլացնեսային գյուղն իր անտեսական ու կենցաղային առավելություններով, երգում են դպրոցը, տեխնիկումը, լրենց «Ծիյաթագա» լրագիրը և այն ամենը, ինչ իր հետ բերեց քուրդ ժողովը՝ համար խորհրդային իշխանությունը:

Այս անտոլոգիան առաջն փորձն ե, վորով մեր պետական հրատարակությունը ցանկանում ե հայ լնթերցողին ժանոթացնել քրդական, տակավին դալար, դրականության առաջն պտուղների հետ, Վորքան ել տակավըն թերահաս լինեն արդ պտուղները, այնուամենայնիվ այս առաջըն փորձը պետք ե վոզչուսել հաստատ համոզված լինելով, վոր քրդական հաջորդ անտոլոգիան կվարունակի դեղարվեստական այլիլի հասուն գործերը Աւա անտոլոգիայի հրատարակությունը մեկն ե այն բազմաթիւ վաստերից, վորոնք ցույց են տալիս, թե ինչպես խորհրդային իշխանությունը հայաստամում, հայաստանի բուշելիների դեկավարությամբ հետեղականորեն կիրառում ե լենին—Ստալինյան ազդաւին քաղաքականությունը հայաստանի ազգային փոքրամասնությունների նկատ-

մամբ: Այս անտոլոգիայի միջոցով քուրդ յերիտասարդ գրողները վորոնք արդեն ծանոթ ու հարազատ դեմքեր են հայաստանի խորհրդային գրողների ընտանիքում, հայանի կղառանան ընթերցողների լայն զանդապածին: Մյուս կողմից քրդական գրողների մը ջողով հայ կլասիկ և ժամանակակից զրոյների մի շարք գործեր արդեն թարգմանված են և շրունակվում են թարգմանվել քրդերինից Գրադիտություն սովորած քուրդ աշխատավորությունը հնարավարություն և ստանում իր մայրնին լեզով կարդալու հայ, ուստի թուրք, վրացի և այլ ազգությունների գեղարվեստական լավագուն գործերը: Հետովնետե այդ թարդմանությունների քրակի ըկլայնան և քրդերեն լեզվով կթարդմանվեն նաև յեկրոպական գրականությունը լավագուն նմուշները: Հայ քուրժուաղիայի պատմական ծրագիրը՝ քրդերին ասսիմիլացիայի յենթարկելու վերաբերյալ՝ մնաց սոսկ մի սեակցիոն ուսուպիս: Քուրդ ժողովուրդը վոչ թե կձուլվի հայերին կամ մի վրեւե այլ ժողովը՝ կորցնելով իր ազդային ինքնուրույնությունը, այլ հայերի և Խորհրդային միության մրուս ժողովրդների հետ ձեռքի տված, ձեռվ ազդաւին և բովանդակությար ինտերնացիոնալ իր կուտարան ստեղծելու ճանապարհով, կդիմի դեպի հնոր, անդասակարդ ազատ մարդկությունը, վորի սասին կոչ և անում քուրդ յերիտասարդ բանաստեղծը:

Ն. ԶԱՐՑԱՆ.



ԱՐ Յ. Բ ՇԱՄԻԼ ԹԱՎ

ԱԼԱԳՅՈԶԻ ՔՐԴԵՐԸ¹⁾

Մի մեծ ու անչափ բարձր սար ե, անանցանելի ու վիթխարի, նրա լանջերը մատչելի յեն միայն քոչվորներին. իրենց վոչխար ու տավարով։ Դա Ալագյոզն ե (կապույտ աչք), վոր լայնորեն տարածվում է Սարդարաբադի սառըտից ու իր մի կողով հենավում ե Միսխանի կիրճի շրթին։

Հսկա, ճանապարհապուրկ լեռն ընդդրկում ե Հայաստանի չորս խոշոր շրջանները՝ Աբարանը, Մոլլա-Դյոչչան, Թալինը և Սշտարակը։ Հեռու, շատ հեռու յերկում ե նա իր լայնք ու յերկայնքով։ Նրան շըր-

¹⁾ Աներեն տեքստից թարդ. Ս. Քոչարյանը.

ջապատռդ ամպերը նմանվում են ծովի, վոր վեհ ու հանդարտ գլորում ե իր ալիքները։

Յերկնակամարն ել նրա վերը անծայրածիր ե ու աղատ։ Որ ու գիշեր հսկում ե Ալագյոզը Յերկանի բերքառատ հովտին իր հստակ, ձյունածածկ վեղարով և ցածում գրավում ամառային գաշտային աշխատանքներից ու շողից կիզվող գեղջուկի ուշադրությունը։

—Հասն, —ասում ե քրդերից մեկը մյուսին, վոր դաշտային աշխատանքներին բատրակ են վարձվել։ —Հասն, —ու ձեռքը մեկնում ե դեպի Ալագյոզի բարձունքները, —ա, թե են սառույցների մոտ ըլնեյինք, վոր անցած տարի վոչխար եյինք արածացնում, այ թե հով կլիներ հա։

—Հա, հա, ես անիծված շեյխներն ու բեգերը մեր շխաբեյին, մեր արյունը չծծեյին, մենք հիմի յել ընտեղ վոչխար կլինեյինք արածացնելիս։ Ա՛, բասենց ել բան, յես իմ գերգաստանով հինգ տարի չուրանություն եմ արել Ագիր բեգին ու Մեջիր բեգին, վերջն ել վղակոթիս տալով գուրս արին ու վոչ մի բան ել հախ չտվին... Գնացի ամենամեծ բեգի¹⁾ կուշտը, նա յել պլետի տակը քաշեց, թե՛ դու կարտագանգատավոր ըլես իմ բեգերոնց վրա։

Ո՞ս խուազե²⁾... եղ դու արիր... եղ դու եյիր գորավոր շեյխ Աղեն³⁾... վոր Խոփղեյի աչքը դառ-

¹⁾ Յեղակետ

²⁾ Աստվածի

³⁾ Ամենազորագոր սուրբ։

Նացըիր մեղ վրա: Եդ դու եյիր, վոր նրանց բեզ շինեցիր, մեղ՝ քյասիր չորան...»

Լուռ են յերկուսն ել, մտազբաղ... բայց ավելի յին սեղմում իրենց խանչալների գաստակները...

Յերկիրը շնչասպառ եր լինում յերկնքի տաք գրկախառնությունից, արեւ հալ եր ընկել սեփական ճառագայթներից: Տոթը՝ վոնց վոր մառախուզ լիներ ողում: Հոգնածությունն ե սահում նրանց դեմքերով:

Հասոն ու Բաղոն ավարտեցին ամառվա զաշտային աշխատանքները: Վաստակած փողը ձեռներին, ուրախ, նրանք վերադառնում եյին իրենց տները: Անցան դաշտավայրը, մոտենում են Ալագյովի ստորին լանջերին. անուշ հովը վողջունեց նրանց: Արխարտղի դոշերը բացելով՝ լինաթոք շնչում եյին նրանք կենսարար հովն ու նրա թեկին յեկած հեռու ծաղիկների բուրմունքը:

Մոտենում եյին իրենց հարազատ Շամիրան գյուղին: Արեւ մայր եր մտել արդեն, նախիրները տուն եյին դառնում ու ներիների գլխավորությամբ բաժանվում դեպի իրենց տերերը:

Մութն ընկնում ե: Արևելյան գեփյուռը մեղմուրեն խաղում ե վերեռում ու նրա սվավունը ձյունոտ գագաթներում ծնվող առվակների կարկաչի յե նմանում:

Գյուղի կողքի բացատում մի յերկու հարյուր մարդ ե յերեռում: Հասոն ու Բաղոն տեսան: Վախեցան:

—Եդ բեգերն են քեֆ անում, վոր տեսել են մեղ, բեգափեշքեց են ուզելու:

—Արի սպասենք, թող լավ մթնի, հետո կոնովը քաշվենք գնանք մեր տները:

Նստած եյին ու հետզհետե սկսեցին հետաքրքըրվել: մթության մեջ աննկատելի, նրանք մոտեցան հավաքվածներին ու դիտում եյին, թե լինչ է կատարվում:

Մեծ պղինձներում տժում եր քոչվորների չորան—զառւրման: Ոջախի կրակը ճարճատում եր, ու յերկնակամարում պեծին եյին տախի աստղերը: Բեգերը նստած եյին կրակի առջև փուած խալիշաներին, թիկնած փափուկ դոշակներին ու փետրաբարձերին: Նրանց կողքին կուլակները, իսկ թիկունքում շարվել եյին նրանց նոքյարները՝ վոտից՝ գլուխ զինված թուր ու թվանքով, ատրճանակներով ու խանչալներով, փաթաթված լիքը փամփուշտականներով:

Բեգի խարույկի շուրջը նստած են նրա մոտ ագգականները, բարձրից և արհամարական նայում են քյասիր—քյուսուրին, վորոնք կորացած մեջքով ըսպասում են իրենց տերերի հրամանին:

Բեգերից մեկը յելավ, նայեց շուրջը:
—Ամեն ինչ լավ եր, քանի լույս չեր ընկել եղ կոմունիստը. ինքներս եյինք կառավարում, մենքի պատիվ կար. եղ կոմունիստը յեկավ—չեկավ, ամեն ինչ տակն ու վրա ելավ...

Մեծ մերխաս Շամոե—Ասոն վրա բերեց տեղից:

—Նա չեր ինձ գյուղխոհրդի նախազահի տեղիցը վեր հանողը, թե՝ կուլակ ես: Են տկլորներն ել ականջ են գնում ու յերես գարձնում աշիրաթի սովորություններից ու որենքներից, ծերերի պատիվը չեն

պահում։ Հրեն մեր չոբանի լակոտը, մի վոր հացի քան եր անում Մայիսի կշտին, հիմի դիմում ա տը- վել ու իր բանածի հախն ուզում ա առնի... ելի նրա մատն ա խառը, նա յա պղտորում։ Ուսուբեգն ել ա ասում, վոր նա յա խարարի տալի, եղ կոմունիստը։

Ու նորից լոեցին։ Զեփյուռն աթարի ծուխը տա- նում, վարը նստած զյուղացիների յերեսովն ե տալիս։ Ու վոչ վոք չի խախտում լուռթյունը։

Դիմելով ժողովրդին, խոսք ե առնում մեծ շեյխը։ —Գիտեք, թե ինչն յեն ձեզ ժողովել այստեղ մեր մեծ բեգերը։ Ուսուբեգը, Զահանգիրն ու Ագիրը։ Հավատարիմ աշխաթներ, ձեզ կանչել են քեֆի ու կեր ու խումբի... Քեֆ քաշեք, աղնիվ ելեթներ, խուա- դեյի ծառաներ, քեֆ արեք...։

Առատորեն բացվում են տկարների ծորակները, գետ գարձած՝ հոսում ե գինին։ Նոքյարները թեյի բա- ժակներով շրջում են քեֆ անողների մեջ։

—Քու վողջությունը, Մակուեմըն, ¹⁾—բացա- կանչում ե Շամոն Ասոն։ Սա զվասվոր խմբավետն ե, վոր բեգերի հրամանով ավերում ե անհնազանդ քըր- դերին։ Ժողովուրդը վախենում ե նրանից։ Յերեկվա հարձակումից հետո Շարքի ցեղի վրա, վորը դեռ զաշ- նակների ժամանակից չի հնազանդվում բեգերին, — հագած ե կարմիր արխալուղ ու թանգարին բեշմետ, դոտեալդված արծաթաղարդ թասմայով։

—Շարքի ցեղի զվասվորները համաձայն են մի-

1) Իմ տեր, աղասի

անալու մեզ, բայց մնացած մերկ ու չփլաղները բո- լորն ել գեմ են,—ասում ե Շամոն Ասոն։

—Իմ հավատարիմ ժողովուրդ ու իմ նոքյարներ։ — Խոսում ե Ուսուբեգը, — իմ հերն ու պապը, պապն ու ապուպապը կառավարել են ձեզ։ Համաձայն ավան- դության, մենք վրա յոթերորդ պորտն ենք, վոր կա- ռավարում ենք ձեզ։ Դուք յեղել եք հավատարիմ, հը- նազանդ ու չեք խախտել մեր ավանդները, ձեզանից վոչ մեկը չի յեղել մեր դեմ և Ուսուբեգի սուրբ ոջա- խըն ու հացը ձեզ միշտ պահել են դժբախտությունից, հի- վանդությունից և ձեր տափարը ժանտախտից։ Բայց հիմի նոր կառավարություն ա եկել, անիծված, անաստված կառավարություն, խուադեյի դեմ գնացող կառավարու- թյուն, նրանց ուզածն ե, վոր բոլորն ելքասիր, չփլաղ ու տկոր ըննեն, իսկ հարուստ չմնա բոլորովին...։ Բայց թե վճնց պիտի ապերեյնք։ Ասենք հենց նդոն ա ու չունի են իրեք սուրու վոչխարը, բա թյալաշն ու նրա նման քյասիբ—քյուսուրը վճնց ա ապրուստի գուռն անում։ Զե, ես կառավարությունը մեզ պես քոչվորի համար սաղական չի իսկի։ Ասանց են ել, — շարունա- կում ե Ուսուբեգն իր ճառը, — խուադեյի կամոք, իմ վորդին եսոր ել կառավարում ա ձեզ, ինչպէս և Զա- հանգիր բեղը՝ իր ցեղը։

Ապրում ելինք մեզ համար, ես ա չորս տարի ա, ես կառավարության որով ոչով մեր հանգիստը չի խանգարել։ Ու տես վոր, նոր հիմի, վորտեղից վոր- տեղ լուս ա ընկնում մեր վաղուցվա չորան Մատոյի վորդին։ Նա զավաճանել ա իր հավատին ու ցեղին, ուստ կնիկ ա առել, դառել անաստված կոմունիստ,

Կռտել բեխ ու միրուք, եկել խելքահան արել ես շաշ
ու սարսաղներին, ես շվան ու հավանին¹⁾, սրանք ել
դավաճանել են ազգին, հավատին ու զավերին²⁾ և
դրա ճամբեն բոնել: Ու դեռ սրանց վորդկերանցն ել
կոմսոմոլ ա գըում:

—Նա ես ա մի ամիս ա իմ դամարն ել ա մը-
տել, համա յես դավաճանողը չեմ, —ասում ե Մեջիդ
բեդի չորանը:

—Եղ անհավատը, —շարունակում ե Ռւսութեղը, —
իմացել եմ, հմի յել վոտն ու ձեռն ա ընկել, վոր մեզ
զինաթափ անի: Ինչ ա ուզում մեղնից. ձայնազուրկ
արեց, հմի յել զենքն ա ուզում խլի... Ախր ես զեն-
քերը մեր ցեղականն ա, մեր ապօռապալի մեջքինն ա,
հետ յել մեր պատկերն են բանացրել ու մեզ ել հայ-
քերի ձեռիցն ա հասել:

—Իմ հավատարիմ խուլամներ³⁾ ու աշխիլաթներ,
ասեք սրտներիդ ուզածը, մենակ թե Մստոյին պետք
ա վերացնել: Բեգն ունեփոր ա, ինչքան ուզեք՝ վոշ-
խար կտա, նա կոն⁴⁾ ել կտա, մենակ թե Մստոյի
հախիցը գա:

—Պետք ա վերացնել նրան, քրդական հավատը և
նրա աշխիլաթի անարատությունը պահելու համար:

Խուլամներին ընծաներ բաժանեցին, կուլակի պո-
չերին ել բաժին հասավ: Բախշիշ տվողը ցեղի բե-
գերն ու կուլակներն եյին: Զքավորներից, առաջինը

1) Զոբան—բատրակ:

2) Կըոնական ավանդություններ:

3) Մառաներ:

4) Այժմ բբդից գործած բոչվորդ վրան:

վոր մերժեց ընծան, բատրակ Աղեն եր, Զուքըի ցե-
ղից: Բոլոր ուներդներն ու կուլակների հավատարիմ-
ները հարձակվեցին նրա վրա չարությամբ և սպառ-
նալիքներով: —Անհոգի, անհավատ, ուզում ես մատ-
նել մեզ, համա...

Աղեն զուրս յեկավ կուլակների շրջապատից ու
մոտենալով չքավորների խմբին, կանգ առավ նրանց
մոտ: Սպառնալիքները չվախեցը ին Աղեյին, նա խոր-
հուրդների համագումարի անդամ եր՝ շրջանային ու
զավառային մասշտաբով նա լսել եր պատգամավոր-
ների, կառավարության ու իշխանության ներկայա-
ցուցիչների ճառերը և գիտեր, վոր հեռու չե այն որը,
յերբ գալու յե այդ ձրիակեների վերջը: Բոլոր այդ
խայտառակությունները նա լուս ու մունջ տանում
եր, որեցոր սպասելով այդ ժամին:

Ամբոխը խոսք տվեց ցեղապետներին, վոր հա-
վատարիմ կմնա իրենց ավանդներին ու հնազանդ՝ բե-
կերին ու նրանց խոսքին:

Զքավորները, մի կողմ խմբված, դառնորեն լսել
եյին: Նրանց մոտեցավ Փիր—Աբասը¹⁾:

—Յես յոթ տարի ավագանիների անդամ եմ յե-
ղեկ ու աստծուն չեմ ուրացել իակ զուք վոշխարնե-
րի նման եղ անաստվածի խոսքովն եք ընկել:

—Ճարդներս ի՞նչ, —ասում ե չքավորներից մեկը:

—Զեղ են պլետավոր պրիստամին ա պակասում:
Մի ձեռու բռնող չլիներ, յես ձեղ շանց կտայի, թե
վնաց եք ձեր բեգն ու ոռւսին թողած, եղ Մստոյի
յետեկից գնում:

1) Հոգեռքական աստիճան եւ

—Թող դրանք չկարծեն, մեջ ե մտնում Մեջիդը,
բեգը, —թե շատ ա յերկար բազովնիկի որը. հրես ելի
մեր պլետի տակն են ընկնելու, են վախտը մենք
դրանց համեցը կգանք...

Գինովցած բեգերն անարգել ասում ելին իրենց
ցանկացածը: Այդ պրովակացիան աղդում եր չքավոր-
ների վրա: Սրանք սարսափում եյին այն մաքից, վոր
յեթե նորից նրանց ձեռքն ընկնի իշխանությունը,
նրանց պլետները խավարացնելու յեն չքավորների
կյանքը: Մեջիդ բեղը վեր կացավ որորվելով, տկճորը
կոնտառակին ու թեյի բաժակը ձեռքին մոտեցավ չը-
քավորներին հրամցնելու: Հնաղանդ սովորության
համաձայն անկարելի յեր մերժել բեգի պատիվը: Նա
մոտեցավ Աղեյին:

—Ես, ախպերս, յերբ հարյուրապետ եյի դաշնակ-
ների որոք, պարուչիկի չինի յել արժանացա, —ասում
եր Մեջիդ բեզն որորվելով, —ու դու եղ իշխովդ
մեկ դեռ խեթ ես մտիկ տալիս ինձ. դու դեռ սպասիր...
Առ խմի, —ու բաժակը խոթում ե Աղեյի բերանը:

—Մեջիդ—բեգ, յես չեմ խմում, դող ունեմ:

—Ախմախ, —ասում ե թունալից ժպիտով Մեջիդ
բեգը, —դողի ամենալավ գեղը գինին ա, —ու նորից
մոտեցնում ե բաժակն Աղեյին: Աղեն չխմեց: Զիսմե-
ցին և մլուս չքավորները, բացի կուլակների հավա-
տարիմ պոչերից:

Շեյխերը, կուլակներն ու սուսփինը հանդիմանում,
անիծում են Աղեյին, բեգի խոսքը գետնովը տալու
համար:

Խորովածը, հացն ու գինին մինչև լուսաբաց ան-
պակաս են սուփրից:

Ուսուբեգի ու Զահանգիր—բեգի մեջտեղը բազմել
եր դաշնակը: Նա հրամանատարի գեր եր խաղում,
վախտում եր այս ու այն բեգի ականջին, ու սրանք
նոր միայն բանակցում եյին գյուղացիների հետ:
Սուփրին վերջանալու վրա յեր Շատերը հարքած, հա-
մեց ընկած խոմքացնում եյին ոջախի մոտ: Մյուս
շեյխերը, փիրերը, բեգերի ազգականներն ու կուլակ-
ները հպարտությամբ պատմում ելին իրենց արկած-
ների մասին, թե ինչպես եյին թալան անում դաշ-
նակների որոք:

Զահանգիր բեգի հորեղբայրները՝ Ալի—Բարասիլ
Ողլին ու Հասան—Աղա—Ռասոյելը պատմում եյին
Հասան ցեղի բեգերին, վոր իրենք Զահանգիր—բեգի
հետ միասին՝ ազգայնական կոտորածների ժամանակ
մի գյուղում քշել են բոլոր տղամարդկանց ու կանանց
մի շենքի մեջ ու կրակ տվել: Կուլակների մի այլ
խումբ վիճում եր Ալա—գյողի ստորոտների մասին,
ովոր նրանց պես արոտ սաղ աշխարհումն ել չի գտնվի,
և վոր նույնիսկ Զալալի ցեղը, վոր ապրում ե Տաճ-
կաստանում, խնդրել ե Քեմալ—փաշային թույլ տա
իրենց տեղափոխվելու Ալա—գյող:

Տեղից յեխնում ե դաշնակը, նախկին խմբապետը,
վոր լավ տիրապետում ե քրդերենին: Նա նախ կար-
դում ե Մատոյի՝ բեգերի, կուլակների ու կրոնի գեմ
գրած հողվածները, ապա սկսում ե իր ճառը:

—Զեղ քաջ հայտնի յե, վոր այս իշխանությունն
ավերում ե գյուղացուն, ուզում ե բոլորին չքավոր

դարձնի, չքավորին ել՝ բատրակ, մի խոսքով՝ վոր բուրը չքավոր լինեն ու աշխատեն նրանց համար: Նաձեր միջից Մստոյի պես չփաղներին ջոկում, դարձնում ե ձեզ ղեկավար: Մի տեսնենք, թե ինչ մարդ ադա... Դուք հո լավ գիտեք, վոր ինքն ու իր հերը միշտ ել բատրակություն են արել մալականների, հույների, հայերի ու քրդերի մոտ: Իրենց կյանքում լերկու փութ ալրից ու մի եշից ավելի բան չեն ունեցել: Հրես նրա տերը, թող ասի,—դիմում ե դաշնակը մի յերկարաբեղ քրդի, —հիմա յեկել ե ձեզ մոտ, ձեր հիմարներն ել լսում են դրան ու դեմ են գուրսգալիս բեզերին, իրենց տերերին ու հոգևորականներին: Նա խարսում ե ջանելներին, ուղարկում նրանց քաղաք, վոր իրեն սովորածը նրանց ել սովորեցնեն: Դուք պետք ե ձեր բեզերի հետ լինեք, վոր հաստատվին ձեր տունն ու տեղը, իսկ եղախիներին դուք պետք ե քշեք ձեր շրջանից...»

Նրա ճառն ընդհատվեց գամփոների հաջոցով ու ձիերի գոփյունով, և մեկը զիլ ձայն տվեց:

—Վ՞րտեղ ե ապրում դյուղնորհրդի նախագահը, պետք ե տեղափորել միլիցիոներներին:

Ամբոխը խուճապի մեջ փախչում ե իրենց տները: Դաշնակը շներոց ե լինում ու հաղիվ նրանցից ազատվելով, իրեն զցում ե Մեջիդ—բեզի տունը: Տիրեց լուլթյուն: Հասոն ու Բաղոն շվարել ելին: Նրանք հովտում, հայկական գյուղերում տեսել ելին, վոր այդ տիրակալներից հետք անգամ չեր մնացել, իսկ այս տեղ սրանք դեռ ևս զինված, ազատ ման են գալիս ու դեռ առաջվա պես ել ուժ են բանացնում քրդերը:

վրա: Նրանք լուռ մտածում ելին իրենց տեսած ու լսածի մասին:

Աշնան գիշերը վոսկե փարչա յեր հագնում: Լեռներում սառել եր տապի շունչը: Գիշերվա հովտ անցնում եր նրանց մարմինը: Յերկնակամարում սառած աստղերն արծաթյա աչքերը սկեռել ելին յերկրին: Ծանր մտքերը պաշարում ելին Հասոյին ու Բաղոյին: Նրանք յերկուսն ել լուռ ելին: Հասոն հանկարծ վերթուավ ու թափանարելով Բաղոյին, ինչպես քնած մարդու, ասաց:

—Գնանք տուն, նրանք ես ա ցրվել են, եղուց ել կդանք Ագեյի կուշան ու կմտածենք մեր անելիքը:

—Ճա, Հասկ, լավ ասիր, Ագեն լավ տղա յա, համա մա մենակ ա. արի մենք ել, վոնց վոր հայի գեղերում, միանանք նրան, մեր յաշեյկեն շինենք ու աշխատենք:

—Խելքդ գլխիդդ ա, —ասում ե Բաղոն, —յաշեյկումը մենակ կոմունիստներ են ըլում, մենք վինց կարանք: Բա դու չիմացմը, վոր բատրակների ժողովում Ոհաննեսն ասեց, թե յաշեյկեն են ա, յերբ վոր մարդիկ միանում են աշխատելու:

—Զե, եղ սխալ ա, —ասում ե Հասոն...

Շները, քեզից մնացած վոսկորի հոտն առնելով, մոտեցան ոջախին ու հանկարծ մթության մեջ հարձակվեցին Հասոյի ու Բաղոյի վրա:

Շները քշելով, նրանք քաշվեցին իրենց տները:

Ագեն չքնեց այդ գիշերի: Բեղերի, շեյխերի ու կուլակների խոսակցությունը ծանր մուրճով հարվածում եր նրա ուղեղը: Նա արխալուղի գրանից թու-

թուն հանեց, փաթաթեց ու լուցկին վառեց։ Այդ առոտ լույսի տակ քնած յերեխաներն ու կինը նրան գունատ թվացին։ Ահազին սկավառակի նման վառ դեղին փայլ ունեցող լուսինը նայում եր պատուհանից։ Ազեն մտածում եր առավոտյան վաղ գնալ ու ամեն բան պատմել միլիցիոներներին։ Իր մտքերի հետ ընկած՝ Աղեն չնկատեց լուսնի մայր մտնելը և ուշքի ցեղակալ այն ժամանակ, յեր հենց իր գլխավերելը բարձր ու աղեկառը բառաչեց միակ կովը, վոր արդեն դուրս եր գալիս նախրին խառնվելու։

Արեւ բարձր եր կանգնած, յեր գյուղը զարթնեց։ Յերեկվա քեֆից հետո բոլորը քնով եյին յեղել, մինչդեռ ահազին որվա անելիք ունեյին՝ ջոկերն ու որաբաշիները հրաման եյին տվել յելնել ձմռան քոչի։ Բոլոր կտուրներում իրար եյին անցել, շտապ քանդում եյին իրենց կոները (վրանները), հավաքում եյին կարպետ ու խալիչա, քանդում ու դարսում փայտե մասերը, չվանը, չիթն ու փարզաները, գույնդգույն գոհիները, վորով զարգարված են նրանց վրանները։

Հասոն ու Բաղոն չեյին շտապում—ասենք մի առանձին անելիք ել չունեյին։ Զմռան քոչին շտապում եյին շատ վոչխար ունեցողները...

Մյուս որը Բաղոն նստած եր իր շեմքին, յերբ նրա մոտով անցավ Ազեն։

—Բարի որ, Բաղոն, յերբ ես յեկել:

—Յերեկ եմ յեկել, —պատասխանում ե Բաղոն։

—Հօր, վհնց անցկացրիր ամառը դգումը, հո չե՞ս հիվանդացել:

—Հիվանդանալը չհիվանդացա, համա անտեր շուգը ձենձերս հանեց, —ասում ե Բաղոն։

—Մստոյին չես տեսել, յերբ ա գալու։

—Չեմ տեսել, համ ել վհնց եյինք տեսնելու, մենք հանգումն եյինք բանում, քաղաք չենք գնացել։

—Հօր, թաղա ի՞նչ խարար ունեք։

—Խարար շատ կա, լավ կլինի մի բոլորս հավաքինք ու մենք կպատմենք, թե վոնց են ենտեղ չքավորն ու բատրակ միասին աշխատում։

—Մստոն ամառը յայլաղն եր գնացել, —ասում ե Աղեն, —ժողով եր արել, ասել, սովորացրել, թե վոնց պետք ա կազմակերպել, համա, —ըեգերը մեջ ընկած, բանը խարար արին։

—Երեկվանը են ի՞նչ ժողով եր են տափումը, —հարցըց Բաղոն։

—Յես հենց ուզում եյի տեսնել Մստոյին ու ասել, վոր բեզերը, շեյխերն ու կուլակները, դաշնակշների ոգնությամբ, ուզում են նրան սադ ենեն ըստեղից, —ասում ե Աղեն, նայելով չորս կողմը։

—Վհնց թե սադ անեն։

—Հենց ընենց, ուզում են հավաքեն իրենց քարիլ¹⁾ ու գանգատ տան նրա վրա։ Բեզերից շատերն ել դաշնակների հետ միասին, առաջարկում են սպանել նրան, վոր պըճնեն նրա ձեռիցը, ասում եյին գանգատը չի ոգնի։

Բաղոն զարմանքով մոտեցավ Աղեյին։

—Բա ի՞նչ ասին մերոնք։

—Ո՞վ մերոնք, —հարցըց Աղեն։

¹⁾ Աղք ու ազգականներին։

— Տո դե չքավորները... նրանք բոլորն ել Մստոյի կուռն են պահում, նրանք լավ գիտեն, վոր Մստոյի գալով իրանք մի քիչ ազատ շունչ առան: Հրեն հա, հայի գեղերումը չքավորը բոլորովին ազատված ա հարկից, իսկ մեզ մոտ... Մեր չքավորը քոչհարկ ա տվել, գյուղատնտեսական հարկ ա տվել, դրա վրա յել ավել—բեգահարկ ա տվել: Ախր չորս տարի ա մեզ մոտ բաշխեվիկի իշխանություն ա, խորհրդային իշխանություն ա...»

— Ի՞նչ անենք, բաշխեկի իշխանությունը մեզ մոտ չի, ուրիշների մոտ ա,—ասում ե Աղեն: Են աստոծը, դուզ եմ ասում:

— Զահանգիր բեգն ել նդ իրա աշերաթն ա կառավարում, Ալիխան բեգը՝ իրանք: Նրանք մում կուռք կպահեն, իհարկե իրանց հարուստների, իսկ մեզնից ոխտը կաշի յեն քաշում: Այ թե ինչի յեմ ասում, վոր հա մեզ մոտ բաշխեկի իշխանություն չկա...

Առավոտվա ոդը բուրում եր չոր, աշնանային բուրմունքով, քամին սկսում եր շարժել կանաչ խոռար, վոր բուսել եր գյուղովը մեկ, ամառվա քոչի ժամանակ: Բացվող արևը մի պահ ծածկվեց գանգուր ամպի յետել, ապա առատորեն ճառագայթեց լեռնաւանջերին, գյուղի, — Աղեյի և Բաղոյի վրա:

Բաղոն հառաչեց ու քիչ հեռանալով՝ նստեց մէ քարի: Աղեն ել նստեց նրա կողքին:

— Դու գիտես, Աղե, վոր հայի գեղերումը, ուր վոր բանում եյինք ես ամառ, տերտերներին ու կուլակներին ձայնազուրկ են արել, նրանց իսկի ժողովի յել չեն կանչում:

Իգիրեցի Խաչատուր աղեն միտդ ա, նրան վոչինչ չտվին, կալվածքն ել խլեցին, իսկ մեր բեգերն ըստեղ հալա իշխում են մեզ վրա:

— Հայի գեղերում,—ասում ե Բաղոն,—համարյա ամեն որ գալիս եր բատրակների մեծը, հավաքում եր մեզ, ժողովք անում ու սովորացնում մեզ, թե վոնց պետք ա կովել հարուստների ու տերտերների դեմ...

— Բա մերժնք են,—ասում ե Աղեն,—յերբ վոր Մստոն պատմում, սովորեցնում ա նրանց, անիծածները գնում մեկ—մեկ խարար են անում բեգերին Մստոյի ասածները: Բա հիմա տես ա. բեգերին հարկ չենք տալ իշխանությունն ել մեզ ազատել ա՝ վոնց վոր չքավորի, հայ չքավորներին ել հո վաղուց ա խորհրդային իշխանությունն ազատել հարկից:

— Կարմա չտալ, Ուսուբ բեգը յա Ալիխան բեգը կղրկի իրա Շամոյե-Հասոյին ու կկողոպտի:

— Յես կարծում եմ վոր,—ասաց Բաղոն վեր կենալով, — վոնց ել վոր ըլի, պետք ա իմաց տալ Մստոյին, յա թե չե միլիցի նաշանիկին, թե չե կսպանեն տղին:

— Սպանելը չեն սպանիլ, համա... Ախր իրենք ել են վախըմ: Իսքն Ուսուբ բեգը ասալ՝ սպանել չի կարելի, մին ել տեսար եղ բանի համար մեզ ել գնդակահարեցին: Զե վոր Ուսուբ բեգը դաշնակների պարլամենտի անդամ ա ելել, որենքները իմանալիս կլինի: Դեռ ցարի վախտովն ել, ամիսը մեկ, նամեսնիկի կուշտն եր գնում ու վորպես Անդրկովկասի քրդերի ցեղապետ, ոռձիկ եր ստանում:

—Բա ի՞նչ վճռեցին երեկ գիշեր;—հարցնում ե Քաղոն:

—Նրանք խալսի դամարն եյին մտել, վոր գանգատ գրել տան:

—Մենք պետք ա չքավորական ժողով գումարենք ու բատրակներին ել կանչենք, վոնց վոր հայկական գեղերում եյին անում ու հասկացնենք նրանց, թե բեգերն ու զաշնակներն ինչ են ուզում բերել Մստոյի գլխին ու յես հավատացած եմ, վոր չքավորն ու բատրակը մեղ հետ կլինեն և վոչ թե բեգի ու կուլակի հետ:

—Պետք ա գումարել, —ասում ե Աղեն, ու նրանք բաժանվում են:

Գյուղացիք պատրաստ եյին քոչի: Զմռան իրերը հավաքել, բարձել եյին յեղների վրա, վորոնց քշել բերել եյին յերեխաները գլուղի բոլոր ծայրերից: Ժամը ութին ամեն բան պատրաստ եր, ու գույնզգույն քարվանի յերկար ու աղմկալի ժապավենը ծավալվեց կամաչած ճամբով:

Զահանգիր աղան՝ քրդերի ղեկավարն եր: Նա բընավ չեր զգում խորհրդային իշխանության գոյությունը, նա վարդում եր ցեղի հետ այնպես, ինչպես վարդել եր նրա պապն ու ապուպապը, նա զգում եր իրեն ինչպես դաշնակների որոք: Զահանգիր աղան իր ձիուն հեծած, կանգնել եր սարի վրա ու հրամանատարի պես անց եր կացնում իր մոտով քարվանը: Յերբ տեսավ ամեն ինչ կարգին ե, խթանեց իր մոխրագույն նժույգն ու յորդա քշած՝ անցավ դեպի քարվանի գլուխը:

Մի չորան մի մեծ վոչխար եր ուսովն առել, վորը ճանապարհին կոտրել եր յետեի մի վոտը: Խեղճը հոգնել եր, հալից ընկել, քրտնքի մեջ կորել: Նա հազիկ եր քայլում: Վոչխարը, վոր շարունակ առաջին վոտքերով թիրտում եր, մեկ ել զարկեց ու գետին ընկափ: Այդ նկատեց Զահանգիր աղան, քշեց դեպի չորանն ու ասպանդակների վրա կանգնելով՝ պլետի տակն առավ նրան...

—Տո իշի գլուխ, վաչխարն հւր ես գետնովը տալիս: Տո դու դրա մի վոտն ելա չարժես, —շարունակում եր նա հարվածելով, —տո շուն—շան վորդի, յես հիմի քեզ ցույց կտամ վոչխար վեր գցելը...

Բատրակը կծկվելով Զահանգիր աղալի ուժեղ հարվածներից, գոռում եր.

—Աղա ջան, քու զուխն եմ, քու նոքարն եմ, դերիրդան ելավ... ինքը դուրս պրծավ ձեռիցս, բեզպեկ եմ ախր... հրեն վրբտեղից ա հա, շալակած բերում եյի...

Այս խոսքերը Զահանգիր բեգին անթույլատրելի թվացին մի բատրակի բերնում, վորը խոսում եր իր ցեղապետի հետ, ավելի կատաղացրին նրան: Նա ձին քշեց բատրակի վրա, գետին գլորեց նրան ու շարունակեց մտրակել:

Խեղճ բատրակը տեսնելով, վոր փրկություն չկա, — վերկացավ. փախավ, պահվեց կանանց թիկունքում: Զահանգիր աղան հավատարիմ եր հինավուրց ալվանդներին ու սովորւթյուններին, նա չիետապնդեց նրան, վորովհետեւ քրդերի աղաթով յեթե մեկը պաշտպանվի կնոջ հետեւ՝ չեն խփի: Մեծ տուր ու դմիոցի, սպանության

ու կովի ժամանակ յեթե քուրդ կինը մեջ ընկնի ու պոկելով եր գլխակապը գետին նետի, ասելով՝ ել չանցնեք ես գիծը՝ ինքը Մահմեդն և արգելել, ել մի կըռակեք ու կոտորեք, — յերկու կողմն ել կհնաղանդվեն այդ բանին:

Բատրակի միակ պաշտպանությունը կանայք եին, և նա ընկավ նրանց կողմբ:

— Քու բախտն եր, վոր վախար եղ կողմը, թե չեցիս քեզ ցույց կտայի, թե վհանց ես իմ հորեղբոր վոչ խարը գետնովը տալի, տո խոզի բալա, տո եշի կաթերած, — շարունակում եր Զահանդիր բեգը իր հայշ հոյանքը:

Քոչվորը շարժվում եր խիստ կարգապահությամբ — առջեից յեղներ ու ձիեր հեծած գնում եյին հարուստների կանաչք: Բատրակների ու չքավորների ընտանիքներն ել՝ վոտքով, մեջքին կապած ծծկեր մանուկներին, վորն ել յերեխա չուներ, բարձած եր զանազան իրերով ու բերի տակ տնքալով, հազիվ եր քայլում: Սրանց լետեից գալիս եյին բարձած յեղները, յեղների յետեից ձիերն ու կովերը, ամենավերջը՝ այցն ու վոչխարը: Տղամարդիկ — կուլակները, շեխերը, փիբերն ու մոլլաները՝ ձիով շարժվում եյին քարվանի կողքերից, իրենց ընտանիքներին մոտիկ: Արևոտ շոգ որ եր: Զահանդիր բեգի կինը, տասներեք տարեկան Զաղենա խանումը քշում եր իր ձին թանգիին ամանեղենի, խաս ու աթլաս անկողնի, վոսկու և արծաթեղենի բերի կողքից: Քրաինքի մեջ կորած ու մանդիխի¹⁾ ճյուղքով նա ծուլորեն քշում եր

¹⁾ Բուրաք, կարմրատերե մի բայց եւ

Ճանձերն ու մոծակները, Նա հրամանատարի պես գուստում եր իր ջարիների¹⁾ վրա, հիշելով իր ամուսնու ազգականի վայր ընկած վոչխարի մասին:

— Ի՞նչու այդ սրիկային մի անգամից չսատկեցը րիր, գրանք բոլորն ել գայլ են գառել ու անտառի ճամբեն են պահում: Դրանց վոր պլիսի տակ չպահես, մեզ կլափեն:

Քարվանի ճամբան բռնել եր բազմազան ճայների մի գժժոց, բայց բոլորից ավելի լավում եր վոչխարների, գառների ու այծերի մայունը, տավարի բառաշն ու ճայնը, յերեխաների ու աղջիկների ճայները, վորոնք յերգում եյին իրենց քոչվորի յերգերը: Բոլորն ուրախ եյին, զվարթ:

Խեղճ, ծեծլած բատրակը գնում եր կուցած իւ վշտի ծանրությունից: Մարակի հարվածներն ավելի ու ավելի եյին կապտում ու նա հազիվ եր իրեն զբարում:

Այդ ծեծի տեսարանին վկա յեղավ Հասոն, վորը բատրակություն եր արել հայերի մոտ, յեղել եր Բատրակկոմի ժողովներին, գիտեր խորհրդային որենքները բատրակների մասին: Նա ջերմորեն բողոքում եր ու կոչ անում բատրակներին, չքավորներին ու միշտակներին վերջ գնել այդ կամայականությանը:

— Ջեղնից շատի կաշին ա պատել բեգի պլիսից, գուշք պիտի իմանաք, վոր հիմի ել եղ չկա: Հիմի նրանք պիտի վախեն մեզանից, իշխանությունը մերն ա, իսկ մենք հայվաններս անլեզու անասունի նման

¹⁾ Քուրք իշխանուների սպասունի:

ուտում ենք դրանց քոթակը, մեր վիզն առնում դը-
րանց հարկերը:

—Ո՞վ ա դրան ընտրել: Ի՞նչի մենք գյուղիսոր-
հուրդներ չունենք: Հերիք չի ինչքան մեր արյունը
խմեցին:

Այս խոսաբերին ձայնակցեցին բեռնավորված կա-
նայք: Սրանց հետ միասին հասոյի ձայնին միացան
տղամարդիկ, և բողոքի ու տրտունջի աղաղակը ծայր
տվեց այդ ծեծի առթիվ: Դժգոհների թիվը ավելանում
եր. սկսեցին հիշել, վոր ամառը քոչին նա յերկաթ-
յա շշերով ել եր ծեծել:

—Իսկ իմ գլխին ել երկու մահակ ա ջարդել, թե
ինչ ա իր դագի կշտի աղքրիցը ջուր իմ առել...

Ել հերիք ա, դրանց դատաստանը մենք կանենք:

Այս խմբին մոտեցավ կուլակ Մայե—Շամո—Ռո-
մին, սպառնալով, վոր բեզը կվերադառնա ու դրանց
բուրդը կգցի:

Ամբոխը շրջապատեց Մայե—Շամո—Ռոլուն: Մի
բարձրահասակ չորսան կանչեց. «Ճն, պոկի դրան ձիուց,
դրանք են մեր բանը խարար անողները», ու բռնելով
նրա գոտուց, գետնովը տվեց: Ամբոխը վոտնակոխ ա-
րեց:

Մայեի գոռոցին՝ վրա հասակ Զահանգիր բեզը՝
հրացանը ձեռին ու գոռաց.

—Ցրվեք, թե չե կրակում եմ:

Ամբոխը թողնելով ջարդված Մայեին, դես ու
դեն փախակ:

—Ո՞վ իր սկսողը,—գոռաց Զահանգիր բեզը —

առաջները կրծտացնելով ու հրացանը պատրաստ, դի-
մերով ամբոխին:

—Եղ մենք ենք արել — միաբերան պատասխա-
նեց ամբոխը: Մինչ այդ կանայք չեյին խառնվում
գործին, բայց յերբ տեսան Զահանգիր բեգին, բեռնե-
րի միջից գուրս քաշեցին վրանների ցցերը ու հար-
ձակվեցին Զահանգիր բեգի վրա: Ալմաստ անունով
մի հաղթանգամ կին, վոր բատրակությունից նոր եր
վերազարձել մալականների մոտից ու խորհրդամբին
իշխանության շնորհիվ հող ստացել, մի փայտ ձեռ-
քին՝ հարձակվեց Զահանգիր բեգի վրա ու հարվածեց
նրա ձիուն: Ջին ծառ յեղավ ու իրեն մի կողմ
շպրտեց: Տեսնելով Ալմաստի քաջությունը, մյուս կա-
նայք ու տղամարդիկ ել միացան նրան և հարձակ-
վեցին Զահանգիր բեգի վրա:

Տեսնելով այդ դրությունը, նա հազիվ ազատվում
է, մարակելով իր ձին հասնում ե Փիր—Աբասին,
վոր ցարիզմի ժամանակ յոթ տարի տանուտեր եր յե-
ղել: Փիր—Աբասն ուրիշ շեյխերի ու կուլակների հետ
գալիս ե համոզելու ամբոխին: Շեյխերը զուրանն
են մեջ բերում, ապացուցելու, վոր մեծավորի դեմ չե
կարելի գնակ, վոր այդ շատ մեղք ե:

Հասոն կանգնելով մի մեծ քարի վրա, սկսում է
ճառել:

—Ըսկերնե՛ր, —մենք եսոք ևեթ մարդ պիտի ու-
ղարկենք Յերևան, Մստոյի մոտ, թող գնա հայտնի
ուը հարկն ե, գան զինաթափ անեն բոլոր բեգերին ու
կուլակներին ու գլուղխորհուրդ կազմակերպենք, ու
վոչ թե բեգերի իշխանությունը... Դուք բոլորդ ել

լինում եք հայ ու թուրք գյուղերում, ամեն տեղ ել հիմի վոչ թե տանուտերներն են, այլ ընտրովի գեղախորհուրդ, իսկ մեզնում բեգերը դեռ խեղդում են մեզ:

Ապա նրա տեղը գրավում ե Ալմաստը:

—Մենք սրանց ել պիտի ուտեցնենք Զահանգիրի նման: Սրանք դրա պոչերն են, սրանք միշտ ել քոմակ են կանգնում բեգերին: Մեր սև որը դրանց ել ա ոգուտ:

Շատերը խոսեցին, պահանջեցին վոնդել Զահանգիր բեգին:

Մեկը, վոր նոր եր հասել քոչվորների քարվանին, հայտնեց թե Մստոն արդեւ գյուղումն է, նրա հետ ե շրջգործկոմի նախագահ Ղոնազյանը ու ելի մի քանի հոգի, նրանք ուղղում են գյուղինորհուրդ ընտրել, բայց վորովհետև ժողովուրդը ձմռան քոչի յե գնում, նրանք գնացին նստակյաց քրդերի մոտ: Մի շաբաթից հետո յել մեղ մոտ կգան: Ալիսան բեգին հանել են պաշտոնից, բայց շեյխերը, փիրերն ու ավագանիները դեմել են ժողովրդին, վոր նորից Ալիսանին պահանջեն, վոր յանի մենք դեռ գյուղինորհուրդ չենք ուղղում:

—Բա վերջն ինչ ա լինելու, —հարցրեց Աբասը,

—Ետ Մստոյի գործն ա, վոր դրան ուադ չանենք, մեր բանը փիս ա ըլելու:

Շեյխերն ու կուլակները Փիր-Աբասի գլխավորությամբ վերադառն քարվանի մոտ ու պատմում եյին գյուղից նոր լսած լուրերը:

Մյուսներն ուրախացել եյին իմացած նորություններից: Ագիդ բեգը նույնպես լսել եր գյուղի նորաւ-

թյունները, բայց լավ չեր հասկացել և նա ուզում եր իմանալ ամեն ինչ մանրամասնորեն, սակայն նրան չեր հաջողվում նորեկին տեսնել ու խոսել:

Բոլորը մոտենում եյին բողոքիլու լուսան, վոր նման եր շաքարի գլխի: Նրա գագաթը յերկինք եր սլանում, տարածելով իր անշարժ թևերը, վորոնք, թվում եր թե կպել եյին յերկնակամարի մուգ-կապույտին:

Այս լեռան առակ քոչվորը կանգ առավ գիշերելու: Արդեն վառվել ելին խարույկները, ու նրանց վրա դրված ղազանների մեջ ղառլրմա եր պատրաստվում:

Ծանր բեռից ազատված ձիերն ու յեղներն այդ տեղ իսկ արածում եյին: Կանայք շտապով քանդում եյին բոխչաները և քոշմեքը փոռում գետնին: Թեթև ընթրիքից ու աղբյուրի պաղ ջրից հետո նրանք մեկնըվեցին քնելու բաց յերկնքի տակ, վորպեսզի լուսինը յերևալուն պես շարունակեն իրենց ճամբան:

Այդպես գնում եյին նրանք յերկու որ: Յերրորդ որը կանգ առան մի քարանձավի մոտ: Այստեղ, մոտավորապես հինգ վերստ տարածությամբ, աղեղնաձև ձգվել եյին քոչվորները, վոր կարգի գցեն իրենց ձըմռան քոչի տեղը: Հենց հասել եր բեգի կոռի ժամանակը: Ագիդ բեգը պատվիրեց ծառաներին կանչել ժողովրդին իր տավարի ձմռան տեղերը հարթելու:

Նույն կարգադրությունն արեց և Զահանգիր բեգըն իր ցեղին: Զքալորն ու միջակը, վոր գեռ վոչինչ չելին կարողացել անել իրենց ու տավարի համար, թողնելով իրենց վողջ ընտանիքը՝ կանանց ու յերեխաներին բացոթյա, բահ ու քլունգով գնացին բեգի

կոռուն: Նըանք, վորոնք չեյին գնում կոռի, Հասոյի շուրջը հավաքված՝ թութում եյին քաշում ու մտածում իրենց անելիքների մասին: Ազիդ բեղը մտրակը ձեռին՝ անցավ Հասոյի մոտով և սպառնական նայեցնրա շուրջը բոլորված չքավորներին ու միջակներին: Նստածներից և վոչ մեկը չկատարեց աղաթի պահանջը՝ վոտքի յելնել բեգի առջև:

—Բան չկա, վե՛ր թափվեք ըստեղ,—ասաց Ազիդ բեղը, —ես ա յես ձեզ ենպես հնազանդեցնեմ, վոնց վոր ձեր հերերն ու պատերն են ելեւ: Դուք հենց գիտեք շատ ա քաշելու ձեր աղատությունը: Քիչ ա մնացել ես ա անգլիչանն ու գաշնակը ձեր կաշին մաշկելու յեն ու ձեր հետ նստած կոնցողին ել հետը:

Վոչվոք չպատասխանեց: Նա անցավ:

Այս տափը, ուր կանգ ե առնում քոչը, գարնանը բոլորովին ամայանում ե, տավարը սարն ե գնում, ու այդ տեղում շատ հյութալի խոտ ե ըսնում, ու դրա համար ե, վոր ամբողջ ձմեռը տավարն այստեղ ե արածում:

Գյուղից ստացած նորություններից հետո բոլոր կուլակները, շեյխերն ու ծերերը ժողովում եյին Ազիդ բեգի մոտ ու խորհրդակցում: Մի կոճյերիտական մոտեցավ կոռ անողներին՝ իր ծխախոտը կպցնելու:

—Արի բանիր, ի՞նչ ես թրե գալիս, հո մենակ մենք չենք բեգի նոքարները, —ասաց մի աշխատող ձերունի:

—Յես իմ թշնամու համար յերբեք չեմ բանի, —ասաց կոյժերիտականը:

—Ես մեզ ի՞նչ թշնամի, —տարակուսանքով հարցուեց առաջին խոսակիցը:

—Յես քեզ կասեմ, թե ի՞նչ թշնամի ա, ու զույել մեկելներին պատմի ու գլխի գցի, վոր կովեն մեր եղ թշնամիների գեմ: Յեթե միանանք, ձեռ — ձեռի տանք, մենք դրանց հախիցը կդանք, մեզ քոմակ են կոմունխատներն ու խորհրդային իշխանությունը: Դրանից հետո նոր մենք մեր գլխի տերը կլինենք ու ոչով մեր քեփին չի դիպչիր:

—Յես ելի գլխի չընկա, թե մեր թշնամին ով ահարցը ծերունին:

—Մեր թշնամիքը —մեր բեգերը, մեր աղալարները, մեր մոլլեքը, շեյխերն ու կուլակներն են: Հին աղաթով նրանք շարունակում են մեզ շահագործել ու բանեցնել: Հրեն ամպերը մոտ են, անձրեւ ա գալու, երեխանցը թրչելու ա, դեռ քու դագեն չքաշած, եկել ես բեգերինն ես սարքում: Եսպես ապրել ել չի լինի: Մեր աղաթը ասում ա, պետք ա հնազանդվել ամեն մի բեգի, աղայի, շեյխի ու հարուստ մարդու վոչ թե նրա խելքի ու բարության համար, այլ նրանց բեգության ու հարստության համար: Դրանից ա առաջանում անարդարությունն ու չքավորի ցավ ու դարդը: Մեկի կոնը տրաքում ա բարիքից — հարուստ ա, մեկելը մի սալամաթ շապիկ — փոխան չունի: Պետք ե փոխենք մեր աղաթները, չմենք շեյխերին, վոր միշտ քարոզում են, թե՝ «Հպատակվեք ձեր մեծ բեգերին», բեգերն ել թե՝ «Զհամարձակվեք շեյխերի որբության դեմ բան ասեք»: Դե բան եք ասել թե չե՛ բեգը ճիշտութիւնը պատի տակ ա քաշում: Ետենցով իրար պահում — պահ-

պահում են ու խալիս բանացնում իրանց համար՝ եղ բեգերի, շեյխերի ու մոլեքի հնարած որենքներն ու աղաթները պիտի փոխել ու ենպես որենք սահմանել, վոր մենք ել կարենանք ապրել ու պաշտպանվել բեգի ու կրոնավորի խեր ու շառից: Ի՞նչի մի հատ ել ա բեգ, շեյխ, յա մոլլա չկա, վոր աղքատը, — չունքի վոր նրանք ինձ ու քեզ բանացներով են ապրում: Շատ ժողովրդներ են մեզ պես սկսել իրանց կյանքը, տեղից տեղ քոչել, վոչխար ու տավարով ըուստ արել բայց նրանք վախտին են գլխի ընկեր, խելք արել նստակյաց կյանք են սկսել, հող վարել, հաց ցանել, քաղաքներ շինել: Իսկ մենք առաջվապես բեգերի խոսքով ենք ժամ գալիս ու բանում նըրանց համար: Եղ մեկ ա թե՛ մի հեր յերկու վորդի ունենա ու մեկը ծնվի որորոց մտնի, չորեքթաթ անի, հետո յել վոտ առնի, մեծանա, դառնա կարգին տղամարդ, իսկ են մեկելք հենց ընենց ել որորոցումը մնա: Ա՛յ, մենք մեկել վորդու նման ենք: Ինչ ծնվել ենք, ե, քանի հարյուր տարի ա, իսկի չի յել հաշվը վի, հեշ չենք մեծացել ու միշտ որորոցի մեջ ենք մնացել: Համա վախտն ա, — վոր մենք ել վոտ առնենք, մեծանանք ուրիշ ժողովրդների նման ու նրանց նման ապրենք: Մեր որենքով քուրդը կոնի մեջ պետք ա ապրի ու են կոնն ել պետք ա ըսենց խփի ու վոչ թե ուրիշ կերպ, թե չե՛ նրա սաղ գերդաստանը կկործանվի ոջախն ուրիշ տեսակ սարքելուց: Եղ բոլորը սուստ ա: Եղ ինչից ա, վոր իրանք բեգերն ու շեյխերն իրանց ուզածի պես են խփում իրանց կոները ու նրանց բան ելա չի պատահում իսկ մեզ համար:

Աեղք ա համարվում... Ասում են՝ ամեն ցեղ ջոկված պիտի ըմի, ու թե մեկը մեկելի խաթը/ն կապավ, աղցեղով ու տեղով պտի դուրս գան վրեժ լուծելու, արյուն պիտի թափեն ու եղպես անվերջ: Ախր եղ խըռովությունը, կոկմա ու արինահեղությունները, ձեռնտու յեն բեգերին ու աղալարներին, նրանք են եղ անհամությունների պատճառը: Ժողովուրդը թշնամություն և անում իրար, նրանք մեկ-մեկու կոտորում են, իսկ բեգերը փեշքյաշներ ա վոր ստանում են: Իսկ եղ սպանության պատճառը ելի Ագիդ բեգը չեր: Ողորմածիկ Դրբոն յարալու ելած, յերը դեռ շունչը վրեն եր, պատճում եր, վոր Ղազանցիք նրան սպանելու միտք չունեյին, Ագիդ բեգի արածն եր, վոր նրանք հարձակվեցին իրա վրա ու յարալու արին: Հիմի յել փեշքյաշներ ա, վոր ստանում ա բեգը յերկու կողմիցն ել, վոր արդար դուրս բերի, ու փեշքյաշը ստանում ա արդարիցն ել, մեղավորիցն ել: Ինչքան անբախտության պատճառ են դառնում դըրանք: Մեր որենքով, ամենածանր աշխատանք անողը կինն ա: Դրանից ա, վոր մեր կնանիքը շուտ են ծերանում ու մեռնում: Ա՛յ քու ախակերը պառավել ա մինչեւ հիմա չի պսակվել ինչ ա, թե չքավոր ա, զալիմի փող չունի, իսկ բեգերը: Հըեն Ագիդ բեգը յերեք կին ունի ու ել յեղ նորից փողի զոռով Նադոյի տասներկու տարեկան աղջկան ա առել: Զահանգիր բեգի հորեղբայր Ղամարլիկեցի Ալի—Բաբասիլ ողմն 56 տարեկան ա ու թահարի 14 տարեկան աղջկան առել իրան կնիկ՝ ղալիմ տալով, իսկ չքավորն եղ ագաթի պատճառով անպատակ ա մնում ու անպատակ

մեռնում։ Ո՞ւմ հսարածն ա եղ որենքը։ Ո՞վ առավ, վոր հարուստը մի քանի կին պիտի ունենա, իսկ մենք քյասիբներս՝ չե։ Եղ տեսակ որենք ու ադաթները բեգերն ու շեյխերն իրենց համար են հսարել, հսարել են վոր մեզ զրկեն։

—Մստոն հո ամեն ժողովին զալիմի դեմ ա խոսում,—ընդհատեց կոմյերիտին ծերունին, —ուզում ենք վոչչանա զալիմը, ժողովուրդն ազատվի եղ լիից։ Ամառը, Ալագյողի քրդերի համագումարին ել մենք մեր կանանցով ու յերեխեքով պահանջեցինք վերացնել զալիմը։

—Բա բեգերը ի՞նչ եյին ասում, —հարցրեց կոմյերիտը ծերունուն։

—Ի՞նչ եյին ասում։ Ասում եյին՝ չի կարելի, անհսարին ա, մեղք ա. ասում եյին, վոր Մստոն զավաճանում ա մեր հավատին ու կրոնին, ոսի կնիկ ա առել, բեղը վեր արել։ Ես քանի որն ել, —ավելացրեց ծերունին, —բեգերը հավաքվել եյին ու խոսում եյին, թե վոնց սպանեն Մստոյին, վոր նրանց հանել ա խորհրդային աշխատանքից ու դուրս ա հանում ժողովներից։

Յերկուսն ել լսեցին։ Կոմյերիտը մի քիչ մատածեց, հետո գրաւանից մի թուղթ հանելով կարդաց, վոր զալիմը որենքով վերացված ե և վոր հարսնացու առնողները տուգանվում են 500 ոռւբլու սահմանում։ Բացի դրանից, անչափահաս աղջիկներին ու տղաներին լրավունք չի տրվում ամուսնացնելու, մինչև աղջկա 16 տարեկան, իսկ տղայի՝ տասնութ տարեկան մինեւու Մեծերն ել, վոր ամուսնանում են, տարիքի մեջ

տասնից ավելի չպետք ե լինի տարբերությունը, լինի դա տղամարդ թե կինարմատ։ Նույնպես վերացվում ե բազմակնությունը։ Վոչ վոք իրավունք չունի մեկից ավելի կին ունենալու։

—Այ, թե հա...—ուրախ բացականչեց ծերունին ու իր թին ցած զցեց։ Նրանց մոտեցան մյուս կոռանող քրդերը։ Ծերունին խնդրեց կոմյերիտին նորից կարգալ դեկրետը։ Նա կարդաց ու մանրամասն բացացարեց։ Բոլորն ուրախ եյին և ուրախությունից ծիծաղում եյին։ Մեկը կանչեց. «Յաշամիշբէ¹⁾ Մստոն»։ Նրանց ծիծաղն ու աղմուկը հասավ Մեջիդ բեզի ականջը, նա յելավ ու մոտեցավ ամբոխին։ Կոմյերիտը շարունակում եր իր ընդհատված խոսակցությունը.

—Իսկ յերկրորդ մեր թշնամին, այ ես սարերն են, —ասաց՝ մատնանշելով Ալագյողը։ Հ'ը, հա, ի՞նչ ես եղակն մտիկ տալիս ինձ։ Ալագյողը մեր մերն ա, մեղ ապրուստ տվողն ա, դրա հետ միասին՝ նա մեր ամենամեծ թշնամին ա։ Անխելք մոր նման նա յերես ալտալիս իր երեխին, աշխատանքի չի սովորեցնում, հետո յել չարանում ա ու վետն առնում— ծեծում։ Ապդրողն ել եղակն յերես ա տվել քրդին, սովորեցրել ա նրան ծուլություն, ու քուրդն են ժամանակ ամտածում հողագործության մասին, յերբ վոր ձյուն ա գալիս ու վոչխարը կոտորվում ա։ Յեթե քրդերն ել հայերի պես հողագործ լինեյին, ուզելին—չուզեյին կաշխատեյին ու ավելի հանգիստ կապրեյին։ Տավարը կեր ուզեր խոտ կցանեյին։ Մի տեղ բինա յենք դնում, հետո թողնում, քոչում։ Զմռան առանց ջրի

— առնջվում ենք, Դուք ել, ձեր երեխեքն ել քոչվորության պատճառով անգրագետ եք մնում։ Վոր մի տեղ նատեք, ուսումնարան կունենանք ու դիր կտովորենք։

Ցերկու յերիտասարդ չորան՝ դպրոցի անունը լսելուն պես, ուրախացած իրար նայեցին։

— Հը՛, Զիմաթ, դրուստ չեմ ասում, վոր մեր աւաջին թշնամին բեգն, աղալարը, շեյխն ու մոլլան ա, յերկրորդը՝ մեր քոչվոր կյանքը։ Ախր, կարելի յա երբոլորի հախիցը գալ, յեթե վոր լավ մտածենք ու միասին գործի կպչենք։

— Դրուստ ա, դրուստ, — միաբերան ասացին չքափորները, նայելով կոմյերիտի նիհար դեմքին։

Մաջիդ բեգը տեսնելով կոմյերիտին, մոտեցավ նրան ու խիստ նայացքով լափելով նրան վոտից գրուխ, գոռաց։

— Դու ի՞նչ ես սրանց եսքան վախտ բանից զցում։ Ել քու վոտը չտեսնեմ մեր որայում, թե չե վիզդ կը հոլորեմ։

Կոմյերիտը չկորցնելով իրեն, պատասխանեց։

— Քու որեն վաղուց ա, վոր չկա, չըեն այ քու որեն, քեզ շուտով ընտեղ ենք քշելու, — ավելացրեց նա, մատնանշելով քարանձավը։

Մաջիդ բեգը ոձի պես ձգվեց ու առնելով մտրակը, հարձակվեց կոմյերիտի վրա։ Այս տեսնելով, աշխատող չքավշըները ձեն տվին։

— Եդ չանես, բեգ, թե վոր ջիվանին դիպել ես, մենք բոլորովս պաշտպանելու յենք դրան, վիս բան գուրս կգա։

Մաջիդ բեգը գյուղացիների այդ խոսքերից

կանգ առավ, սեղմեց խանչալի դաստակն ու չարությամբ նայելով աշխատողներին, մռմռաց։ « Համբերեք դեռ, վախտը կգա, յես ձեզ՝ շուն—շանվորդկերանց շանց կտամ»։

Կոմյերիտը հանգիստ տուն գնաց։ Որն իրիկնանում եր։ Արևի դեղին տապը փովել եր զոերի վրա։ Յերկնքում յերեւում եյին մի կետում սառած արծիվների ուրվագծեր, վորոնք հայացքները գետին մեխած, վորս եյին վորոննում։ Ղոերում ժամանակ առ ժամանակ լավում եր մի վայրենի, հյուծված, վշտոտ ու թախծոտ ճիչ՝ տնքում եր լեռնային արծիվը։

Կոմյերիտի հետ զրուցող ծերունին շարունակ մտազբաղ աշխատելով, քիչ եր մնում մխասեր իր վոտքը։ Բեգերի ու նրանց ազգականների վրանները շինված—պատրաստ եյին, պատրաստ եր նույնպես նրանց տավարի ձմռան կանգնելատեղին, բարձր ցանկապատաճ։ Մեկնեցին իրենց վրանները նաև կուլակներն ու շեյխերը։ Հորիզոնի վրա յերևաց մի սև ամպ, վորին քամին քշում եր քոչվորների վրա, ու արևը մթնելուց առաջ հորդեց ուժեղ անձրև։ Կոռ անող չքավորների յերեխաններն ու իրերը թրչվեցին մինչև տակը։ Անձրևի հետ փջեց նաև աշնանային սառը քամին։ Յերեխանները սառչում եյին ցրտից, դողում ու ատամ—ատամի տալիս։ Մութն ընկավ ու անձրևն ել դադարեց։ Կուլակների, բեգերի ու շեյխերի յերեխանները չոր ու ցամաք, դուրս յեկան իրենց վրաններից տկրակի շուրջը նստած՝ ձմռան քոն եյին յերգում, ուրախանում ու պարում։ Զքավորների թրջված յե-

քեխաները կարպեաներով փաթաթված պառկած, լսում
ելին ու յերանի տալիս նրանց...

Կոմիերիտին լսող չքավորները հիշեցին նրա լուս-
քերը և գեղոնությունը, անեծքն ու հայնոյանքը բե-
գերի հասցեյին լսվում եր մինչև լուս: Թրջված յե-
րեխաները ցրտից լալով ու դողալով լուսադեմին
միայն կարողացան աչք խփել բաց յերկնքի տակ:
Բնեցին և նրանց ծնողները: Բեգերը, շեյխերը, ա-
ղալարներն ու կուլակները վաղուց եյին քուն մտել
ու խոմքացնում տաք վերմակների տակ:

Բացվող արևը լուսավորեց արոտախոտերի կա-
նաչ թալիշը: Դեղնաչյա ու դեղնագանգուր զեղեցկու-
հին՝ զոերը մեկնվել եր ժակար զեմքին: Դոերը մոռյլ
ու դաժան են ձմռան գիշերվա: պես: Դոերը ուսումա-
դաշտի պես լիքն են մարդկանց ու կենդանիների
վոսկորներով: Այստեղ զոերում դաշնակների որոք
թագնվում եյին թուրքերն ու քրդերը, նրանց թվում
կային մեկուսի հեղափոխականներ, վոր չհնագանգվե-
լով դաշնակի մառուկերին, կապվել ելին մասսապին:

Զմռան քոչից վոչ հեռու Մրգատ «Կախ» լիճն եր:
Նա գոյացել եր անձրեներից և հոսում եր քարի նեղ
ձեղքերից ու բավարարում քոչվորի կարիքը:

Լույսը բացվեց, արևը բարձրացավ: Տավարն ու-
րախ բառաշել սկսեց, ձիերն ել՝ խրինջալ՝ յերկարա-
տեվ հանգիստ ու լիառատ կեր ունենալով: Կանայք
ուրախ—ուրախ զբաղված ելին իրենց սեփական գոր-
ծերով, վոր յերեկ կոռի պատճառով չեյին կարողացել
անել: Կուլակները հանգիստավոր զբոսնում եյին՝ դա-
դար տալով թամքերում թմրած անդամներին: Զքա-

վորները քարերը տեղահան անելով, տեղ եյին հար-
թում իրենց վրանների համար, իսկ յերեխաներն իրենց
մատղաշ գառներով ու շներով նոր արոտներն ելին
գնում:

Զահանգիր բեզը տեսնելով, վոր Ուսուբ բեզն
ել և յեկել ձմռան քոչի, իսկույն պատվիրեց ծառա-
ներին ձի թամքել: Նա ուղում եր վորքան կարելի
յե շուտ տեսնել Ուսուբ բեզին ու պատմել նրան այս
որերին իր զվարին յեկածը...

Ուսուբ բեզի ցեզն ավելի լավ տեղ եր զրավել,
քան Զահանգիր բեզինը: Փոքր ձորակում տեղավոր-
վել եր. «Կախ» լիճը, նրա աջ ափին փովել եյին
գույնզգույն յուրթերը: Բլրի գլխին սեին եր տալիս
միակ մեծ սե յուրթը, վորի կողքին ձգված եր Ու-
սուբ բեզի սպիտակ վրանը: Զախ թեկի լանջերում
արածում եր նրա վոչչարն ու տավարը:

Զահանգիր բեզն արագացրեց ձիու քալին ու ըս-
կուց իջնել նեղ, վոլորապտույտի զանդաղապատ¹⁾
արահետներով գեպի լիճը: Ու հանկարծ կանգ առավ:
Բոլորպին մոտ, քարերի հետեկից նրա ականջին հա-
սալ մի ծիծաղի հնչյուն: Քրդուհիներն եյին ծիծա-
ղում: Զահանգիր բեզն խկույն ցած թռավ ձիուց ու
վաղեց գեպի ձայնը:

Մի քանի պտույտից հետո նեղ արահետը վերջա-
ցավ, բերեց նրան լճի նեղ ծայրին, վորը մեջտեղից
բաժանված եր անձրեներից զոյացած բավականին
խոր առվով: Այս առուն միացնում եր լիճը բլրի տա-
կի ջրամբարի հետ: Քրդուհիները ջուրն այստեղից

1) Զանդաղ—զուերում բննող խոռ:

Եյին վերցնում, վորովհետեւ ջուրը մնալով ժայռի տաշին փոսի մեջ, ավելի սառն ու պարզ եր լինում, քան ափերին, ուր պղտորում եր ջրվող տավարը:

Զրամբարի մոտ, մեջքը գեպի ճամբան, կանգնած եր Մայանեն, կապույտ անթարի հագած: Կոր գըլշարկի՝ կոփի տակից, նրա վեր պարզած սիրոնիկ գլխից կապույտ անթարին եյին իջնում 14 բարակ ու յերկար սև հուսեր, վորոնք ցնցվում եյին, յերբ Մայանեն ծիծաղում ու չարաճճիորեն թափահարում եր գլուխը: Նրա դիմաց, ձեռները մեջքին կանթած, կանգնած եր մի յերիտասարդ քուրդ: Գեղեցիկ ժըպտալով բացել եր իր սպիտակ, խոշոր ատամները և ակնապիշ նայում եր Մայանեյին: Քուրդն աղքատ հագուստով եր, կարկատած արխալուդով, մաշված գլխի չալմայով ու բորիկ վոտին հագած տրեխներով: Նկատերվ Զահանգիր բեգին, նա ինչ վոր բան ասաց Մայանեյին ու կոանալով սկսեց ջուր լցնել կուժը: Մայանեն յետ նայեց ու հանդիպեց Զահանգիր բեգի հայացքին: Նա նախ կարմրեց, ապա գունատվեց ու ժպիտը կորավ նրա վարդագույն դեմքից:

Զահանգիր բեգին թվաց, թի նրա սիրտը ցնցվելով կանգ առավ: Նրա Մայանեն այս սրիկա քնձոտուհետ: Զարությունը սեղմում եր նրա կոկորդը: Ատամները կրծտեցնելով, նա մոտեցավ քրդին և խլելով նրա ձեռքի կուժը, կոտրեց այն նրա գլխին: Ապա բռնելով նրա ուսերից, շրջեց ու հրեց նրան այնպիսի թափով, վոր նա ընկավ յերեսի վրա:

—Զես ճանաչում տեղի, —գոռաց խղված ձայնով Զահանգիր բեգը: —Դե ունդ յեղիր, քանի չեմ սպանել:

Քուրդը վեր կացավ, սրբելով իր յերեսն ու դարձավ Զահանգիր բեգին.

—Շունը դու յես ու քու հերը, —գոռաց նա զայրացած և ապա մի պահ մտածելով, արագ վազեց, քարից քար թռչելով:

—Մայանեն, —կանչեց Զահանգիր բեգը, ու նրա ձայնը բեկվում ու ընդհատվում եր: —Մայանեն, —դու մոռացել ես, վոր դու իմ հարսնացուն ես: Դու ինչ պես ես կարողանում խօսք ու ծիծաղ անել եղ վողորմելի չոքանի հետ, քանի վոր մի յերկու շաբաթից հետո յես դաշիմ եմ զրկելու քու հորը:

—Ի՞նչպես կարող ես ուղարկել հիմի դաշմը վերացած ա, —զարմացած հարցրեց Մայանեն: Չե վոր խորհրդային որենքը քեզ կձերբակալի:

Բան չկա, չեն ձերբակալի, դաշմը ենպես թաքուն կտամ, վոր ոչով չի իմանալ:

—Զահանգիր բեգ, —ասաց Մայանեն, —եղ տղան մեր շվանն¹⁾ ա, նա ջուր եր վերցնում եստեղից:

—Բա վոր մերոնցից մեկն ու մեկը տեսել եր:

Բամբասանքը կընկներ բոլորի բերանը, յես ըստիպված կինեյի մեր հարսնակքը խափանել, ու մեր ցեղերը պետք ե թշնամանային իրար հետ:

—Մեզա քեզ, խուսագե, նա հո հասարակ շվան չի վոր: Նա յել լավ ոջախից ա, նրա հերն ել մեր չասանի սաղ ցեղի Մերլասան ա յեղել: Փոքրուց մենք միասին ենք մեծացել: Իմ հերը վերցրեց նրան իրակիթության համար: Ղաշաղները վոր վրա տվին մեր ապրանքին, նա ինքը մենակ յետ քշեց բոլորին:

1) Հոտաղ.

Բայց վոր ուզում ես, լեռդվում եմ Փիր—Աքբասի ու ջաղով, վոր ել նրա յերեսին մտիկ չեմ տալ:

Մայանեցի խոսքերը մեղմացրին Զահանգիր բեգի շարությունը, ու նա մեղմությամբ ասաց:

—Դե լավ, Մայանե, ես անդամ բախշում եմ քեզ։ Յես հավատում եմ, վոր ես առաջին անգամն եր ու վերջինը կլինի, իսկ եղ սրիկային իմ ծառաները ուաղ կանեն այստեղից։ Եղ աղքատ չփլաղը կըակի հետ ա խաղ անում։ Դե, սրբիր աչքերդ, մի լար, յես ուզում եմ, վոր յերեսդ փայլի արեգակի պես։

Ու նրանք հաշտվեցին։ Մի կես ժամից հետո Մայանեն կուժն ուսին բարձրանում եր սարն ի վեր, իսկ Զահանգիր բեզը վերադարձավ այն տեղը, ուր նա թողել եր ձին։ Բայց ձին վոչ մի տեղ չկար։ Զահանգիր բեզը վկիր ընկավ, վոր իր կողմից վիրավոր ված քուրդը փախցրել եր իր սիրած ձին, բայց ինքն ված քուրդը փախցրել եր իր սիրած ձին, բայց ինքն ստիպված եր լսել ու մարդ չուզարկել փախստականի յետեցից։ Նա ստիպված վոտքով յիկավ Ուսուբնի յետեցից։ Նա ստիպված վոտքով յիկավ Ուսուբնի վրանը։ Քրդերն իսկույն իմացան յեղելությունը, չքավորներն ուրախացած ելին ու դովում ելին նը, չքավորներն ուրախացած ելին ու դովում ելին նը կիթի արարքը։

Ալագյոզի ստորին լանջերին, Ղըզլ—Սոր կարմիր բլուրներով շրջապատված՝ կուչ և լեկել Սելթանի Ղըլաղ գյուղը։ Փոփոխական քամին փշում եր մերթ Մարդարաբաղի դաշտից, մերթ լեռներից։ Այստեղ ալնպես չեր նեղում շոգը, ինչպես դաշտում։ Ամբողջ գյուղը դուրս եր գալիս վրաններից և քարերին նըս-

տոտած՝ զրուց եյին անում վոչխար ու տավարի մասին։

Բրոն վորբացավ։ Հայրը թողել եր նրան 20 վոչխարից, մի լեզից ու ձիուց բաղկացած մի փոքր տնտեսություն։ Նրա մայրը՝ Բասեն հաճախ ասում եր. «Բրոյի հերը մեռնելիս կտակ արավ, վոր իրաքրտինքով շահած վաշխարը դալիմ տամ ու վորդուս պասկեմ»։ Յեկ նա մեծ հոգատարությամբ խնամում եր մալերը, և նրանք դեռ գյուղ—չհասած, պառավ Բասեն վազում եր նրանց ստուգելու։

Բասեն վազուց հարսնացու յեր փնտրում իր վորդու համար, բայց չեր կարողանում գտնել շատ զավմ եյին պահանջում, իսկ նա հնարավորություն չուներ վճարելու։ Բրոն մանկուց Մայանեցի հետ եր մեծացել ու նրանք սիրում եյին միմյանց։ Բայց նա սիրու չեր անում հայտնելու մորն իր ցանկությունը։

Մի որ մթնով, աշխատանքից տուն վերադառնալիս, Բրոն հանդիպեց Մայանեին, վոր տխուր ու մտահոգ՝ նույնպես տուն եր գնում։ Բրոն նրան տեսնելուն պես ժպտաց, վողջունեց, ու սեղմելով իր կրծքին՝ համբուրեց նրա թուշը, հարցնելով, թե ինչ չո՞ւ լե թախծոս նրա դեմքը, իսկ աչքերը՝ լաց ու վշտով նացում աշխարհին։

Մայանեն պատմեց, թե ինչպես Զահանգիր բեգն ուղում ե իրեն կին առնի։

—Յես ազնիվ քոչվորի փորդի յեմ, —ասաց Բրոն, —ու յես չեմ փոխի իմ վորոշումը—դու իմն ես։ Մենք միասին ենք մեծացել, մեր մանկությունն անց ենք կացրել Ալագյոզի քոչերում։ Լեռ—ժայռերի անուշա-

հոտ շվաքում դու խոսք ես տվել ինձ, ու հիմի վոնց վոր տեսնում եմ, հորս մեռնելուց ու մեր աղքատանալուց հետո խոսքը չեմ պահում...

— ԶԵ, ՀԵ, ԲՐՈ, յես քեզ եմ սիրում ու քոնն եմ: — Մայանեն հեկեկաց ու ընկավ ԲՐՈՅԻ գիրկը, — Համացամբ են ա, վոր եդ ուրուր Զահանգիր բեգն աչք ադրել վրես, հերս ել չե չի ասում, ինչ ա՝ հարուստ մարդ ա ու շատ դալիմ ա տալիս:

ԲՐՈՆ մտածմունքի մեջ ընկավ: Նա լավ գիտեր, թե ինչքան դժվար ե ցեղապետի հետ բռնվելը, բայց ինդրեց մորը դալիմը վճարել:

Բասեն, ինչպես պահանջում եր որենքը, կանչեց Մայանեյի հորեղբորն ու ծածուկ վճարեց նրան դամբը: Այդ այնքան ել հեշտ չեր անել, քանի վոր որենքով դալիմն արգելված եր արդեն:

Հարսնախոսից ու դալիմը վճարելուց հետո փեսացուն պետք ե նվերներ բաժանի հարսնացուի կարևոր ազգականներին ու հաղթի նրանց նույնպես և սրախոսությամբ: Բասեն՝ նրա մայրը՝ ծալապատիկ նստած տեղից դիմեց յուր վորդուն ոչ ասաց.

— ԴԵ բալս ջան, եգուց դու կնիկ ես առնելու: Յես ինչքան կարացի, արեցի ու կատարեցի հորդ կըսակը: Հմի քու գլխի տերը դու յես, պետք ա լավ հասկանաս քու տնտեսությունը, ու վոր գլխավորն ա, վոչսարը կարենաս լավ պահել, չունքի նրանով են ապրել ու հիմի յել ապրում են մերոնք: Մոռացկոտ ու թեթևսովիկ չլինես, հպարտ չլինես: Թե գնացիր մի տեղ ու միաչքանի տեսար, դու լել միաչքանի դարձիր, վոր հարմարվես են ցեղի խալիսին:

— Լավ, այ մեր, — պատասխանեց ԲՐՈՆ:

— Իսկ հիմի ղոնաղների դարդը քաշենք: Բոլորին պրկեցինք թոփային¹⁾ (քրդական որենք ե, վոր ամեն մի հարսանիք հրավիրվածին նվեր են ուղարկում «թոփային»՝ մի աղլուխ, մի կտոր սապոն և ալյն: Մասնակցել ուղողն ընդունում ե, չուզողը՝ վոչ:

— Հա, նանի, դրկել եմ:

— Բա թոփային հերիք արանվ:

Հա, նանի, ախր հորեղբայրդ ինձ ոխտը գառքախցց: Նա գիտեր, վոր մեր մեջքը զոռիլ չի:

Հետևյալ որը ԲՐՈյենց դշլաղը դժվար եր ճանաչել, շատ մարդ եր ավելացել ու անվերջ զլում եր զուռնա—դհոլը: Շատ զոնաղներ եյին յեկել, Հասոն ու Աղեն ել եյին հրավիրված հարսանիքի: Քրդերը, տոնական գույնզգույն արխալուներով ու ոյմաներով, զարդարված չալմաներով, վրանից—վրան եյին անցնում, զրուցելով տոնական զվարճալիքների, իշքենց զործերի ու զանազան նորությունների մասին: Յերեսում ելին նաև թուխ, լուռ ժամացող կաննայք՝ պրճնված տոնական ծանր զգեստներով: Լեռնային գեղեցկուհիների գլուխները զարդարված եյին բարձր կոփիհներով²⁾: նախշած գույնզգույն ուլունքներով: Լրանների մոտ, ուրախ ճիչ ու աղաղակով խաղում ու զվարճանում եյին բորիկ յերեխաները:

Մեծ պատրաստությունները գյուղի մյուս կողմն ելին, ուր իրենց ձիերով հավաքվել եյին ջիրիթ ա-

1) Նվերներ:

2) Գլխի ժաժկոց:

նողները, ամեն մեկն իր ձիու առավելություններով
եր պարծենում ու հավատացնում, վոր ինքը առաջիւ-
նը կլինի: Շատերն ել իրենց ձիերի վկայականներն
եին ցույց տալիս,՝ վավերացված մի շաբք անձանց
կողմից, ապացուցելով, վոր ձին զտարյուն կղան-
ե¹⁾: Անհամբեր կենդանիները սանձված կանգնել ե-
լին՝ գեղեցիկ աղեղելով իրենց վզերը և արշավին ըս-
պասելով, սմբակներով հողը փորելով:

Վերջապես արշավը հայտարարեցին: Տարածու-
թյունը տասը վերստ եր վորոշված և, մինչդեռ ձիա-
վորները ջիրիթ անելով մոտենում ելին տեղին, զուռ-
նան սկսեց «Քերդե—Սուրյան»:

Այսպես զվարճանում եր ժողովուրդը: Բրոյին
նստեցրել ելին, ինչպես քուրդերն են ասում, թախ-
ափ (գահի) վրա, ջահելները շրջապատել ելին նրան,
յերգում ու ուրախանում ելին, գլուխն ածիլում: Քըր-
դական սովորությամբ, նրա գլուխը բաժանել ելին
մի քանի մասի, ու ամեն ընկեր մոտենում եր գալ-
լաքին, վոր շուտ սափրի իր գնած մասը: Գլուխն սափ-
րելուց հավաքված փողը ժողովվում եր մի տեղ, վոր
իրանց մեջ բաժանվի հարսանիքից հետո:

Մայանեն նստած եր կոնում՝ իր ընկերուհիների
շրջանում: Նրանք զարդարում ելին հարսնացուին
ու լաց լինում: այսպես եր պահանջում սովորու-
թյունը:

Աման, յես յադ եմ, աման, անբախտ եմ,
նստած ես բլրին՝ արցունք եմ թափում,

1) Արաբական տեսակն ե, վոր չատ գիւմացկուն ու արագավագ եւ

Ոչով չգիտե, թե ումոնցից եմ,
Անբախտ ու ոտար, արցունք եմ թափում:

Են ով ա ոտար: Հերանցդ տունը
Հրեն կաթում ա անձրևաջրից,
Հարսնացն, մի լար, փեսացուդ ունի
Զահել որ ու կյանք, յես՝ կարոտ յարից:
Գնամ ջուրն ընկնեմ, ել տուն չգամ յես,
Բունս կորցնելու կարոտն եմ լացում.
Ոտարը յես եմ, կարմիր ծաղկի պես
Ուրիշի սրտի ուղածը դառնում:

Չոռ ու ցավ դառնար են կտոր հացը,
Վոր ինձ ուտեցրեց իմ սիրած նանին,
Ու հիմի ես մեծ զալիմի համար
Ինձ ջահել ծախում, քաֆթառին տալիս:

Մեկը յերգում եր ու իւրք վերջացնում եր մի
առուն, մցուսները լալիս ելին: Նրանք վշտացած ելին
ձևանում, մինչդեռ յուրաքանչյուրը մտածում եր.

—Ի՞նչ բախտավորն ես: Մարդդ ջահել ա ու սի-
րուն, իսկ մենք չենք իմանում՝ ով ա լինելու մերը:
Կարող ա մենք վրա յերկու կամ յերեք կնիկը դառ-
նանք մի փիս ու չար պառավի: Են վախտը, վոր
դրուստ լաց լլենք, ու վոչ թե տղաթի համար...

Կեսորին Մայանելին ձի նստացըին ու ձիավոր-
ներով շրջապատված՝ տարան Բրոյի տունը: Տանը մո-
տենալիս հրացանաձգությունն սկսեց, իսկ Բրոյի
մայրը առաջ գալով, քոչարի յեր պարում ձեռին յեր-
կու աման բռնած: Եեր Մայանեն մտնում եր վրա-

նը, շեմքին նրա վոտի տակ կավե աման դրին, վորը նա կոտրեց ու այնպէս ներս մտալ տուն։ Սրանով վերջացավ հարսանիքի հանդեսը։

Հանդարտեց մարդկային աղմուկի ծովը, բոլորը ցըվեցին իրենց տները, և ամեն ինչ լոեց։

Ահա մի տարի յե, ինչ Մայանեն ամուսնացած եւ Մայանելի հաշվով տասներեք լուսին ե փոխվել այնորից, ինչ նա վոտ ե դրել Բրոյի տունը։ Յեւ որենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո յեր միացն, վոր Մայանեն բացեց իր դեմքը ծածկող խելին ու խոսեց իր կեսորոջ—Բասեյի հետ։

Բայց Զահանգիր բեզը չմոռացավ գեղեցկունի Մայանելին։ Նա ծառաներ ուղարկեց նրա հոր մոտու յերբ իմացավ, վոր աղջիկն ամուսնացել ե, վորոշեց մի հարմար տեղ սպանել Բրոյին։

Ժամը ժամին, որը որին, ամեն ամիս—թուչում եր ժամանակը։ Բրոն ապրում եր ուրախ ու յերջանիկ իր Մայանելի հետ։ Մալրն ել ուրախ եր, կատարել եր հանգուցյալ ամուսնու կտակը՝ պսակել վորդուն։

Գարնանանում եր։ Արեն ասես թե վճռել եր կիցել վողջ աշխարհը ու հազարավոր բոցեղեն վոսկի ճառագայթներ եր ուղարկում յերկրին։ Զմեռնաքոչք բոլոր քարերն ու գեղին թումբերը շիկանում, հալ ելին ընկնում։ Ղանդազն անհուն հրճվանքով ու հեղությամբ բեղմնավորման կարոտով խաս—մոխագույն ծաղիկ ե հագնում ու իր ծաղիկների միլիոնավոր թերթիկները սփռում գետնովը մեկ։

Բրոյի տնտեսությունը հարսանքից ու դաշտմ վը-ճարելուց հետո սկսում եր նվազել Բայց Բրոն ալդ

ոլակասությունները չի նկատում։ Ցերեկը նա դեռ եւ լի մի գործ անում ե։

Կարմրավուն ալիքավոր զոերը ննջում են վառ արեկի տակ։ Տեղոտտ ջերմի մեջ տատանվում ու ցընցըվում ե հորիզոնը։ Լիի ավազոտ գեղին ափին պարզ յերեսում են Ուսուր բեզի սկ կոները, իսկ նրա շուրջը՝ ջը՝ խոտի խրձերի նման թափված են մյուս կոները։

Նախիրն արածում ե քոչի մյուս կողմը։ Զըին ավելի մոտ ձիերն են իրենց պինդ ու սպիտակ ատամներով պոկոտում հյութալի խոտը։

Ուսուր բեզի գլխավոր կոնից մի քսան քայլ հեռու մի նոր վրան են ձգում հյուրերի համար։ Նա լուր ե ստացել, վոր նրա մոտ են գալու դաշնակները, նախկին իմբապետները։ Յերկու խարուցկ ե ծխում։ Մեկը լավաշի համար, իսկ մյուսի վրա Ուսուր բեզի ծառան չըբան—դառւրմա յե անում, խալի պատրաստում։ Տնեցիք ել են իրար անցել։ Սեյրան խանումը՝ Ուսուր բեզի կինը հետեւում ե ծառաներին, վոր ամեն ինչ կարգին լինի։

Ուսուր բեզը հպարտորեն նստած ե փուած քոշմեյի վրա ու նայում ե դեպի դաշտը, վորտեղից պիետի յերեան հյուրերը։ Կողքին նստած ե Զահանգիր բեզը, պատմում ե ճամբին պատահածը՝ քոչվորների խորհուրդը ընտրելու մասին։

Դու զիտեմ, Զահանգիր բեզ, իմ վորդուն պաշտոնից հանել են ու գնացել նստակյաց քրդերի մոտ, շուտով մեզ մոտ ել կգան։ Դու պետք ե ենպես պատրաստես քու ցեղը, վոր բացի քեզանից ուրիշին ընտրեն քոչվորական խորհրդի նախագահ։ Աշխատիր, վոր

Քռ չքավորները շեյխերի ու փիրերի միջոցով նախապատրաստված լինեն:

— ԶԵ, Ուսուբ բեգ, մեր չքավորներն ես անիծած Մստոլից հետո ենակես քաղաքականապես պատրաստվել են, վոր բոլորն ել մեր գեմ են: Դու իսկի դիտեմ, բանից յերկում ա՝ ես ձմեռները Մստոն գալիս ա ելել ժողովներ ա արել ամեն բան նախապատրաստել ու մենք բանից բեխաբար ենք:

— Հա, դրուստ ես ասում, Զահանգիր բեգ: Նա վոր մեր գեղն եկավ, ժողով արեց, մեղ չթողին, ձաւնապուրի հայտարարեցին ու առանց մեղ զյուղիսորհուրդ ընտրեցին: Դրուստ ել ասում ես, վոր բոլորն ել պատրաստված եյին ու դիտեյին, թե ում ընտրեն:

Իրենց մաքերով տարված՝ յերկուսն ել լուցին: Ուսուբ բեգը գոհ եր, վոր այսոր գալու յեն խմբապետները, վորոնց հետ նա տիրել ե Հայաստանին, կպատճեն անցած որերից, կհիշեն իր «հերոսությունները», իսկ վոր ամենակարեռն ե, նորություններ կհաղորդեն այն մասին, թե յերբ են վոչնչացնելու այս անիջյալ բալշեիկներին:

Դոշ զյուղից յեկած բարպակը, վոր հետը յերեք տիկ գինի յեր բերել ասաց, վոր Սարգարաբագի դաշտում ձիալորներ են յերեռմ, վոր ուղիղ դեպի քոչն են գալի...

Սարգարաբագի դաշտը խնամքով պահում ե իր ծով հարստությունները և իր գաղտնիքները:

Ահեղ զորքեր են անցել իր ժամանակին: Նրա լայնքն ու յերկայնքը չափել ե դաշնակն ու թուրքը, ժողովուրդներ են գաղթել նրա վրայով, և բոլորին

նա ընդունել ե անաշառ ու անկիրք, սառնասիրտ ու հանգիստ, և նրանք մեկը մյուսի հետեւ անհետացել են դաշտավայրի անծալրածիր ծոցում: Ի՞նչ ե յեղել այդ մարդկանց վերջը՝ լոկ ինքը դիտի...

Դեղին, ցանցառ բուսականություն ունեցող դաշտը համբ լուսություն ե պահպանում...

Թվում ե, վոր այս դաշտավայրում, ուր դաշտերն են փորել իրենց գերեզմանը, այժմ Սարգարաբագի մեծ ջրանցքն անցկացնելուց ու լիովին վոռովելուց հետո, շատ քրդական ցեղեր կդանեն իրենց ավրուստի վայրը ու հետզհետեւ վերջ կտան քոչվորությանը այն քրդերը, վորոնց հայրերն ու պապերը հարյուրավոր տարիներ քոչել են այս դաշտով: Իսկ այժմ դաշտում թափառող ժողովրդի միակ որորանն ե, քանի նրանք անջատ ու անկազմակերպ են ու քոչող վոչնարի հոտի նման չափչփում են լեռնային, անմարդաբնակ բացանաերը:

... Քրդերի պարծանք արարական կղմանները առաջ են սլանում ու նրանց հետ միասին քամու արագությամբ մեր անապատին ու լեռանը դիմչերով, դաշտ ե հասնում նոր լուրը այն մասին, վոր շրջործեկոմի նախագահ Ղոնազչանն ու Մստոն յեկել են քոչատեղերը ցեղապետներին իրենց պաշտոններից հանելու, վոնդերը բեգերին, վորոնք դեռ ցարիքմից ու գաշնակների ժամանակից շահագործում են քուրդ աշխատավորությունը: Այսպիսով, բեգերի ավտոնոմ իշխանության անկումն սկսվում է միայն 1924 թվից, ու անցյալի վիատակների վրա, հին, ցեղալին կաղմակերպության փոխարեն կազմակերպվում են քոչ-

վորական խորհուրդները, ուր մտան չքավորները, բատրակներն ու միջակները՝ թեգերը, վոր չհաշված կովերը, յեղները, ձիերն ու եղերը, յերկու հազարի չափ վոչխար ունելին, մինչև 1924-25 թ. թ. վոչ մի կոպեկ հարկ չելին տալիս խորհրդային իշխանության Նրանց ապրանքը հաշվի առնվեց, ու սկսեցին նրանք ել հարկ վճարել:

Եեռնային զոերը ծածկել են դաշտի զավակները: Վոչվոք ապահովված չի զոերի չար քմահաճույքից, վոչվոք ոգնություն չի հասցնի անհատ չքավոր քոչվոր քրդին, յեթե նա մեռնելիս լինի խուլ ու անծարածիր դաշտավայրում... Միայն խորհրդային իշխանությունը կոդնի, նա, վոր ջախջախեց բեգերի ու շեյխերի ճնշման շղթաները...

* *

Հանդարտ վառվում ե կոնի մոտի կրակը: Կրակի շուրջը մի քանի քուրդ են հավաքվել: Նրանց յերկար բեղերը ստվեր են գցում նրանց սեմքերի վրա և աչքերում փայլում ե կրակի լուսը: Մեզմ աղբյուրից կարկաչող ջրի նման հոսում ե խարույկի կողքը նըստածների խոսակցությունը: Յեզ հանկարծ բոլոր լոսում են...

Աղեն սկսում ե խոսել արոտատեղերի ու հարկերի մասին:

— Զափ փակե (շատ լավ), — բացականչում ե Աղեն, — դե մի միտք արեք, թե ես քանի տարի ա մենք տանջում ենք ես գաղաններից: ամենալավ արոտները նրանց ձեռին եր ու վոչ մի հարկ չելին տալիս,

այլ մեզանից եյին առնում: Մենք հմի ենպես կանաք, ինչպես Մստոն եր ասում: — բոլոր արոտները կհանձնենք քոչվորական խորհրդին...

Աղեն դեռ ելի շատ—շատ խոսեց: Ապա նա վերցրեց սրինգը, մոտեցրեց շրթունքներին, ու լսվեց հարազատ յերգերի ձայնը: Ինչպես ձյունը ջերմ արեկից, հալում եյին հնչյունները դաշտի պարզկա ողում, թռչում կոները ու լցնում կանանց սրտերն ուրախությամբ, իսկ հարսնացուներին՝ անհուն կարուսով դեպի իրենց յարը:

Սրինգը յերգում եր ավելի զիւ ու հնչեղ: Հովվական յեղանակն ուրախացնում եր չքավորների սիրտը, վոր նրանք ազատված են բեգերից: Հավաքված չքավորները, բատրակներն ու միջակները տոնում եյին իրենց յերջանկությունը, յերկար յերգում ու պարում եյին: Միայն առավոտյան լսեց սրինգն ու ժողովուրդը ցրվեց...

Քնաթաթախ քոչվորները զարթնեցին ինչ վորազմուկ—աղաղակից: Տղամարդիկ շապկանց գուրս եյին վաղում: Արդեն շատ մարդ եր հավաքեր: Բոլորը հուզված ու գրգռված, տաք—տաք վիճում եյին, բայց վոչվոք չգիտեր իրենց քնահարամ անելու պատճառը:

Տեղ համելով՝ մեկը մյուսին հարցնում եր հուզված:

— Ի՞նչ ա պատահել, ի՞նչ:

Վոչվոք վոչինչ չգիտեր: Ահա յերևացին բեգերի ազգականների ահեղ կերպարանքները, նրանց հետ և յերկարամորուս մոլլաները, փիրերը և շելխերը:

—Ո հավատացյալներ, —սկսեցին նրանք, —մեծ խուաղեն մեզ փորձություն ե ուղարկում: Հերիք չեր, վոր մեր իշխանությունն անցավ անաստվածների ձեռքը, հիմա ել մեր բեգերին են ձերբակալել, ձերբակալված են նույնպես և կավալիները՝ մեր սրբազն Մելոք-Թառվի հետ միասին: Ես ամենը նրա արածն ա: Ո՞ հավատացյալներ, դանք նրա պատիժը:
Դուք կամ պիտի կոտորվեք կամ պիտի վերացնեք եղ Մստոյին...

Զքավորները, բատրակներն ու միջակներն ուրախացան այդ ձերբակալությունից, ցրվեցին իրենց տները:

Հրապարակում մնացին բեգերի ազգականները, հոգեորականներն ու յերեք հոգի կուլակների հավատարիմներից:

Աստղազարդ գիշերը պինդ հպել եր յերկրին, ու ամեն ինչ քարացել եր նրանց համբուլըրի մեջ: Վոչ մի շարժում: Յերբեմն քամին եր թեթև սուլում, և նորից տիրում եր լուսություն ու անդորր, վոր յերբեմնակի ընդհատվում եր շվերի մելամազձոտ յերգով:

Մեզմ ու հանդարս գիշերը հանգիստ եր տալիս բեգերի ու շեյխերի ծանր լծի տակ տանջվածներին:

Բատրակները գրվում ելին հողանտառ միության անդամ, իսկ յերիտասարդները, վորոնք բեգերի ահից ծածուկ ու վախով ելին մանում կոմսոմոլի շարքերը, հիմա ազատ ու բացահայտ կերպով դիմում ելին տաշլիս Լենինցան կոմիտեամիության շարքերն անցնելու:

Քուրդ քոչվորների մեջ յեռաց նոր կլանքի, սուցիալիզմի կառուցման ու նոր կենցաղի կազմակերպման մի շրջան:

○



ՀԱ.ԶԻ.ՑԵ ԶՆԴԻ 1908-1930

ԱԲՈ ՅԵՎ ԼԱՅԼԵ

—Եհ, լե, աղջիկ սրտակոտրուկ,
Սև աչքերով, սոսի ծառ,
Յեկ կոլսողի կալը կալսենք,
Յեկ միասին գնանք կալ:

—Լո, լո, սիրով զարկած ջիվան,
Քեզ եմ տեսնում գիշերում.
Քեզ, իմ սիրած ջահել—ջիվան,
Ծնողները չեն սիրում...

—Լե, լե, աղջիկ սրտակոտրուկ,
Արի գնանք դու ինձ հետ,
Դու ջահել ես, հարվածային,
Թե խելոք, թե գրագետ:

Բալե, ¹⁾ բալե, հայրան ջահել,
Կոմսոմոլն սրտակից.
Յես չեմ ուզում, չեմ գնալ ել
Հին աղաթի յետեկից...

—Ջան իմ սիրուն, աղիզ Լալե,
Ըսունդ ²⁾ հարսիկ կոլխոզի.
Շուտ տուն գնա, ծնողներիդ
Ասա միտքըդ, համողի...

Հորեղբայրն ու դայե ³⁾ Շակեն
Քեզ կըլսեն, դիտեմ յես.
Մենք միասին նոր կյանք կապենք՝
Ղալըմով չեն ծախի քեզ:

—Կկատարեմ ասածներդ,
Կկատարեմ հենց եսոր,
Հիմա գնամ խելքի բերեմ՝
Քեզ նայեմ պարզ յերեսով...

—Դե գնա, ջան, սիրուն Լալե.
Կոլխոզի գործը մնաց.

1) Բալե—այս, հա.

2) Ըսունդ—սիրուն, գեղեցիկ:

3) Դայե—մայր:

Շտապում եմ ենտեղ, կալը,
Խոսքս միտքըդ թող մնա:

—Բալե, Աբո—բալե, հոգիս,
Ես ա կերթամ ու կասեմ՝
Հորըս, մորըս բերեմ խելքի,—
Կոլխոզ մտնենք համողեմ...

2

—Աղիզ բավո, ¹⁾ անուշ դայե,
Մինուճար ե ձեր աղջիկ.
Մի անգամ ել խոսքս պահեք՝
Լսեք ես իմ խոսքը ճիշտ....:

—Ի՞նչ ես ասում, ասա տեսնենք,
Մեր սիրելի, ըսունդ աղջիկ.
Ի՞նչ ես ասում, ասա տեսնենք,
Մենք կըլսենք ասածիդ:

—Վոր եղաես ե՝ կասեմ յես ել,
Վոր կոլխոզը մեր գլուղում
Մի լավ կյանք ել ե ստեղծել՝
Կանանց փողով չեն ծախում....:

—Վատ չես ասում. մեր սիրելի,
Կյանքը լավ ե կոլխոզում.
Ա՛յ, նստել ենք մարդ ու կնիկ,
Դրա մասին ենք խոսում:

1) Բավո—հայր:

Վատ չես ասում, հովիկ Ղարոն
Եսոր կոլխոզ կգնա.
Մենակ մարդը միշտ անձար ե,
Ել հերիք ե խեղճ մնանք:

Վեր կաց, Շակե, հովիկ կնիկ,
Քո սիրուն հենց եղ եր ուզում,
Մեր վճիռը վճիռ լինի,
Բանենք, ապրենք կոլխոզում:

Յ

Տրակտորի ձայն ե գալիս,
Սկսվել ե վար ու ցանք,
Շակեն, Ղարոն, սիրուն Լայլեն,
Վոտք գրեցին մի նոր կյանք:

Չոլում քեփ ու խնդություն ե,
Աբոն, Լայլեն միասին
Կոլխոզի մեջ աշխատում են,
Մի մարդ դարձած ու մի սիրու-

Խորհրդացին ազատ յերկիր,
Ազատ աշխարհ, ազատ հող,
Դու միացում ուժի, բազի,
Դու բոլորիս ազատող:

○

Զ Ո Զ Ա Ն

Զողանը մի սիրուն և փոքրիկ աղջիկ եր:
Նրա հայրը—Զաշանե Դավրիշը տավարած եր,
Իսկ նրա մայրը—Շարեն—աղայի խաթունի¹⁾ համար
շոր եր լվանում, խնոցի հարում, տունն ավլում, թու-
նիր վառում և այլ մանր~մունք գործեր կատարում
աղայի տանը:

Մի որ ել եր փոքրիկ յեղոր համար գետափին,
ավազից ու հողից փոքրիկ տնակ եր կառուցեր, ցեխից
արջի ու կատվի մողելներ եր պատրաստեր:

Արջին տան պահապան եյին կանգնեցրեր իսկ
կատուն իրեւ թե նրանց վորարդն եր, Դրա համար
քուցր ու յեղբայր շատ եյին ծիծաղում:

Այդ ժամանակ գեռ Զողանը ինը տարեկան չկար,
յերբ գյուղի քյոխիկն—Հասան աղան—այցելեց նրանց
տունը:

1) Խաթուն—աղնվական կին, աղայի կին:

Նրա այցելությունը Զողանի համար եր. նա ցանկանում եր իր 23 տարեկան յեղբորը—Ամըրին նորադիմ ուղել:

Ամըրը յերկու կին ուներ: Յան այն եր, վոր նրանցից մեկը յերեխա չեր բերում, իսկ մյուսն ել աղջիկ եր բերում: Այդ պատճառով ել Ամըրը ձանձրացել եր նրանցից. հիմա ուզում եր տավարած Զաշանի աղջիկն առնել: Դրա համար եր, վոր նրանք յեկան տավարածի տունը:

Շարեն լավ եր հասկանում, թե ինչ որի յէ հասնելու իր ինը տարեկան խեղճ ու կրակ աղջիկը:

Նա խորհում եր Զողանի մասին, վորովհետեւ նա ել եր տեսել այդ որը, վորի մասին խոսում եցին աղջկա հայրն ու Ասլան աղան:

Եհ, ինչ պետք ե աներ Շարեն, ով կհարցներ նրան, նա կարո՞ղ եր խոսել—յերե՞ք, այդ իրավունքը վոչ վոք չեր տվել նրան: Չե վոր աղաթ կա... Վհչ, նա չեր կարող մինչեւ անգամ իր ամուսնու առաջ խոսել, ինչպես կարող եր Ասլան աղայի հետ խոսել:

Զողանին նշանեցին: Ղաշանը հետեյալն եր—150 ոռորդ, մի խանչար մի գառ, ու մի մահուդեւ վերաբերու՝ Զողանի մոր համար:

Հստ քրդական սովորության՝ մի վոսկե մատանի դրին Զողանի աջ ձեռքի ցուցամատը ու վեր կացան գնացին իրենց բանին:

3

Այն որվանից վեց ամիս եր անցել, յերբ դաշտական երն ու աղաները Ղարսի շրջանից փախան:

Նրանց հետ միասին գաղթեցին նաև Շ. գյուղի բոլոր դժուղացիները:

Գաղթի ժամանակ Զողանի ծնողները սովից մեռան: Զողանն իր ութ տարեկան յեղբոր՝ Զորոյի հետ միասին ընկավ գոնեադուռ և վերջապես ընկան վորանցոց:

Նրանք առաջին անգամ ընդունվեցին Աշտարակի վորբանոց, իսկ հետո տեղափոխվեցին Լենինական-Պոլիտեխնի ամերիկյան վորբանոց:

Անտեղ Զողանն ու Զորոն կամաց-կամաց սովորեցին գրել և կարգալ. Նրանք հայերեն լեզվով կարողանում ելին խոսել և հասկացնել իրենց ընկերներին:

Տասնըվեց տարեկան հասակում Զողանը կոմիերիտուհի գարձավ: Նա աշխատում եր և ընկերական սեր ու հարգանք եր վայելում:

Այդ ժամանակ Զողանի յեղբայրը—Զորոն--մտել եր պիոներական կազմակերպության մեջ և գաղտնի աշխատում եր: Սակայն յերկան չտեղեց. իմացան և վորբանոցից հանեցին:

Զողանը համապատասխան խորհրդային որգան-ների միջոցով յեղբորը տեղավորեց գործարանում:

Բայց Զողանի մասին վոչվոք տեղեկություն չուներ, վոր նա կոմյերիտուհի յեւ:

3

Զորոն Տեքստիլ գործարանում տեղավորվելուց հետո, Զողանի հորեղբայրները յեկան և նրան տարան:

Զողանը նրանց հետ գնաց գյուղի:

Զողանն ալժմ աղատ եր, կարող եր ամեն ինչ ա-

Նել: Նա հավաքում եր գլուղի աղջիկներին և խոսում
եր խորհրդային որենքների, նրանց սովորելու, տղա-
մարդկանց ստրուկ չլինելու, հին կենցաղից ազատա-
գըրմելու և նման խնդիրների մասին:

Հանկարծակի յերեաց նրա «ամուսինը»:

Ամըրն ուզում եր իր նշանաձին տանել նորից,
բայց այդ չհաջողվեց նրան: Զողանն առաջվա պես
խուլ և համը չեր, նա այժմ իր «ամուսնու» հետ այդ
կերպ եր խոսում:

Զողանը չգնաց: Նա վորոշ ժամանակ զյուղերում
կահանց հրահանգուհի յեղավ, հետո գնաց լենինգրադ՝
սովորելու:

Այժմ նա լենինգրադում ուսանում է:

Յերբ Զողանը տեսնում է իր մատանին, նա հի-
շում ե անցյալը, կյանքի դաժան որերը, դրանով ա-
վելի քան լցվում ե հին, պատենական աղաթի դեմ
կովելու տեսչով: Նա այժմ պայքարում ե անգրագի-
տության ու ծեծի դեմ:

Նա հասկանում է, վոր ելի վերադառնալու յե-
աշխատավոր քուրդ կանանց մոտ՝ նրանց մեջ աշխա-
տելու համար:

○

ՅԵՍԻՉՈՒՐ ՉԼՍԵՑԻ ՔԵԶ

Մըրազը հարցըց հորը.—Հայրիկ, ինչու լավ չի
ծել մեր արտո...»

—Ե՛ն, վորդի, ել մի խոսիր:

—Ախր ինչու չխոսեմ,—ասաց վորդին,—պատ-
ճառը:

—Վորդի, զու ել զիտես հորդ ծաղրել լավ ես ա-
նում, վորովհետեւ մեղավորը յես եմ, յես,—Ասաց հայրը:—
Զիտեմս, թե ինչու լավ չի ծել մեր արտը, ինչու,
չես տեսնում մեր արտի կողքի հողամասը, տեսնում
ես՝ ինչքան լավ ե: Նայելիս մարդու քեփն ե զալիս...
Բայց իմս..., մարդու լացն ե զալիս:

—Ախր ինչու պետք ե այդպես լինի, —պատաս-
խանեց տղան, —չե՞ վոր զու ասում եյիր, թե յես ա-
մեն բան զիտեմ, վոչվոք չի կարող իմ չափ լավ վա-
րել ցանել, բաց հիմա...»

—Այս, վորդիս, այդպես ել մտածում եյի: Մեր
շեյխը այդպես եր զաստիաբակել: Այժմվա մեքենանե-
րին ծանոթ չեյի, չեյի ցանկանում լսել ազրոնոմների
խորհուրդները, յես ժամանակին չպարարտացրի ար-
տը, կոլտնտեսություն չմտա, սերմս չմաքրեցի ու
չախտահանեցի....

69

Յես այս հողը չթով եմ վարել իսկ նրա կողքի՝
արաբ՝ տրակտորով. նրանք շարքացանով են ցանել.
յես՝ ձեռքով. յես սերմը չեյի գտել, նրանք 2-3 ան-
գամ մաքրեցին. յես ժամանակին արտս չպարարտա-
ցըրի, նրանք պարարտացըրին. մինչև անգամ անկա-
րող եյի անելու, վորովինետև յես մենակ եյի—մինչև
մի գործ կատարում եյի, մյուսը մնում եր. նրանք կո-
լեկտիվորեն եյին աշխատում:

Վորդի, —ասաց հայրը, —իզուր ժամանակին քեզ
չլսեցի. յես դեռ վաղուց պետք ե մտնելի կոլտնտեսու-
թյուն, բայց ինչ արած, չմտնելու պատճառը շելխն
եր, յես յետ մնացի, վորովինետև դեռ չեյի հասկանում,
վոր մեր դասակարգացին թշնամին շեյին եւ:

Այս տեսակետից, իմ փոքրիկ վորդի, քո եղ փոք-
րիկ հասակովդ դու դառնում ես իմ դաստիարակիչն ու
իմ ուսուցիչը:

Սիրելի վորդի, այժմ դու գրագետ ես. այս դրու-
թյունից՝ շելխի գիր անելուց, գրագրից ինձ ազատիր.
Նստիր և մի դիմում գրիր այսպես.—«Հայրս ցանկա-
նում ե մտնել կոլտնտեսություն. նա հիմա հասկացել
ե, թե ով ե բանվոր դասակարգի և աշխատավոր գյու-
ղացու թշնամին. մի խոսքով իր դոստ ու գուշմանին
իրարից ջոկում ե. մեծ ենտուզիազմով ուզում ե կոլ-
տընտեսական լինել»:

Առավոտյան շուտ՝ Բաքրե Սիհիդի դիմումը գըր-
գած եր կոլտնտեսության վարչության նախագահի սե-
ղանի վրա:



Զ Ա Զ Ա Ն Ը

1

Զաշանը բատրակ եր: Նա ամբողջ տարին աշխա-
տում եր մալականների մոտ: Նրա տարեկան աշխա-
տավարձն եր 24 ուռելի փող, մի վերնազգեստ և յեր-
կու գառ:

Զաշանը տուն չունենալու պատճառով հայրական
գյուղում չեր բնակվում:

Ասում ելին, վոր Ռիսպի Բասոն (Քյոլսվան)
պարտքերի դիմաց գրավել եր Զաշանի հոր տունը:
Դեռ ավելին—հոր մեռնելուց հետո Զաշանն ինքն ել
ընկել եր պարտքերի տակ: Եեկ այդ պատճառով նա
աշխատում եր մալականների մոտ, վորպեսզի իր չըն-
չին աշխատավարձով կարողանար վճարել Ռիսպիին
իր և հոր պարտքերը:

Զաշանը մի հոգս ել ուներ: Արդեն 20 տարեկան-
յերիտասարդ եր գարձել պետք ե ամուսնանար, բայց
ինչպես, ինչոք, փող չկար, իսկ ով աղջկան առանց

71

փողի կտար Զաշանի պես անտուն, անտեր դուլամ տղին: Իսկ առանց ամուսնանալու, առանց ոջախ դնելու չեր լինի, նա պետք ե հոր ոջախը նորից վառեր, վորպեսզի ուրիշները չասելին, թե բայթուն տղա յե:

Մալական տերը Զաշանին վատ եր վարձատրում, իսկ աշխատանքը թողնել և գյուղ վերադառնալ նա չեր կարող, վորովհետև գյուղում նրան սպասում ելին Ռիսպիի հալածանքները—պարտատիրոջ սպասավորները:

Զաշանի գրությունը ծանրացավ տարեվերջին, յերբ Ռիսպին իր պարտքն ուզեց. Զաշանը չուներ վոր տար. նրանց մեջ վեճ ծագեց, և բանը հասավ մինչև իրար գլուխ արնոտելուն: Կենտրոնից ձիավորներ յեկան և Զաշանի թերը կապած՝ տարան գյուղից: Ռիսպիների կառավարությունը նրան աքսորեց Սիրիք:

3

Նա մնաց Սիրիքում մինչև 1917թ.:

Շատ բան տեսավ ու շատ բան սովորեց և ամենից շատ բան նա սովորեց ամենամեծ մարդուց՝ Լենինից: Լենինն ասում եր՝ բոլոր բանվորները յեղայրներ են, բոլոր ազգերի ճնշվածները հավասար են: Ա Լենինի խոսքերով նա զինվեց և Լենինի ղեկավարությամբ նա մասնակցեց մեծ չոկտեմբերին:

Զաշանը դարձավ կարմին զինվոր և վերադարձավ Անդրկովկաս...

1920 թ. նոյեմբերի 29-ին Զաշանը մտավ իրենց գյուղը:

Ժողով ե: Զաշանը վոգենորված պատմում ե հեղափոխության մասին, Լենինի մասին:

—Լենինը, նա մեծ առաջնորդ ե, նա յեր, վոր ազատեց ինձպեսներին, ձեզպեսներին... Զկարծեք թե նա սովորական մարդ ե. այդ մեծ, շատ մեծ մարդը թե ուսւի թե թուրքի, թե քրդի, թե բոլոր աշխատավորների վրա հավասար աչքով ե նայում...

Զաշանի խոսքերը գյուղացիներն ընդունում ելին վոգենորված աղմուկով:

Զաշանի միջոցով քուրդ գյուղացիները ճանաչեցին Լենինին, Զաշանի միջոցով Լենինը դարձավ նըրանց սիրելին, և Խորհրդավոր Հայաստանի այդ լեռնաբնակ քրդերն սկսեցին կառուցել իրենց նոր, խորհրդային գյուղը. և ամեն անգամ, յերբ իշխանությունը նրանց մի աշակցություն եր ցույց տալիս, մի ոգնություն եր անում, միշտ Զաշանն ասում եր.

—Ես բոլորը մեծ Լենինի թելադրածն ա: Նա ենտեղ, Մոսկվում նստած՝ գիտի, վոր ես Ալագոյզի դոշին քրդական գյուղ կա, վորը կարիք ունի լուսավորության...

Վերջերս յես բախտ ունեցա հանդիպելու Զաշանին, նա հիմա կոմունիստ ե, գյուղական դպրոցի ուսուցիչ և կոլտնտեսության կազմակերպիչը: Նա այժմ Լենինին ավելի խորը և ամբողջությամբ ե հասկանում, կարդալով հենց իր՝ Լենինի գրքերը:

Յերբ մենք սկսեցինք խոսել նա ասաց.

—Բուրդ աշխատավորությունն արդեն ընդմիշտ ազատվել ե դարավոր խավարից և արդեն նոր կյանք, նոր կենցաղ և ստեղծում Լենինի—Մտալինի կուսակցության ղեկավարությամբ:

ՅԵՄԱՆՉԱՅԻՐԻ ԳԱՌՆԱՐԱԾՆԵՐԸ

Մենք ապրում եյինք Յեմանչայիր անունով մի խուլ ու հետամնաց՝ գյուղում։ Այդ գյուղը շատ հարուստ եր բնական գեղեցկությամբ, նաև ամառավանդ չայիրներով։ այդ պատճառով ել գյուղը կոչվում եր Յեմանչայիր։

Յեմանչայիրը թառել եր մի բարձր սարի ստորոտին, վորի ներքեւում փովում եյին զմբուխտյա չայիրները։ Նրա չորս կողմը ծփում եյին սառնորակ աղբյուրները, ու յերփներանգ ծաղիկներն ողջ լցնում եյին մի խենթացնող գովությամբ ու բուրմունքով։

Գեղեցկանիստ Յեմանչայիրը, սակայն, մեզ չեր պատկանում, մեզ—յերկու գառնարածներիս։

Մենք գառնարած եյինք, յերկու փոքրիկ տղա, մեկս ութ տարեկան, մյուսը՝ մի քիչ ավելի մեծ։

Յեմանչայիրն Ասլան աղայի գյուղն եր։ Մենք

արածացնում եյինք նրա գառները մեր ծնողների պարտքերի դիմաց։

Առավոտից մինչև իրիկուն, Յեմանչայիրից հետու, գառներ եյինք արածացնում։ Քիչ եյինք գյուղ կնում։ Զգիտեյինք վոչ հայր, վոչ մայր, վոչ քույր ու յեղբայր, վորովհետեւ մեր աշքերն Ասլան աղայի կողմում բացվեցին, վոչսարի հոտի ու քողի մեջ։

Մեր ծնողներն անիծում եյին մեզ, թե ինչու աշխարհ յեկանք։ Կարծես թե մենք, յերկու գառնարածներս, իրենց դժբախտության պատճառն եյինք։

—Աև լինի ձեր ծնունդը...

—Ես ինչ վատ աշխարհ ե, յարաբ։
—Վերջ կա, թե չե...

Ու տրանջում եյին մեր հայրերը՝ Ղահրամանն ու Դալոն, վորոնց անբախտ զավակներն եյինք մենք։ յերկու գառնարածներս։

❖

—Հեյ, իմ ընկեր գառնարած, տեսմը՝ ինչպես պրանք Ասլան աղայի բռնությունից ու սրտամաշ գառնարածությունից։

—Այս, ուրախ պատասխանում ես դու։

Անցել են յերկար տարիներ։ Անցել են և իրենց հետ անդարձ տարել դառն, ու վշտավի որերը։ Անցել ե Ասլան աղան ել, ինչպես մի ծանը կոչմար։ Յեկ հիմա այն բոլոր անցածը թվում ե մի տեսակ յերագ։ Ամեն մի հուշ կարող ե մոռացվել, և յես շատ բան եմ մոռացել այն որից, բայց միշտ ել հիշում եմ, վոր մենք՝

—Գառնարածներ եյինք, փոքրիկ գառնարածներ։
Քում եմ յես այն որերի մասին և լավ եմ զի-
տակցում այսոր, վոր մեր հայրերը՝ Ղահրամանն ու
Դալոն չեյին մեղավոր, այլ Ասլան աղան, վորի կամ-
քը գերել եր մեզ ու մեր հայրերին։ Մենք այդ բանը
հիմա գիտենք։ Մենք չգիտեյինք այն ժամանակ՝
—Յերբ գառնարածներ եյինք, փոքրիկ գառնա-
րածներ։

3

Ու հիմա կարմիր դրոշը մեր ձեռքին՝ գնում ենք
դեպի առաջ։ Միլիոնների հետ կառուցում ենք նոր
աշխարհ։

Մենք առաջ անլեզու գառնարածներ եյինք,
Հիմա մարտիկներ ենք մի հզոր յերկրի։
Մեր խեղան հայրեր, մեր թշվառ մայրեր, Դուք
ապրեցիք Յեմանչայիրում, վորպես սարուկ, ու շնչե-
ցիք ծանր խավարը։ Դուք մեռաք՝ չտեսնելով այս
յերջանիկ որը։ Դուք յեղաք Յեմանչայիրի տեր ու
տիրական Ասլան աղայի զոհերը։

Խաղաղություն ձեզ։

—Հեյ, իմ ընկեր գառնարած, վոր հիմա կարմիր
բանակումն ես՝ զենքդ պատրաստ պահիր։ Յես ել եմ
պատրաստ, քո մանկության ընկեր գառնարածը։ Մեր
արյան վերջին կաթիլը տանք, վոր աշխարհից խաղոն
չքանան Ասլան աղաները, վոր Յեմանչայիրի սառնու-
րակ աղբյուրները և յերփներանդ ծաղիկները մեզ մնան,
վոր ամբողջ աշխարհը լինի այնպես գեղեցիկ ու ծաղկուն,
առաստ ու յերջանիկ, ինչպես խորհրդային յերկիրը։

Ի՞նչ Անեմ...

—Գարունը մոտենում ե։ Մարդիկ պատրաստվում
են դաշտ գուրս գալու, իսկ յես ի՞նչ պետք ե անեմ։ —
գանգատվում եր Թեմուրի պապը։

—Ի՞նչ ե պատահել, պապի, վոր դու այդքան մը-
տահոգվում ես, պատմիր ինձ, պապի։

—Ուզում ես պատմեմ բոլորը. դե, լիր ինձ,
թոռնիկս, ի՞նչ ե պատահել ասում ես, ել ի՞նչ պատա-
հի, վորդյակ իմ։ Հայրդ մեռավ, տանը վոչ մի աշ-
խատավոր չմնաց։ Ինչո՞ւ մեռավ հայրդ։ Շեյխերն յե-
ղան հորդ մահվան պատճառը։ Հայրդ մեռավ քաղցից։
Նա ծոմ եր պահել, իրեն քաղցած եր թողել ու քաղ-
ցած ել գնացել վոչխարն արածացնելու։ Իսկ քաղցած
մարդը, դե գիտես, լառ, ամեն մի հիվանդության կեն-
թարկվի։ Սարում ցուրտը խփել եր քաղցած մարդուն։
Յեվ նա քաղցից ու ցրտից մեռավ։ Մեռավ և քանդը-
ցից իմ տունը։ Ծոմն ու շելխերը քանդեցին իմ տու-
նը, քամուն տվին, հորդ։ Նման մի մարդու կորցնել

տվին: Յես ի՞նչ անեմ, լառ, յես մեր դրության վրա յեմ լաց լինում: Շեցիսերը ծոմ չելին պահում, իսկ ինձ ու հորդ ասում եյին, «Ծոմ պահեք, աստծու պարտը ըշն ե՞»:

Հայրդ լսեց նրանց ու կործանվեց: Ճիշտն ասած, նրանց ասելով յես քեզ ել դպրոց չպետք ե ուղարկելի: Բայց յես նրանց ասածով չվարվեցի, յես իմ գործը լավ գիտեյի ու քեզ դպրոց տվի:

Այդ խոսքերի վրա թոռը ցնցվեց, ապա հավաքեց իրեն ու ինքնավստահ ասաց.

—Միրելի իմ պապի, դու բոլորովին մի մտածիր, մի մտահոգվիր, յես ամեն ինչ կանեմ: Դու լավ գիտես, վոր մենք շեյխերին չենք հավատում, ծոմ չենք պահում: Իսկ մեր կոմյերիտականների խումբը վորոշել ե գարնանցանի ժամանակ ողնել քեզ նման մարդկանց: Պապի, արի կոլտնտեսություն մտնենք, համայնական աշխատանք կլինի: Մենք կարող ենք աշխատել այնտեղ, պապի... յեթե միայն ուզես դու, ցանկանաս, դիմումը յես կգրեմ, մեր նոր այրուբենի տառերով, մեր լեզվով...

Պապը լոեց: Նա մտածում եր: Նա ամիսներ շարունակ մտածել եր ու վոչինչ չեր վորոշեր: Ապա հանկարծ ուրախացած բացականչեց.

—Յես շատ, շատ գոհ եմ իմ սիրեցյալ թոռնիկից, յես հիմա արդեն գիտեմ, վոր դու կլինես իմ ցանկացած տղամարդը, հեռու շեյխերից ու մոլլաներից. մեր ժամանակում հեշտ չեր գա, թոռնիկս, ինձ՝ շեյխերին չհավատալու համար, խայտառակել են իմ ամբողջ կյանքում և հայրդ ել այդ խայտառակողների հետ եր,

նա շեկավ իմ յետեից: Դու իմ ցանկացած տղամարդը կդառնասս... Գրիր, զրիր այդ դիմումը, բալիկս, զրիր... դու ինքդ գրիր, քո ձեռքով: Մոլլան մեզ դիմում չի գրի, նա ուրիշ պատմություններ կանի մեզ: Գրիր, ամեն ինչ գրիր, բալիկս, յես այժմ գիտեմ, թե ինչ եմ անելու:

Մյուս որը թեմուրն ասաց պապին, վոր դիմումը պատրաստ ե: Պապը կաթողին համբուրեց թոռնիկին:

Դիմումը պապի ձեռքին, նրանք գնում եյին գեղի համայնական աշխատանքը, դեպի նոր կյանքը...

Իսկ պապը մտածում եր.

—Հիմա յես գիտեմ, թե ինչ եմ անելու:





Ա. Ա. Ա. Պ. Ա. Լ.

Ք Ա Ռ Յ Ա Կ Ն Ե Ր

* *

Անգետ եյի յես առաջ—
Հարուստին ստրուկ՝ դառած.
Խերն ու շառն այժըմ գիտեմ
Իմ մտքի լույսը վառած:

□

* *

Քո խելքը սուր ե, հնդիս,
Իսձ համար հուր ե, հնդիս,
Մեր կանգը աշխատանքում—
Միշտ ել ամուր ե, հնդիս:

□

ՄԵՐ ԱՐՏԸ

Հասուն արտեր սպիտակ,
Ինչքան լավ ե արտը մեր:
Ո՛վ հասուն արտ, հողի տակ
Ընդմիշտ թաղիքը գարդը մեր:

Հասուն հասկեր, լիքն եք, լիք,
Քառաշար եք, քիստավոր,
Քամին ալիք առ ալիք
Ռորում ե ձեզ որոր:

Սպասում ենք անհամբեր,
Սպասում ենք այս բերքին.
Մենք ուրախ ենք, քանզի մեր
Բերքն ե մնում մեր ձեռքին:

Հասուն հասկեր սպիտակ,
Ինչքան լավ ե արտը մեր:
Ո՛վ հասուն արտ, հողի տակ
Ընդմիշտ թաղիքը գարդը մեր:

* * *

Նրանք սրտով, հոգով՝ մեկ են,
Հարվածային ջանքով՝ մեկ են,
Ինչ ճամբով ել նրանք գնան,
Հերոսական կյանքով՝ մեկ են:

ԶԱՄԲԻԼՖՈՌՈՅ¹⁾

(Քրդական ժողովրդական վեպ)

Զամբիլֆոռշն՝ աղքատ մի մարդ՝ ապրում եր մի մհծ
Ուներ մի կին, յերկու տղա։ Զամբիլներ²⁾ եր
Քամբիլֆոռշն՝ եղ արհեստով իր քոլֆաթն³⁾ եր մի
Զամբիլֆոռշն՝ են փողոցով մի որ՝ անցավ
Միրի⁴⁾ կինը՝ Բանի խաթուն, նրան տեսավ, վառվից
Շատ եր զանգին Բանի խաթուն, ուներ ձեռքին
Քառսուն աղքատ քրդուհիներ՝ պատրաստ նրա
հրամաններին։

1) Զամբիլֆոռշ—զամբյուղավաճառ, 2) զայբիլ—զամբյուղ,
3) քոլֆաթ—ընտանիք, 4) մէր—աղա, 5) ջարի—աղախին

Են վժր ջարին հոգի ուներ նրա կամքը չկատարի։
Յեվ իր սիրուն ջարիներին հրամայեց Բանի
խաթունն,
Սսավ, գնան Զամբիլֆոռշն մի կերպ խաթեն ու
բերեն տուն։
Զարիք թեթև թուան փողոց, Զամբիլֆոռշի առաջն
առին։

— Զամբիլֆոռշ, սիրուն ջահել,
Թո արհեստն ե զամբիլ ծախել,
Յուսուֆի սերն ե քեզ վայել.

Զամբիլֆոռշ, զամբիլ բերում,
Ման ես տալիս փողոցներում,
Զամբիլի գնով հաց ես տանում,
Բոլֆաթի հետ ապրուստ անում։

Զամբիլֆոռշ, շիրին տղա,
Արի մեղ հետ, շնորհք արա,
Ուզում ե քեզ տեսնել աղան,
Զամբիլ կառնի, յեկ, մի դողա։

Զամբիլն ասաց.—սիրուն ջարիք,
Աղեն տան չի, մի չարչարիք,
Աղեն զամբիլ չունի կարիք։

Զամբիլ, դու խեղճ յերիտասարդ,
Զամբիլ շինող, ծախող դու մարդ,
Դու քաշում ես քոլֆաթի դարդ...

ՅԵԿ գնանք տուն, մին համասի,
Աղեն քեզ լավ կվճարի,
Զամբիլներդ կհավանի.

Զամբիլֆրոշ լսեց նրանց, ելավ գնաց աղայի տունը:
Միամիտ եր, չեր կասկածում, թե կա եղանեղ
Ղուլամները¹⁾ ջահել տղին շուռա ներս արին դուռը
Ներսում մախմուր բարձերի մեջ սպասում եր Բանի
իսաթունն.

Զամբիլն եկավ՝ զամբիլն ուսին,
Կրակ ընկավ իսաթունի սիրտ.
— Թու վեր աչքիս, դու հետ գլխիս:

Զամբիլն ասավ.— շիրին իսաթուն,
Յես զամբիլ եմ շինում ծախում,
Թի չես առնի, թող գնամ տուն,
Ճժեր ունեմ անկերուիում:

— Ջահել լոյր, բավական ե,
Թիզ չբերի՝ զամբիլ գնեմ,
Յես քեզ բերի, վոր քեզի հետ
Կյանքի ժամեր անցկացնեմ:

— Հեյ—դու ինձ սիրող իսաթուն,
Յես քոլֆաթի հոգս եմ քաշում,
Թո պահանջը կյանք ե մաշում:

1) Ղուլամ—ոհատին ծառա, զինվոր, ճորտ պահապահ:

— Զամբիլֆրոշ, դու խեղճ տղա,
Յեկ միրի անկողնու վրա,
Միրի զայլան անուշ արա:

Արի, ջահել, քեզի վախտն ե,
Սէրը կյանքի անմահ զարդն ե,
Խաթունի սեր ցեղի բախտն ե:

Զամբիլֆրոշն ասավ՝ մտքում.— յես մի ուայ, ուամիկ
կՈՒՐՄԱՆՁ¹⁾):
Ինձ վայել ե, վոր վայելեմ իսաթունի հետ սիրո
վարկյան:
Միրն իմանա, կմորթի ինձ, իմ ճժերին ու իմ
կնկան,
Նաև թշվառ ջարիներին գազանաբար կկոտորի,
Ինչու շիտակ ճամբես ծոեմ, պատճառ դառնամ եղ
րոլրին:

Հեյ բարձրավիզ, մարմար իսաթուն,
Անհամ ես դու ուամիկ մարդուն,
Միրի զայլան ինձ չի սազում:

— Զամբիլֆրոշ, խղճա յարիդ.
Թիկնիր փափուկ տեղաշորին,
Խմբենք մեկտեղ կյանքը շիրին:

— Զի, իմ նպան հասած իսաթուն,
Դու քալցր ես քան շաքար ու թուզ,
Բայց ինձ համար հարամ եւ դու:

1) Կուրմանջ—սամիկ քուրզ:

—Ո՞վ, հերիք և խոսես, տղա,
Արի, պառկիր, յես քյուլ յեղա,
Խառնիր, խառնիր, ծծերս, ահա.

Բանի խաթուն չհամբերեց, ձեռը զարկեց փարթամ
Հանեց սպիտակ, սիրուն ծծերն ու շանց տվագ՝
Դամբիլֆրոշի ամբողջ մարմնով հիացմունքի սարսուռ
Զամբիլֆրոշն անուշ ժպտաց, Բանի խաթունն
ուրախացավ.

Ու ներս կանչեց ջարիներին,
Հայտնեց գաղտնիքն իր հույզերի,
Շատ զարմացան սիրուն ջարիք:

—Զան ջարիներ,—ասավ,—յելեք,
Հազեք սրմա, ատլասեղեն,
Խելքի յեկավ համառ տղեն,
Գովանք բոնեք, ուրախ յեղեք:

Շատ եր ծարավ Զամբիլֆրոշն. ու ջուր ուզեց վառ
Հավասով, Զամբիքն ամենք պատրաստ եյին շարբաթ տալու
Բեթե վազով, Բայց խաթունն ինքը ջուր տվավ Զամբիլֆրոշին
Զամբիլն առավ դողողալով թասը նրա անուշ
ձեռքից:

Ուզեց խմի, կուլ չգնաց, խեղդվում եր սրտի հեվքից:
Զամբիլֆրոշն ասավ մտքում.—ախ, ժամանակն անց
ե գնում...
Տեղից մինչև սև գերեզման իմ ճանքեն ե խոլոր
գնում...
Նայեց բարձր փանջարեքին ¹⁾, յերկյուղ ընկապ
անահ սրտում.
Ուժ հալաքեց ու փանջարից ներքև թռավ, փախավ
իր տուն:

* *

Զամբիլֆրոշն իր տուն յեկավ,
Թշվառ Ալեն ²⁾ շատ բարկացավ.—
Ճժերի կերն ուր ե, —ասավ:
—Կին, մի խաթուն տեսա խորոտ,
Զամբիլներս առավ զոռով.
Խեր չաեսնի նա իր որով:
—Անսիրտ Զամբիլ, տանըդ սոված լաց են լինում
յերեխաներդ,
Դու քեզ համար սեր ես անում խալսի հարուստ
խաթունի հետ,
Զամբիլֆրոշն ասավ—Ալեն, ես լացուկոծն երեց հոգիս,
Թոնիր վառի, թոնրի վրա դիր խամ ջրով լցուն մի
գիզ ³⁾),

1) Փանջարա—պատուհան. 2) Ալեն—Զամբիլֆրոշի կրնը:
3) Դիզ—կավե աման

Բաւելի սոված ես յերեխեք մի կերպ խարսխն, քնեն
Քշվառ Ալեն թոնիր վառեց, դիզը դրեց թոնրի վրա,
Զուրը դատարկ դիզի միջին յերկար, յերկար յեփեց.
Մինչև սոված ու բեզարած յերեխեքի քունը
յեռաց,
տարապ...

**

Կես գիշեր եր: Բանի խաթունն յեկավ Զամբիլֆրոշի
Զամբիլֆրոշն իր խրճիթում իր քոլֆաթով քուն եր
յետե,
Բանի խաթունն յելավ կտուր ու յերդիքից իրան
մտել,
Նայեց քնոս Զամբիլֆրոշին սև աչքերով
նետեց,
Շորեն հանեց ու համարձակ՝ սիրած յարի ծոցը
սիրաթաթավ,
Զամբիլֆրոշն եղ շաքարե համբուլբուրով քնից
մտավ,
Տեսավ հրաշք են խաթունին իր աղքատիկ
զարթնեց,
Սիրուց լակված ձեն չտվավ, խեղճ Ալեյին նա
տեղաշուրում,
Բանի խաթուն սիրած մարդուն համբուրում եր ու
չհամբուրում...

Կարոտն առավ, լելավ տեղեց, իր զառ, սրմա շոքերն
հազար
Խոսք մեկ արավ Զամբիլի հետ ու գիշերով
վերադարձավ:

**

Առավոտյան աղեն յեկավ: Գնացել եր ուրիշ քաղաք:
Սաստիկ շոգ եր, արեն ասես շաղ եր տալիս բոց ու
կրակ:
Աղեն նստած պատշգամբում միտք եր անում եղ շոգ
ժամին,
Զամբիլն անցավ եղ փողոցով՝ բղավելով «Զամբիլ»
Զամբիլ...
Եղ ժամանակ պառավ ջարին իր խաթունին թագուն
մատնեց,
Ասավ. իմ միր, իմ փաթիշահ, իմ կյանքի տեր, իմ
գլխի մեծ
թո ամուսին Բանի խաթունն իր նպամուսին
դավաճանեց,
եղ զամբիլներ ծախողի հետ քո անկողինն
ապականեց,
Կատաղեց աղեն, գույնը թօավ, կանչեց իր քաջ
դուլամներին,
Նրանք բոնին Զամբիլֆրոշին ու ԶՆԴԱՆԱ—
ԲՈՒԶԵՆ¹ գրին,
Աղի ահեղ հրամանով խաթունին ել եղտեղ բերին:

1) Զնդանա—բուզե—սառցե նկուզ:

Զամբիլֆրոշն ու իր խաթունն սպասում են սառցե
բնում,
Ցրտից սաստիկ դողլողում են, իրար գրկում ու
տաքանում:
Իրար տխուր համբուրում են և սպասում ահեղ
դատի.
ՅԵՐԱ պիտի գա միրը զնդան, նրանց մորթի կամ
ազատի:

* *

ՅԵՐԵԿՈյան աղեն յեկավ՝ աչքում արյուն, ձեռքին
Հրամայեց զուլամներին, վոր ԶՆԴԱՆԱ ԲՈՒԶԵՆ
դանակ:
Աղի ահեղ հրամանով Զամբիլֆրոշին շղթայեցին,
Բանի խաթունն անխոս ու լուս քարացել եր հենվել
բանան,
Մերին իր հլու զուլամներին կանգնեցրեց բանափ
պան:
Վոր չփախչի Բանի խաթունն ու ձեն չտա սրան,
Նրան:
Հետո սրած իր դանակով նա մոտեցավ Զամբիլֆրոշին,
Մի հարվածով կարեց նրա փափուկ ազդրից մի կտոր
միւ.
Ճիչ արձակեց Բանի խաթուն, ձեռը զարկեց աղի
ճարպիկ, արտագ մի շարժումով դանակն առալ նրա
ձեռքից:

Դուլամները թողին փախան: Արտապնդվեց Բանի
խաթուն,
Յեկ դանակի մի հարվածով՝ մի կատաղած
ակնթարթում՝
Թափեց աղի վորն ու աղիք և աղատեց սիրած
մարդուն:
Քանդեց ձեռի, վոտի շղթան, շուա տուն տարավ,
վերքը կապեց,
Զամբիլֆրոշի վերքի վրա սիրո անուշ արցունք
թափեց:
Զամբիլֆրոշն ուշքի յեկավ, խորհուրդ տվեց, վոր
շտապեն:
Շուա հեռանան եղ քաղաքից, գնան ուրիշ հեռու
յերկիր,
Սպանված միրն ունի հազար ազգականներ
արյունակից,
Զամբիլֆրոշ, Բանի խաթունն չեն ազատվի նրանց
ձեռքից:
Բանի խաթունն արագ-արագ ժողվեց վոսկին ու
զարդեղեն,
Զալեյի հետ քոչը բարձին, վրեն կապին պուճուր
աղեն,
Հենց եղ գիշեր ճամբա ընկան, վոր գնան մի հեռու
քաղաք,
Ուր չի լսվի միրի անուն, ուր չեն իշխում միր ու
աղա...
□

ԶԱՍԸՆ ՈՒ ԹՌԱԸՆԸ

1

1921 թ. աշնան ցուրտ յերեկո յեր:
Քաղաքակի փողոցը յեռում եր. ինչ ասես՝ չկար:
Ելեկարական լույսերի առաջ հոսանքը վողողել եր
Վողջ քաղաքը, կառքերն ու ավտոները թռչում ելին՝
արագ դողրալով փողոցում: Տրամվայի վագոններն
իրար հետեւց անցնում ելին արագ:

Մայթերի վրա անց ու գարձն այնքան շատ եր,
վոր մարդիկ զիսպչում ելին միմյանց. վոմանք յերբեմն
կանգնում ելին, վորպեսզի մյուսներն անցնեն: Կա-
յին ամեն տեսակ մարդիկ՝ պլանված կանայք, որիորդ-
ելին վորոնք անցնելիս նապաստակների պես նայում
ազամարդկանց աչքերին. նույնն ելին անում
ազամարդիկ: Մրանց մեջ կարծես ինչ վոր բան կար,
վոր ուզում եր մերձեցնել միմյանց. սակայն շատերի
համար այդ յերազ եր գառնում, ցնդվում ողի մեջ:
Նրանք մինչեւ ուշ գիշերը զբոսնում ելին:

Յնցուիների մեջ կորած յերկու մասուկներն ել
դուրս ելին յեկել փողոց, բայց նրանք զբոսնելու հա-
մար չելին յեկել Գալավինսկի. նրանց ցնցուիներին
ինչ կսաղեր զբոսնելը: Նրանք ոտար ելին այդ պըճ-
նըված պարոնների ու տիկինների համար:

Նրանք կուչ յեկած՝ անցորդին պարզում ելին ի-
րենց ձեռները և աղերսագին կանչում:

— Կրապի՞վի դյանիա, դենքի դավայ (գեղեցիկ քե-
ռի, փող տուր):

Գեղեցիկ քեռիները յերբեմն միշտի կոպեկ տալիս
ելին, այն ել՝ յեթե զբաններում պատրաստ փող
ունեյին. յերբեմն հայնույում ելին այդ «լրերին»,
յերբեմն յերբեմն ել ուշադրություն չդարձնելով՝ անց-
նում ելին:

2

Ցուրա եր:

Կես գիշերն անց:

Քաղաքինսկի փողոցում անց ու գարձը գաղարել
կանգ եր ասեւ: Զկային սլացող կառքերն ու ավտո-
մոբիլները, տրամվայն ել դադարել եր աշխատելուց.
Կրասիվի դյանիաներն ու միլիյե բարիւնյաները վաղուց
քնել ելին իրենց փափուկ ու տաք անկողիններում:
Քաղաքինսկի փողոցում մնում ելին միայն յերկու յե-
րեխա, վորոնք կուչ յեղած մի ծառի տակ՝ դողում ե-
լին ցրտից:

— Զանցը, ցուրտ ե, մըսում եմ, — առում եր փոք-
րիկը մեծին:

—Ե՞լ, ինչ արած, Թոսըն ջան, պիտի սպասենք
մինչև լուսանա, ուրիշ ճար չկա:

—Զանըմ, գնանք՝ ելի են տան բակը քնենք, վոր-
տեղ նախանցյալ զիշերը քնել ելինք:

—Զե, Թոսըն, չե, ելի մեղ կծեծեն, ավելի լավ ե՞
չգնանք:

—Ցուրտ ե, Զանըմ, ինչ անենք:

Սպասենք, Թոսըն, շուտով կլուսամա

—Բացի այդ, սոված ենք, Զանըմ. մեր կերածը
դեռ յերեկվա հացի կտորանքներն են, վոր են տան
աստիճանների վրա կերանք, հիշեմ ես:

—Ճիշտ ես ասում, Թոսըն ջան, բայց ինչ անենք,
խանութներն արդեն փակել են, մենք ել փող չու-
նենք մեղ մոտ:

Թոսընի աղիքները ցամաք ու չոր հաց ուտելուց
չորացել է յին, խոկ այդ որը համարյա բան չեր կե-
րել, վորովհետեւ արյունաքամ եր յեղել ախորժակ չու-
ներ հավաքված հացի կտորներ ուտելու. խելքը մաղ-
վում եր: Քիչ մտածելուց ու չորս կողմը նայելուց հե-
տո Թոսընն իր ցուցամատով Զանըմին ցույց տվեց դի-
մացի խանութը:

—Տեսնեմ ես, Զանըմ, —ասաց Թոսընը, —այդ
խանութի գուռը գեռ բաց ե. գնանք՝ այստեղից բուշ-
կի առնենք, ուտենք:

—Փող չունենք, Թոսըն ջան, —ասաց Զանըմը և
ձեռքը գրեց շալվարի գրանը: Կրասիվի դյաղյանե-
րից հավաքած փողը հաշվելուց հետո, Զանըմը հայտ-
նեց Թոսընին, վոր ընդամենը տասներեք կոպեկ ու-

նեն: Բուլկու հատոն արժեք 10 կոպեկ. յերկու բուլկի
տանելու համար յոթ կոպեկ պակասում եր:

—Տեսնեմ ես, Թոսըն, —հաղալով ասաց Զանըմը:

Դեռ 7 կոպեկ պակասում ե, ինչ անենք:

—Ի՞նչ անենք, արի գնանք խանութ, գոնի մի
հար անենք:

—Թո ասելով՝ պետք ե գողանանք:

—Բա վճաց, սոված մարդը պետք ե գողանա, ինչ
ես կարծում:

—Արի գնանք:

Գնանք:

Նրանք գնացին գեղի խանութ: Խանութը յերկու
դուռ ուներ, մեկը Փալավինսկի փողոցի կողմից եր
բացվում, խոկ մյուսը՝ ներսից, դեպի բակը, վորտե-
ղից խանութպահն ապրանք եր տանում տուն, կամ
տնից բերում խանութ:

Խանութը մի պատուհան ուներ, պատուհանի ներ-
քին հաստ ապակին ձեղքվել եր, բուլկիները շարված
եին ջարդված ապակու առջեւ: Ելեկտրական լամպը
ներսից վառվում եր, դուռը հետեւից փակված եր:

Բաղաքը լուս եր, յերբեմն գնացքի սուլոցի սուր-
կամ բառ ձայնն եր լսվում, յերբեմն ել պահակ միլի-
ցիոներների սուլոցի ձայնը, վորն այնքան ել հեռու
չեր խանութից:

14-15 տարեկան տղա, խանութի ներսում նստած՝
ինչ վոր բան եր գրում, հետո կարդում, հաշիմեր ա-
նում:

Զանըմն ու Թոսընը մոտեցան խանութի գուանը,

ձեռք տվին գուանը, գուռը չբացվեց. հետեւից փակել եյին:

— Թուրն, զժվար թե կարողանանք այստեղից բռւլ-կի գողանալ—ասաց Զասըմը:

Դարսված բուլկիները սպիտակ և փափուկ ելին յերեւմ: Մանուկները տեսնելով՝ ել չկարողացան համ-բերել ուզում ելին հարձակվել, զազանի պես հոշո-տել նստած մանուկին և բոլոր բուլկիները տանել:

Նրանք մոտենալով պատուհանին՝ աղակու ճեղքը տեսան:

— Զասըմ, ես ե, — ասաց Թոսընը, — ճեղքվել ե, կա-րելի. յե ապակու ներքին մասը վերցնել, հենց այստե-ղից ել բուլկիները հանել:

— Ճիշտ ե, Թոսըն, դու կանգնիր, փեշդ բռնիր, իս կլցնեմ:

— Շատ լավ:

Զասըմը մի քիչ կռացավ, ավելի մոտեցավ պա-տուհանին. նա վախենում եր: Մի կերպ ջարդված ա-պակին հանեց, յոթը բուլկի հանեց և գցեց Թոսընի փեշը. ութերորդը հանելու ժամանակ ինչ-վոր լիշտոց լվեց. ներսում նստած յերեխան իմացավ, վոր ինչ-վոր բան գողացան:

Զասըմն ու Թոսընը փախան. տղան հետևեց նը-րանց: Թոսընն ասած անցավ, տղան հասավ Զասըմին ու բռնեց: Յերկուսով կոխի բռնվեցին: Մի քանի բռ-պե փողոցում իրար ծեծելուց հետո Զասըմը բարկա-ցավ, կարծես ամեն ինչ կորած եր համարում. մին ել իր ուժը հավաքեց, խանութպանի տղայի վզից բռնեց, սեղմեց, վոլորեց ու նրան դրեց գետին, մի քանի հար-

ված ել հասցրեց կրծքին. քթին ու փորին տալուց հե-տո Զասըմը փախավ:

Տղան ուշաթափ ընկած եր գետնի վրա. նրա քը-թից շատ արյուն եր գնացել ու առջեր լճացել:

— Զասըմ, յեկար, — ասաց Թոսընը:

— Այս:

— Ի՞նչ արիր:

— Յես քոյ յեղբարն եմ, յես նրան դրի գետին, ծեծեցի և յեկա. նրա բերնից արյուն եր հոսում:

Նրանք ճանապարհին գողացած բուլկիներից ու-սում ու փախչում եյին:

— Ի՞նչ համով ե, Զասըմ, — ասաց Թոսընը. — յե-րանի միշտ հաջողվեր մեզ ալսպես գողանալ և ու-տել: Զասըմը ծիծաղեց:

— Վհի, Թոսըն ջան, ամեն ժամանակ չի հաջողվի:

— Զասըմ; բա մեր դրությունը...

Թոսընը գեռ իր ասելիքը չավարտած՝ հեռվեց յե-կող ինչ-վոր մարդու տեսան:

Նա մի աժդահա անձնավորություն եր, մեծ-մեծ կիսակապույտ աչքերով, ուռած փորով, յերկար շալ-վարը կախված եր սապոկների վրայից: Նա վազում եր, փողոցում ինչ-վոր բան եր փնտրում:

Զասըմն ու Թոսընը տեսնելով նրան, փախան և ուրիշ փողոցով գնացին: Մտան մի մութ անկյուն և սկսեցին խոսել:

— Թոսըն, դու այդ շանը տեսմար, — շունչ քաշելով ասաց Զասըմը:

— Բա վհնց, ամբողջ աշխարհը նրանց համար ե աշխատում, դիտես՝ նրանք որական վնրքան առեսուր

են անում, միամիտ խալսին խաբում են, մի ոռութ ու ապրանքը շաբաթյան օրում են ծախում. նրանք առանց քրտինք թափելու՝ ահազին փող են հավաքում, ուտում, խմում և քեզ անում:

— Ի հարկե, միայն մենք ենք, վոր շան որ ենք անցկացնում, չքավորության մեջ մեռնում, միշտ սոված: Նրանք միշտ ել լավ են ապրել: Մեր չքավորության պատճառը նրանք են, նրանք: Նրանք թալանել են մեղ, մեր ծնողներին, մեր բարեկամներին:

Յերբ Զասըմը խոսում եր, Թոսընն իր մտքով սկանում եր այլ աշխարհ, նա մտածում եր անցյալի մասին և հառաջում:

Զասըմի վերջին խոսքերն եյին. — Ա՛խ, յեթե հայրըս թողներ, կդնալի գլորոց, կսովորեյի...

— Յես ել այդ գրության մեջ եմ, Զասըմ, — ասաց Թոսընը հորանջելով և շաբունակեց հուզված ու ցասմամբ լի. — մի հորեղբար ունեմ, չգիտեմ՝ ճանաչում ես, թե չե. անունը Բողոք ին, Բողոք: Մի որ տուն գընալով ինս տեսա Ոմարի Մադոյին. ձեռքին ուներ մատիտ, տեսրակներ և ալին. գու գիտես՝ նրանց անց մեր տան կողքին եւ Նրա մատիտը գունավոր եր, այդ ինձ գրավեց, Մոտեցա նրան և հարցրի:

Վերտեղից ես գալիս Ոմար:

— Խուանդրն խանիլին (գլորոցից):

— Խուանդրնիայի:

— Եկո՛լ, ըկո՛լ—հիմա հասկացմաք, այդ նոր տերմին եւ մեր դասատուն և ալդպէս ասել մեղ:

— Համ...

— Բա մինչեւ հիմա դու չգիտե՞ս, վոր խորհրդաշին իշխանությունը մեղ համար զպրոց և բաց արել:

— Յեթե վաղը քեզ հետ գամ դպրոց, ինձ ել կընդունեն, — հարցրի:

— Այս, — պատասխանեց նա:

Յես անչափ ուրախացա:

3

Առավոտյան յես Ոմարի հետ միասին գնացի գըպրոց:

Նրանց ուսուցիչը պատշգամբից նայում եր ներքեվ. դպրոցի բակում յերեխաները խազում եյին, խակդպրոցից ներքեւ գանվում եր «Եյթան բազար» կոչված շուկան, վորակեղ լիքն եր հասարակությամբ: Շուկան յեսում եր:

Ոմարի հետ միասին պատշգամբի աստիճաններով բարձրացաւ վերև, բարեկցի նրան: Անունը Լազոն յեր, բայց քուրդ յերեխաները, իրենց սովորության համաձայն, նկատի ունենալով նրա ծերությունը, կոչում եյին «ապէ Լազոն» (հորեղբայր Լազոն):

Ել լինչ գլուխդ ցավացնեմ, Զասըմ, Լազոն շատ բարի մարդ եր, ծիծապաշարժ զեմքով և կատակող: Նա ազգով հայ եր: Առաջինը նա յեր, վոր գտավ մեր տառերը, այդ տառերով քրդերեն լեզվով հիմա շատ գաւազբեր և բրոշյուրներ են գրված. մի խոսքով՝ մեր «աղջի» համար շատ լավ մարդ եր: Այս գեռ քիչ ե, վոր ասացի. նա իր մոտ բոլոր յեկողներին լնկեր եր ասում:

— Ըսկեր... — ասաց Զասըմը և աջ ձեռքն արագուշ
թյամբ տարավ դեպի գլուխն ու սկսեց քորել.
Մոտենալով ինձ՝ նա հարցրեց, — վրատեղ ես մնում,
ընկեր:

— Քաղաքում, — պատասխանեցի յես:
— Ում մոտ ես ապրում:
— Հորեղբորս մոտ:
— Ի՞նչ ե հորեղբորդ անունը:
— Բողոք, — ամաչելով ասացի յես:
— Ի՞նչ ես ուզում հիմա, — քիչ մտածելուց հետո
ասաց նա:

— Ուզում եմ, վոր ինձ գրել — կարդալ սովորեցը
նես, — պատասխանեցի:

— Եատ լով, — պատասխանեց նա և սկսեց գլուխը
շոյել: Նա ինձ տարավ իր սենյակը, մի դավթար հա-
նեց պահարսնից, անունս, աղքանունս գրեց և ասաց
ինձ.

— Գնա առաջին խումբ:
Ա՛խ, Զասըմ, ապէ կազոն ինչքան լավ մարդ եր,
շատ բարի յեր, ընկերական:

Զասըմը ննջում եր:
— Քննեմ ես, Զասըմ: — իսկապես Զասըմը ննջում
եր: Նա աչքերը բացեց, կրկին լսեց Թոսընի վողբեր-
գական այդ գրուցը:

— Զե, Թոսըն, — ասաց նա, — լսում եմ քո խոսքե-
րը, շատ քաղցր են. պատմիր մեկ-մեկ:

— Ա՛խ, Զասըմ, ինչքան լավ ե զպրոցում սովո-
րել: Ուսուցիչը շատ լավ պատմություններ եր անում
համար, մանավանդ թվարանության ժամերին,

յերը թվերով հաշիվ ելինք անում. ինչքան լավ եր,
վոր չեյի ուզում դասերը շուտ վերջանան:

Այն եր՝ ամբողջ յերեքից-չորս որ դպրոց ելի գը-
նում առանց բացակայելու և առանց ուշանալու:

Մի որ ել հորեղբարո՞ Բողոն իմացավ, վոր ա-
ռանց նրան ասելու վպրոց եմ գնում: Նա կատաղեց,
աչքերն արյունով լցվեցին, քիչ եր մնում ինձ պա-
տառ պատառ աներ՝ սոված գաղանի պես: Ել ինչ ա-
սես, վոր չասաց, Զասըմ, յես անկարող եմ մեկ-մեկ
նրա բոլոր ասածները քեզ պատմել:

Ինձ զցեց գետին, սկսեց վոտքերով, ձեռքերով
ծեծել: Խփում եր կողքերիս, փորիս, մեջքիս: Յես
այնպես եյի բղավում, վոր մեր վողջ բակը լառմ եր
ձայնս, բայց վոչվոք չեր գալիս ինձ ոգնելու, վորով-
հետեւ բոլորը Բողոյից վախենում եյին: Մի որ նա իր
փալանի բամայով ծեծեց մեր տան խաղայկային: Ինչ-
պես ծեծեց ինձ, վոր ուշաթափ յեղա:

— Յեղբայր չունես, — հարցրեց Զասըմը:
— Վհչ:

— Ասում եր, — ախ քաշելով ասաց Թոսընը, — շան
վորդի, քո շուն հայրն ել ալլպես եր անում. Նա քառ-
սուն տարեկան եր, ասում եր, բազեկիները մեզ հո-
մար «լիգան» (լիկայան) են բաց արել, պետք ե զբ-
նանք, սովորենք:

Նա իր փալանը զցում եր և գնում սովորելու:
Լավ եր՝ սատկեց, պրծա. հիմա քոնն ե:

Յես անընդհատ հեկեկում եյի: Ասում եր. — Հիմա
վու մի փոքրիկ փալան պետք ե ունենայիր, գնայիր
աշխատեյիր. ուսումն ինչի՞դ ե պետք. քո պապերն են

կարութեացել թե՞ քո ազգականները, թե՞ քո շեքիսերն
ու փիրերը: Յեթե մյուս անդամ տեսնեմ, վոր վոտք
ես դրել դպրոցի շեմքը, իմացած յեղիր, քեզ պատառ-
պատառ կանեմ:

— Զասըմ, յես վախից դողում եյի, ցերեկվանից
գեռ մի կտոր հաց չեցի կերել:

Մի քանի բոպե անց՝ դուռը թրիկաց, յետ նա-
յեցի, ներս մանողը մեծամորուք և մեծափոր շեխ Ավ-
դոն եր, ճանաշնում ես նրան:

— Բա վճնց, մենք նրա «մրիգներն»¹⁾ ենք: Ա-
մեն տարի հայրս նրան փող եր տալիս, վորպեսզի
նրա և մեր ընտանիքի հոգիները՝ մեռնելուց հետո՝
դրախտում հանգիստ լինեն:

— Զասըմ, յես ուղում եյի վեր կենաց բռնել և
ծեծել, բայց ինչ արած, ուժու չեր հաղթի, անկարող
ելի:

Նա բարենց հորեղբորս, հորեղբայրս մեր տաճ ա-
մենասիրուն քեչաներից մեկը բերեց, փոեց հատակի
վրա, բարձեր դրեց քեչայի վրայից, շեյխը հենվեց բար-
ձերի վրա: Հորեղբարս շեյխի ձեռքը համբուրենուց
հետո, նստեց սեղանի կողքը դրված աթոռի վրա:

Շեյխը նկատեց ինձ, յես դեռ հեկեկում եյի:

— Բազո, ճանդարսությամբ ասաց շեյխը, — չին
դրան ծեծել ես:

— Ծառագ լինեմ, շեյխ իմ, չի ուզում աշխատել,
ոպրոցի համար ե լաց լինում, ուզում ե զնա սովորի:

— Ա'խ, յեթե նրանք չլինեյին, — ասաց Զասըմը,
քորելով մարմինը, հիմա մենք այլ զբության մեջ
եյինք, ասա թուալը ջան, ասա քո ասածները կրակի
պես այրեցին սիրոս:

— Հետո շեյխը ասաց, — շարունակեց Թոսընը, —
այ իմ վորդի, Բողո ջան, այդպես ե, մի բան ասեմ,
չնեղանաս, յեթե ներկա սերունդը չլիներ, մարդիկ ա-
վելի հանգիստ կապրեյին: Այս ասելուց հետո, շեյխը
դիմեց ինձ, — վորդի ջան, զրել կարդալը մեր ազգի
համար մեղք ե, թու կարիք կա սովորելու. քո պա-
պերն են սովորել զարոցում, թե՞ քո շեյխն ու փիրերը,
վոր դու ել հետեւս նրանց: Միթե նրանք առանց
կարդալու լավ չեն ապրել, վոր մենք վաս ապրենիք:
Շեյխը քարոզում եր և մորուքը խառնում:

— Այս, տեր իմ, այդպես ե, — աչքերը կկոցելով
ասաց Բողոս:

— Այս, Թոսըն, ճիշտ ես առում. նա գալիս և
նաև մեր տունը, հենց այդ նույն խոսքերով քարո-
զում ե հորս:

— Այս, Զասըմ, հենց ես իրիկունը, պետք և
քեզ մոտ գալի, պատմեյի քեզ, բայց մոռացաւ
Զասըմը ննջում եր:

Բավականին ցուրտ եր: Թոսընը դողում եր ցըր-
տից: Նա իր գլուխը դրեց Զասըմի ծնկի վրա, կծկվեց
ու քննեց:

Կես գիշեր եր:

Էռւսադեմին, յերբ նրանք ցըտից կուչ յեկածքնած եյին, մոտեցավ մի ավտոմոբիլ: Յերկու մարդքնածներին զրին ավտոմոբիլի մէջ ու տարան:

Նրանք զարթնեցին տաք անկողնում:

Ժպտուն գեմքով մի ջահել աղջիկ մոտեցավ նըրանց և հանելով նրանց ցնցոտիները՝ կարմիր շորեր հագցրեց:

Ո՞վ եր ալդ աղջիկը. յերազ եր, թե իրականություն:

Թոսընը մի քանի անգամ շիեց իր աշքերը. իսկ Զասըմը զարմացած նայում եր իր շուրջը:

—Վարեղ ենք մենք, ուր են բերել մեզ, —հարցըրեց զարմացած Զասըմը:

—Մանկատուն ենք բերել ձեզ, —այ այստեղ ձեզ նման շատ յերեխաներ կան. այստեղ ձեզ կկրթենք, դպրոց կուզարկենք: ԴԵհ, հագեք ձեր կարմիր շորերը, գնանք՝ թեյ խմենք:

Զասմն ու թոսըն իրենց կարմիր շորերով զմայլ վելով՝ հետեցին «սպիտակ աղջկան», վորը նրանց տարավ սեղանատուն:

Վարքան մանուկներ կային այստեղ, տասը, քսան, հարյուր. Զասըմի աչքերը շլացան...

Նրանք նոտեցին սեղանի առաջ...

Յերեկո յեր:

Գալավինսկի փողոցում դարձյալ զբունում եյին Փրասիլի դլայլաները, պահած պարոններն ու տի-

կինները. միայն մի բան եր պակասել. ծառի տակ, սովորական տեղում յերկու յերեխաները չեյին յերեւում:

Ո՞ւր եյին նրանք, այդ վոչվոք չգիտեր. բայց ամենքը զոհ եյին նրանց բացակայության համար...

Իսկ Զասըմն ու թոսընը, այդ որը նստած մանկատան սեղանատունը, հեգերով կարգում եյին իրենց դասը:

—Ամ... ցի... մա... րը... ըն (մենք եւ մարդ ենք)



Տ. Ա. Ա. Մ. Ե. Զ. Ա. Ա. Ի. Ի. Լ.

Ս Ա Լ Ի Ն Ի Ն

Ավ լուսապայծառ, մեր բազմահանձար,
Անչափ սիրելի ընկեր Ստալին,
Վաղուց յեւել ենք զնդանից խավար,
Չգտում ենք բարձր լեռան կատարին:

Ո՞, աշխատավոր ժողովուրդներին
Թոփչքի կորով, թևեր տվիր դու.
Մենք տեր ենք հիմա մեր վեհ լեռներին,
Դաշտերին անծիր, աշխարհին խնդուն:

Պայծառ առաջնորդ, դու մեղ տանում ես
Բարձունքից բարձունք, դադաթից գաղաթ:

Սիրտ—պարտեղներում ու մեր հոգում մեծ
Ծաղկել են հաղար յերջաճնկության վարդ:

Մեր անծայրածիր սահմանից այն կողմ
Կյանքը զնդան ե—մութ, խավարակուռ,
Գործազուրկ մարդուն, զյուղացուն անհոգ
Խեղդում ե հոգուր—ժանտ ամենակուլ:

Այնտեղ—դաշտելում, կանաչ արտերում
Մարդն և տառապում ու մնում քաղցած,
Քո ձայնն և հնչում նրանց սրտերում,
Սրտերում ցանկուտ ու ալեկոծված:

Ու հիմա այնտեղ անվերջ աճում և
Գալիք մարտերի հողմը խելազար.
Մի որ նրանք ել քո կոչով կենեն,
Դրոհի կերթան հնդի, հաստատաքայլ:

Գրոհի կերթան բիրտ կարգերի գեմ—
Վորպես շանթածին, փոթորկարեր ամպ,
Ու հին աշխարհը հիմքից կքանդեն
Քո մեծ, իմաստուն առաջնորդությամբ:



ՅԵՐԵՎԱՆ

Ահա Յերևան քաղաքը մեր նոր՝
Շինված պողպատից, քարից ու ցեխից.
Ահա և նրա բանակը հզոր,
Կոփիված բանակը մեծ աշխատանքի:

Այսուեղ և նաև տեխնիկումը մեր,
Ուր վոր քուրդ մանուկն ուրախ, խնդավառ
Մտած գիտության անծայր ծովի մեջ՝
Կոփիվում և մեր նոր որերի համար:

Այսուեղ և և քուրդ կինն անկաշխանդ,
Վորն յեկած մուայլ կենցաղից տաղտուկ՝
Յերգում և ուրախ նոր կյանքն ազատ—
Խորհրդային վառ արևով խնդուն:

Մինչ Սլաքյողից կանչում են նրանց՝
Սովորողներին մեր ասույդ, բաղում,—
— «Յեկեք, շուտ յեկեք, կարոտով անանց,
Կոլխոզնիկները ձեզ են սպասում»:

Ու թե են առնում տղա ու աղջիկ,
Կարգում ու գրում, սովորում անվերջ.
ԶԵ վոր նոր ուժ և հարկավոր կյանքին,
Լույս տարածել քուրդ կոլեկտիվի մեջ:

Ու Յերևանը, դարբնոց մի պայծառ,
Ուսմունքով զինված անմահ լենինի,
Լույս տալով մանր ազգերի համար՝
Թոշում և ճամբով մեր վառ գալիքի:

Զնդա, Յերևան, Սլաքյողի պես
Բարձրացիք հպարտ, հղոր, աննման.
Մենք մեր կրծքերով կպաշտպանենք քեզ՝
Կովի գնացող զինվորի նման:



Յեզ գծկույն եր յերկինք, ամպամած, անարև,
Յեզ հոգնած եյինք մենք, և քաղցած և ուժատ...
Բայց փախչում եյինք միշտ՝ անկայուն, հեինե
Լեռներով, դաշտերով, ճամբերով խիստ դժար...

Այս դժբախտ, արյունոտ որերից դժգոհած
Յելան բանվորները, գյուղացիք կիսամերկ...
Յեզ նրանք հաղթեցին, բացվեց նոր Լուսաբաց.
Յեզ յեկավ փրկարար և կարմիր Հոկտեմբեր...

.., իսկ հայրս՝ ուրախ դուրս թռավ մեյքան,
Կանչեց. «Վորդի ջան, դարդից ազատվանք.
Ել մեր, դաշտերը չեն մնա խոպան,
Շուտով կունենանք և մալ և տավար...»:

Սարերը փախած մարդիկ ցած իջան,
Ու խոր ձորերից, անտառից յեկան,
Գյուղերն ել՝ ինչպես շարե շար մարջան,
Յելան ծաղկեցին ու կանաչ հագան:

Ու հայրս ասաց. «Գնա, իմ վորդի,
Կարդա, սովորի, կարգին ուսում առ,
Ել չեք թափառի տկլոր, անոթի,
Ել չենք մնա մենք առանց կամ, ջարջառ»:

Յեզ գիրք ու գրիչ դրած թեվիս տակ՝
Դպրոց վազեցի ընկերներիս հետ,
Աշխատեցի միշտ սիրով, անդադար,
Վոր ընկերներիցու յես չմնամ հետ...

Ի Մ Ո Ր Ե Ր Ը

Յես անցա դաշտերով՝ ավերակ և անմարդ,
Յես անցա գյուղերով՝ փլատակ ու զարհուր,
Ինձ տանում եր հայրը՝ սարսափած ու շվար,—
Ու փախչում եյինք մենք, — չգիտես դեպի լուր...

Իմ աչքերն արցունքով, արյունով լի եյին,
Իմ շուրջը՝ դիակներ, ապա մահ և անկում,
Յեզ շները անտեր՝ նստած կտուրներին՝
Կաղկանձում եյին միշտ — վողբալից ու անքուն:

Մենք անցնում եյինք լուռ՝ ամայի դաշտերով,
Ուր արտերը անջուր՝ չորացել եյին վաղ,
Ուր արյունը գեռ տաք՝ կանգնել եր լճերով,
Ուր մահն եր դարձել տեր և հնձել կյանքը վարդ:

Հիմա մեր գյուղում կազմել ենք կոլխոզ,
Հալալ աշխատանք տանում միասին,
Ամեն մեկ ունենք մեղ համար աշխոր,
Զուգել են դաշտը՝ արակտորն ու մաշին.

Մախմուր կանաչն և փռված ամեն կողմ,
Խաս-խաս շրեր են հագել լեռ ու ձոր,
Նոր կյանքն և ծաղկում մեր աշխատանքով
Ցեղ մեր քրտինքով՝ առատ, լուսածոր:

Իսկ յերբ յերեկոն իշնում և—գալիս,
Հավաքվում ենք մենք մեր նոր ակումբում,
Մեծ Ստավոնը ճառ և ասում մեղ.
Կենինն ել կանգնած՝ տսիս լուս հսկում:

■

Ու լսում ենք մենք, սովորում կը կիս
Դասակարգային կովի գպրոցում,
Վոր կերտենք ամուր մի կյանք թանգարին.—
Նոր անդասակարգ, ազատ մարդկություն—

□

ԶԱՆԳԸ

Թփում և վերջին ժամը վերջապես
Ցեղ լրանում և արդեն հին տարին,
Թոչում և բովեն, թոչում և փնչպես,
Ժամը ժամապահ կարմիր զինվորի:

Մինչդեռ զանգը մեղ՝ ավետում և—կյանք,—
Կյանք—հզորության և հաղթանակի՝
Ցեղ հին աշարհը՝ մի վերջին անգամ
Ճգնում ե, վոր իր ծեր կյանքը փրկի:

Ցեղ տեսնում և նա բանվոր—գյուղացուն՝
Զինված ու պատրաստ մի մարդու նման,
Հաղթանակների հավատով լեցուն՝
Պատրաստ և վերջին մարտին, մաքառման,

Ցեղ հին աշխարհի սիրաը կծկվում,
Մարում և ահեղ և ընկնում ուշքից.
Կանչում—«բռնեցեք, մի և ինձ խեղզում,
Կոկորդն իմ՝ մի և ողակում ուժգին»:

...Յեզ զանգն և զնդում պայծառ նոր տարվա—
Հեղափոխության վերելքի թափով.
Յեզ հին աշխարհը՝ տադնապից տարված՝
Իր գերեզմանն և տեսնում սարսափով:

ՄԵՆՔ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Դեռ մանուկ եյի, յերբ յես տտեցի
Հին կյանքն ու նրա սուրբսուր փշերը,
Դեռ մանուկ եյի, յերբ յես սիրեցի
Աղատությունն ու նրա վարդերը:

Բայց քո սիրածը ով եր տալիս քեզ
Առանց պայքարի և առանց կռվի,—
Հարժւստը, արքան, թե շեյխը լակեյ,
Վորոնք միասին մի մարմին եյին:

Մենք յելանք անահ մի որ նրանց դեմ
Յեզ աապալեցինք գանն ու վոսկե թագ՝
Կոիկ մղելով մինչե լուսադեմ,—
Մենք հողի մարդիկ, բանվորի զավակ...

Մենք, հողի մարդիկ, բանվորի զավակ՝
Աձեցինք արագ, բարձրացանք անդուլ:

Մենք, առանց արքու, առանց շեյխ ու թագ,
Մենք մեր դիրքերում զգոն ու արթհւն...

Յեվ դասակարգի կամքով հաղթական
Կանգնեցինք նոր տուն, նոր գյուղ ու քաղաք,
Կերտեցինք զավոդ, հաղար գործարան,
Յեվ... յերկաթակուու մի կարմիր Բանակ:

Նա, վոր հոկում ե մեր սահմաններում,
Մեր ջրանցքներին և դոմիաներին,
Մեր համայնավար դաշտերին վարուն,
Մեծ հայրենիքին մեր խորհրդային:

○

Զ Ի Ն Ե Ն

Դու սեաչյա, կեռ ունքերով, մեր Զինե,
Ասմար ու թուխ, վառ աչքերով, մեր Զինե,
Զեյրանի պես ման ես գալիս արտերում
Քաղցրահնչյուն նոր յերգերով, մեր Զինե,

Յերբ գնացինք բոստանները համայնքի,
Խսձ պատմեցիր ցամս անցած քո կյանքի,
Թե վհնց բռնի ուզում եյին տալ մարդու
Յեվ մատնեցին քեզ ցալի ու տանջանքի:

Նմանվում ես թիթեռնիկին դաշտերի,
Զի լրացել գեռ տասնըչորսը քո տարին:
Տենչում ես գու սովորել ու սովորել,
Հասնել բարձր գիտության սեղ կատարին:

Զգացի յես քո կոփվը հորդ գեմ,
Աքծըվի պես ուզում եյիր ծվատեր,

Ուզում եյիր, վոր չտային քեզ մարդու,
Հին որենքով չարչարեն ու նախատեն:

Յես զգացի տագնապները պայքարիդ,
Վոր չտային քեզ տասնըչորս վոչխարի.
Լալիս եյիր, վոր աղաթով չծախեն:
Այլ՝ վոր քեզ տան խորհրդային աշխարհին:

Չարչարվեցիր բայց դու յերկար ժամանակ,
Ընկճվեցիր սև աղաթի վոտքի տակ,
Ու մի որ եւ սև աղաթը կոխելով,
Պիռներներին ասացիր դու համարձակ:

—Տեք ինձ գլորք, տվեք ուսում, ձեզ մոտ գամ,
Յես եւ լինեմ կոլեկտիվի ձեր անդամ,
Վոր վոչ մի բան մութ չմուա ինձ համար,
Յես փոքրիկ եմ, կյանք եմ ուզում մանկական:

Յեվ քեզ զվարթ պիռներները կանչեցին.
—Յեկ, դու փոքրիկ, մեր նոր ընկեր քաջածին,
Ինչ վոր սիրտը ուզում ե՝ յեկ, մենք կտանք,
Հերիք, ինչքան սիրտդ, հոգիդ տանջեցին:

Յեվ այդ որից, յերբ անցան չորս տարիներ,
Համայնքի մեջ մտավ սիրուն մեր Զինեն,
Հիմա այնտեղ աշխատում ե յեռանգուն,
Իրա բախտը իր ձեռքերում մեր Զինեն:



ԻՄ ՄԱՆԿԱՆ ՀԵՏ

Իմ սիրուն բալիկ, իմ ծաղկած գարուն
Դու խորհրդային արևի ներքո
Հասմակ ես քաշում ուրախ ու ցնծուն,
Դու վաղվա հերոս, մարտիկ կրակոտ...

Բայց մեր Յերկրից դուրս—աշխարհում ուրիշ,
Ուր բալիկներ կան նույնպես քեզ նման,
Ուր բանվորները անվախ, քաջարի,
Պայքար են մղում տերերի դիմաց—

Թո ընկերները դեռ խեղճ են, անշող,
Դեռ ձյուն ե այնանեղ և գաժան ձմեռ...
Դեռ նրանք ցրտում անհաց ու անշոր
Ապրում են տրտում, խեղճ ու կիսամեռ....

Նրանց համար չեն մրգերը պես-պես,
Շողշողուն շողերն ու ծաղկած գարուն,

Երջում են նրանք գորշ ստվերի պես,
Վորբերի նման անտեր, անանհւն...

Իմ սիրուն տղա իմ ծաղկած զարուն,
Շուտով այնտեղ ել կլինի կոփվ,
Շուտով այնտեղ ել կթափվի արյուն,
Յեկ բանվորների ուժը վիթխարի,

Նրանց համար ել կրերի անշուշտ
Կարմիր Հոկտեմբեր՝ ինչպես մենք բերինք.
Կքշի ուժն այդ բուրժույների կուշտ,
Ինչպես մենք արինք մեր Հոկտեմբերին,

... Կերպեն նրանք ել քեզ պես խնդագին,
Հասակ կքաշեն նրանք ել քեզ պես,
Կաշխատեն ուրախ և կապրեն հանգիստ,
Մեր Յերկրի զվարթ մանուկների պես...

ԱԼԱԳՅԱԶԻ ԼՃԱԿԸ

Ալագյազի բարձրաքանդակ սեղ լանջին
Կապուտագեղ մի լճակ և ծիծաղում.
Արծաթավառ ձյունի նման միշտ վճիռ՝
Յերկինքն իր մեջ՝ ծփծփում և ու խաղում.

Ու շատ անգամ լճակումն այդ մշտաջինջ
Տեղացել են վարար՝ անձըն ու կարկուտ,
Փոթորիկներ ու ամպրոպներ ավերիչ—
Բնության այդ տարերքները ահարկու:

Թոչվորները լեկել նայել ու անցել
Ափսոսացել լճակի ջուրը մաքուր,
Ափսոսացել, վոր ծարակ են մնացնել,
Վոր չեն տարել գյուղը— ջուրն այդ յերկնագույն.

Լճակը լուռ, որտակարհու ու կարկամ
Նայել և այդ քոչվորական թափորին,

Աւ ստորեւ—մի ու ահա պիտի գան
Դյաւդ հիմնելու իր ծիծաղկուտ ափերին:

Մինչ նորանոր քոչվորներ են զալիս միշտ
իւ յեղբերին կոներ զարկում ու գնում.
Յեվ նա լոին մորմոքում և դառնավիշտ,—
—Ա՛խ, հերիք ե, վորքան քոչվոր եք մնում:

Դյուդ հիմնեցէք ափերին իմ ծիծաղկուն,
Դարձեք համայնք, քաջարազուկ արտավիր,
Վոր միասին առավոտից իրիկուն
Ժպտանք իրուր սրտաբաց ու բախտավեր...

○

ԿՈԼԽՈԶԻ ԱՐՏԸ

Դարնան լույսով հերկն ե փայլում,
Պալզում ե լույսի պես,
Ու վուկելառ սերմն իմ սրտում,
Կանաչում ե վարդի պես:

Ի՞նչ անուշ և արտի մոտից
Թռչող քամին, սուրացող
Ինչքան քաղցը ե կոլխոզ կյանքը,
Մեզ կյանք ու խինդ, սեր տվող...

Արդեն սերժլ պահ ենք տվել
Ես հողերին՝ յերդելով,
Յեվ ինամքի առատ անձրև
Շաղ պիտի տանք մենք սիրով:

Մեկ ել տեսար արտը խնդաց
Լիք հասկերի աղմուկով,

Թւ պահեստը նորից ցնծաց
Յորնի, գալու խշոցով:

Ի՞նչքան քաղցր ե շունչը հողի,
Ակոսները ու հերկի,
Ի՞նչքան քաղցր ե շունչը հողի,
Գալն ու հունձը կովսովի:

○

ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻՍ

Հան, նորից յեկան մայիսյան որեր,
Զորս կողմ բացվեցին գույշն-գույն ծաղիկներ,
Դու, կարմիր մայիս, ուրախ ես, պայծառ,
Ի՞նչպես Միության ազգերը հազար:

Յերբ գու գալիս ես, սիրելի մայիս,
Տոլում են շողքերդ հանդերում բերքի,
Դու մեզ վոսկեվառ որեր ես տալիս,
Դու տոն պայքարի և աշխատանքի:

Ի՞նչպես սեասիրտ ու ցրտին ձմեռ՝
Մենք դուրս քշեցինք կեղեքողներին,
Մերն են գործարանն ու բերրի հողեր,
Մենք հիմա տեր ենք և հարվածային...

Բայց մեր Յերկրից գուրս՝ մեզ այնքան մոտիկ՝
Ելի մենք ունենք յեղբայրներ բազում.

Նրանք ազատ չեն... բայց վորպես մարտիկ՝
թւնեն յերկաթե և' կամք և' բազուկ...

Նրանք ել կելնեն... շուտով, մեղ նման
կը քշեն ցեցին, հարուստին, աղին.
Երջում և այնուեղ լենինը անձահ—
Յույց տալու նրանց պայքարի ուղին...

... Յեվ նորից կը գան մայիսյան որեր,
Չորս կողմ կը բացվեն գույն-գույն ծաղիկներ
Ավելի ուրախ կերպենք մենք այն ժամ—
Ծուանց տերերի և արքա դաժան...

□

ԱՄՊ ՈՒ ԱՆՁՐԵՎ

Ե՞յ, անվ ամպեր, թռւխ ամպեր,
Մեր անսահման արտերին
Թափեք շիթեր զովաբեր,
Հեւլս տվեք մեր սրտերին:

Թափեք, լցընք գուք չորս դին
Համայնական խնդություն,
Վոր նոր գյուղը աշխատի
Ժիր մրջյունի ողես անդուլ:

Թափեք, ցողեք, վոր խնդան—
Հերկ ու արոտ, հանդ ու արտ,
Վոր մեր բերրի հողը տա
Ծիլեր՝ կանաչ ճառագայթ:

Ինչ հույսով վոր ցանել ենք՝
Լույն հույսով ել մենք կզանք,

Վոր հասուն հասկը հնձենք
Բազուկներով ամբակամ:

Ե՞ր, սեվ ամպեր, թհւիս ամպեր,
Մեր անսահման արտէրին
Թափեք շիթեր զովաբեր,
Հնւյս տվեք մեր սրտեթին:

Գ Ա Գ Ե Ն

1

Հինգ գեյրա հագոծ, թամազին կապած,
Նախշուն գուլպայով, կոնտուրա վոտքին.
Մեր ջահել Գողեն ուրախ, սրտաբաց.
Համագումար եր յեկել հրճվագին...

Յերբ վերադարձավ նա գյուղը իրենց
Քաքաքից տարած իր թարմ հուշերով,
Իր ծանոթ կանանց իսկույն հավաքեց,
Յեվ պատմեց նրանց յերկար ժամերով:

Պատմեց կովոսովի ոգուտի մասին,—
Թե ինչքան լավ և ձեռք-ձեռքի տված
Աշխատանք տանել, լինել միասին,
Հսոնել ունեոր կյանքին յերազած...

2

Հաղիվ տասն որ եր անցել այդ որից,
Յերբիր գյուղ մտան մեքենա, տրակոտ,
Կաբծես Գողեյի սիրուը արելեց
Մայիսյան պայծառ գարունքա մի որ:

Յեվ դարձավ Գոգեն գհկավարուհի,—
Մանկական մսուր, դպրոց բաց արագ,
Կովեց կուլակի, շեյխերի ղեմ հին,
Բեզի, աղայի դեմք անիրավ:

Սիրեց նա գրքեր, «Ռյա Թագա» կարդաց,—
Վորպես ուղեցույց պայքարի ճամբին
Գոգեն դրանցից անջափ գոհ մնաց.
Յեվ ժպտաց ինչպես գարնան շեկ արփին.

Յ

Բացվել ե որը շեն սրտի նման
Հերկած հողերի վրա կոլխոզի,
Կոլխոզնիկ կանանց վրա ժրաշան,
Վորպես մի նշան բախտի, մուրազի:

Ո, հատիկները վոսկի ցորենի,
Հազարով, բյուրով ցանում են նրանք,
Յեվ աշխատում են՝ ինչպես մրջյունի
Խմբերը աշխույժ—արևոտ ամռան:

Մինատնտեսը կանգնել ե մինակ՝
Տխուր, մտածելու ու նայում հեռվից,
Կարծես չինի կապույտն յերկնի տակ՝
Կարծես մութ մաղեն արեից, վերից:

Իսկ մյուսների, Գոգեյի վրա՝
Մարջանի պես վառ շողերն են խաղում,
Ծփում են հովից թամազեն, դեյրան,
Աշխատանք կոչված այս ուրախ խաղում:

Յեղավ աշունը բերքառատ, հասուն,
Բերեց կոլխոզին և՛ բերք և՛ բարիք,
Կանգնել ե Գոգեն ճակատը շողուն,
Նման կովից հետ դարձող մարտիկի...

Նա, վոր քյուրդ գյուղում նոր կոլխոզ հիմնեց,
Նա, վոր մեծացրեց կոլխոզն որեցոր,
Նա, վոր իր պարտքը պատվով կատարեց,
Յեվ դարձավ յերդիս հնրոսք այսոր:

Զ. Գ Ե Ն Զ Ո Յ Ի Ն

Սիրելի ինկեր, ահա քեզ զիրք ու թերթ ու մատյան
Աստղաշար հուլունքի պես զողված միմյանց,
Ահա և տեխնիկումը, վորպես լուսասփրուռ փալուս,
Ուր գնում ես դու միշտ այնքան սիրով...

Նայիր գրքերին մաքուր՝ ցուցափեղկերում բազմած,
Վորոնք շողողում են մեր զյուղում հիմա,
Մինչ խավարը կորամեջք—սև ժառանգը դարերի—
Շտապ նահանջում և յետել սարի:

Դու, սիրելի տեխնիկում, տուն գիտության դու պայծառ,
Հենինյան կամքով դու այստեղ բարձրացար,
Քուրդ մանուկների համար զարձար դու մեծ
ափոփանք...

Դու տալիս ես մեզ նոր մարդ և կադրեր միշտ
նորանոր,


Դու նոր գյուղին, կոլխոզնիկին ամեն որ
Մի նոր մարտիկ, մի նոր թև, մի նոր ուժ ես
հասցնում,

Դու թանգարին իմ սեր, դու պայծառանուն...

Ահա և «Ծյա-թաղան», մի նոր լուսարձակ, նժար,
Վորն ուղի յի ցույց տալիս քեզ ամեն ժամ,
Նրա եջերում—քեզ հետ Ղեկավարն և խոսում միշտ,
Այնտեղ պայքար կա աննահանջ և անվիշտ:

Սովորիր դու, ընկեր իմ, սովորիր ու գրիր դու,
Սովորիր ու գործիր և յեղիր արթուն,
Ինչպես նա յի,—Սուածնորդը մեր մեծ, պողալատակամ,
Նա—կոփած մարտերում բյուրավոր անգամ...

○



ԶԱՐԴՈՒՄ ԳԵՆՅԱԾ

Ն Ո Ր Գ Յ Ո Ւ Ղ Ը

Գարուն եր, աշխատանքի որ եր: Արոտները, դաշտերը զարդարված եյին գույնզգույն ծաղիկներով ու անաչոփ: Սարերի զագաթների ձյուները հալվում ենին, փոքրիկ առվակներ կազմում, միախառնվելով կը քչան աղբյուրների հետ՝ գետ եյին զառնում:

Սարյակները, ճնճղուկների հետ միասին յերգում եյին գարնան գալուստը: Յերկինքը պարզ եր, կոռունկների հաճելի ձայնն եր լսվում: Սարի լանջին հովիվը սրինդ եր նվազում՝ հուզելով իր հոտին ու մոտակա դաշտում աշխատող չթվորներին: Գյուղի ջահել հար-

սերն ու աղջիկները, կժներն ուստած, դեպի մոտակա աղբյուրն եյին շտապում: Նրանք հրում եյին միշտանց և ծիծաղում, իսկ մի մասն արդեն ջրով լիք ամաններն առած՝ վերադառնում եյին գյուղը:

Պառավելերի մի մասը խնոցի եր հարում, վաճանք գուլպա եյին գործում, վոճանք ել իւլի մասում:

Մի տեղ հավաքված՝ առուցյա տղամարդիկ յերկրագործական ջարդված գործիքներն եյին նորոգում, կամ նորը շինում: Գյուղում աղմուկ եր, աշխատանքը յեռում եր: Պարապ մարդ չկար:

Գյուղի նոր դպրոցի գուանը հավաքված հարյուրից ավելի աշակերտները խաղում և աղմկում եյին:

Զանդը տվին. աշակերտները ներս մտան:

Գյուղից ներքեւ՝ փարթամ, պես-պէս ծաղկներով մի շայիրի վրա գառներն եյին յերբեմ թոշկոտում իրար վրա, կամ հոտ առնում միմյանցից, իսկ մի քանի փոքրիկ ուլիկներ անընդհատ խաղում եյին:

Նայելիս յետ հիշեցի իմ հին որերը, վորովնեսե մեր գյուղում յետ շատ եյի գառներ արածացրել:

Գառնարածը միջահասակ, սպիտակ մորուքով ժի ծերունի եր. յետ մոտեցա նրան և բարեկցի:

—Բարե, —պատասխանեց ծերունին:

—Ի՞նչ ե, ծերունի, —ասի, —տղա չունես, վոր գառներն արածացնի:

Նա ծիծաղեց, հետո լրեց ու սկսեց ծխամոբճ լցնել, գլուխը շարժեց և սկսեց ծխել:

—Այս, գառնարածն ել, հովիվն ել յետ եմ: Իմ որերս այսպիս եմ անցկացրել, այսպիս ել անցնելու

յեն, յերտնի ձեզ, վոր սովորում եք, գիտություն եք
ձեռք բերում:

Մեր խոսակցությունից քիչ հետո դպրոցի զանգը
ովին, մենք մոտ եյինք դպրոցին, գառները վեր թուան
զանգի ձայնից: Ծերունին առանց խոսելու՝ ինձ թողեց
ու հետևեց գառներին:

Հանկարծ ներքեց ինչ-վոր ձիավոր յերեաց: Նա
յեկալ և դպրոցի առաջ կանգնեց: Աշակերտներն սկսե-
ցին աղմկել, — Խոստամն ե, Ռոստամը:

Խոստամն իր հետ հարյուրից ավելի քրդական
«Թյա Թազա» թերթ եր բերել: Նա բարեկց լուսրին,
թերթերը հանձնեց ուսուցչին և գնաց գյուղի մեջ:
Յես Խոստամի մասին շատ բան եցի լսել, բայց նը-
րան անձնապես չեցի տեսել:

Քիչ հետո զնացի Խոստամին այցելելու:

Նա նստած եր Գյուղխորհնողի գրասենյակում: Բա-
րեկցի:

Ինչ-վոր թուղթ կար ձեռքիս. նա խնդրեց, վոր
այդ թուղթը տամ իրեն. յես ավի: Կարդալուց հետո,
եր աջ կողմի պատից կախած հեռախոսի փողը վերցը-
րեց և սկսեց խոսել:

— Այն, այն. Մուսա, դժւ ես. յես շրջանից նոր
վերադարձա. հայտնում եմ քեզ, վոր շրջկոմը համա-
ձայն ե մեր ասածին. յերեկոյան ժողով եմ անելու.
իմացիր, վոր քո ներկալությունն անհրաժեշտ ե. ու-
րեմն անհամբեր կապասեմ քեզ:

Հեռախոսափողը տեղը զնելուց հետո, գիմեց ինձ.

— Համեցեք, նստեք: Ինչո՞ւ եք այդպիս կանգնել.
Մենք նստած եյինք միմյանց գեմ:

Խոստամը գեղեցիկ եր, բարձրահասակ:

Մի ինչ-վոր թուղթ ձեռքին՝ սկսեց կարգավ, հե-

տու բարկացած՝ թուղթը ծալեց և գրեց սեղանի վրա:

— Դժվար ե, — ասաց նա, — յերբ պետք ե կուլակ-
ներին արմատահան անենք:

— Ի՞նչ խաբար ե, ընկեր Խոստամ, — հարցրի յես:

— Մի քանի որ սրանից առաջ յես նամակ եյի
գրել Բաթումում աշխատող մեր ընկերներին, վոր գա-
յին՝ միասին կոլխոզ կազմակերպեցինք: Կուլակներն
իմացել եյին այդ լուրն իմ նամակից առաջ և այս-
պիսի պրովակացիա ապահել, թե «Ավ վոր կոլտնտե-
սություն մտնի, նա գառնալու յե կազյոննի անձնա-
վորություն, նրա աշխատանքի յերեք քառորդ մասը
հանձնվելու յե պետությանը, իսկ ապրելու բնակարա-
նի համար կանխիկ գրամ են ուզելու և այն»:

Բաթումի մշակ ընկերները գրել եյին. — «Այն,
մենք գալու յենք, մենք վատ ենք ապրում, փալանի
տակ վթել ե մեր մեջը»:

Խոստամն ել ավելի հուզվեց, նա ամբողջ ուրը մը-
տածում եր կոլտնտեսություն կազմակերպելու վրա:

Խոստամն իր աշքի տոշե տեսնում եր հարեան
գյուղերում կազմակերպված կոլտնտեսությունները,
վորոնք մի յերկու տարի գոյություն ունեյին, բայց
տնտեսապես բավականին զարգացել և առաջադիմել
եյին:

¶

Արել մայր եր մանում. նրա կարմբավառ ճառա-
գայթները քիչ-քիչ նվազում եյին. չթվորները դաշ-
տային աշխատանքից վերադասնում եյին տուն: Հոգ-

Նած յեղները դանդաղ քայլում եյին Նախիրն եւ
գյուղը մտավ:

Մոտ կես ժամից հետո զյուղը հանդարտվեց:
Մենք ուղարկում հաց եյինք ուտում: Հանկարծ զոտոր
բացինց, Մուսան ներս մտավ. բարեկուց հետո նա ել
սկսեց մեղ հետ հաց ուտել:

Մի քանի բոպեյից հետո հալանեցին մեզ, վոր
գյուղացիք հավաքվել են, պետք ե գնալ և ժողովն ըս-
կըսել:

Քնացինք ժողովի:

Փողովարանը լեցուն եր տղամարդկանցով և կո-
ռանցով:

Խոստամը հայտարարեց ժողովը բացված: Ժողովի
հախագահն եր ստաժավոր հին հովիվ Զատկե-Հասոն:
Զեկուցողն ինքը՝ Խոստամն եր:

Նա խոսում էր ժողովրդական կյանքի մասին, վո-
րոնք կուլտուրական կյանքից կտրված թափառում
եյին լոկ:

Հետո Խոստամն ավելացրեց. — «Յես չեմ ուզում
շատ խոսել, զուք լավ գիտեք, թե ովքեր են մեր զա-
ռակարգային թշնամիները զյուղում. նրանք վնասում
են, խանգարում մեր աշխատանքները: Դեռ անցյալ
տարի յել զուք քոչվորական կյանքով եյիք ասլրում
Արագածի լանջերում: Դուք գիտեք, թե մեր լերկիրն
ինչքան ե առաջադիմել. մենք սոցիալիզմ ենք կա-
ռուցում մեր յերկրում, առաջ են գնում մեր կարմիր
քաղաքներն ու գյուղերը»:

Մի քանի բոպե ափրող լսությունից հետո, Կու-
ռակ Ավոյի և Փիր Բաղոյի աղենատներն այնտեղ հ-

լին: Նրանք թաղնվել եյին և աչքերով խոսում
միմյանց հետ:

Խոստամն իր ճառը վերջացրեց հետեւալ խոսքե-
րով.


— Ընկերներ, կյանքն առաջադիմել ե, մենք յետ
ենք մնում. հետաքրքրվեցիք ձեր վրջապատով, հա-
րսկան գյուղերի կյանքով: Հպեաք ե իզուր տեղը ժամա-
նակ անցկացնել. յեկեք մեր գյուղում կոլտնտեսու-
թյուն կազմակերպենք. ալսպես և ասել մեզ ընկեր
լենինը:

Խոստամից հետո խոսեցին պառավ Սասունը,
Մուսան:

Յերեկոյան քսան տնտեսությունից կովոզ կազ-
մակերպվեց Արաք գյուղում:

Փիր Բատընը, կուլակ Հասոն և շեյխ Արաքը
մինչեւ առավատ չքննցին:





Ա Հ Մ Ա Գ Ե Մ Ի Բ Ա Զ Ի

Գ Յ Ո Ւ Լ Ե Ն

Գյուղեն առաջ աղքատ ու խեղճ՝
Դառն արցունք եր թափում զիշ-զիս՝
Վոչինչ չուներ աշխարհի մեջ—
Յեվ որը նեղ, և անհանդիսա:

Յեվ տիրում եր և մտածում
Նման անհույս, տիմուր վորրի,
Քանզի տունն եր նրա լիցուն
Մանուկներով մերկ ու բոբիկ:

Յեվ որն յեկավ յերջանկավետ,
Նախագահը կոլեկտիվի

Խոսեց չարքաշ Գյուղնյի հետ,
Յեվ ուժ տվեց նրա թկին:

Ասաց, — Գյուղեն, այ անդուռման,
Յեվ կոլեկտիվ արի տանենք.
Դատիր, բանիր մարդու նման,
Յերեխանցըդ քըջից հանենք:

Լսեց Գյուղեն նախագահին
Մի աչքն արցունք, մեկը ծիծառ,
Դիմում տվեց կոլեկտիվին,—
Խեղճությունից իսպառ պրծավ:

Հիմա Գյուղեն պինդ նվիրված,
Հարվածային աշխատանքով՝
Ապրում ե լայն ու սրտարաց,
Ուրախ սրտով, ուրախ յերգով.

Յ Ե Ր Գ

Արևակեպ Շամ քաղաքում,
Մոտիկ կանգնած պատուհանին,
Խեղճ Ռեհանը շղթայակուռ՝
Նայում է մեծ մեր աշխարհին:—

«Շերոտանի¹⁾ աստղն է պայծառ,
Տեղ աղաս են այնտեղ կանայք,
Շամ քաղաքում արևակառ՝
Կինը չունի վոչ սեր, վոչ կլանք»:

Վողջույն, վողջույն, հավալ²⁾ Ռեհան.
Լսիր մեր նոր լերգերը տաք:
Վորոնք զրված են ջերմ ու վառ
Շերոտանի արևի տակ:—

1) Խորհրդային ժերդիր

2) Հնկեր

Դրում ենք քուրու կանանց մասին
Ազատության, վորը այսոր
Պայծառ ժպիտն իր լերեսին՝
Կոռում ե իր բախտը հղոր:

Ազիզ հավալ, խուշկե¹⁾ Ռեհան,
Ահա ձախս, լսիր դու ինձ,—
Կովկիր դեմք սև բոնության,
Հեռու ընկած մեր սահմանից:

Քիտեմ այնտեղ, Քրդստանում,
Հաղար ճորտի, ինչպես վիշապ՝
Դեռ ճգմում ե սև ճանկերում —
Բոնությունը իր խստությամբ:

Բայց Շերոտան՝ թիկունքն է քո,
Վողջունում ե նա քեզ հպարտ—
Բանվորներով ու բանակով, —
Շերոտանից մինչև Բաղդատ:

Արևակեպ Շամ քաղաքում,
Դու չարչարվող հավալ Ռեհան
Մեղ մոտ ըլուն²⁾ լերգում ե քո
Կովի լերգըն ու աղատության:

1) Քույր

2) Արնգափող

Յերգում և ջերմ և վողջունում
Պոետ Նուրին պայքարը քո.—
Մերկ ճորտերին ճնշված ու թույլ,
Վորոնք գեռ կան լծի ներքու:

Վորպես հրե կարոտախինդ,
Շառագունած այդը վորպես,
Վողջունում և Նուրին անվիշտ.
Ճորտ լերկը բներն արևակեց:

Յ

Գ Ն Զ Ո Ւ Լ Ի Ն

Գնչուհի ես, սիրուն Զլֆե,
Բանաստեղծ ես գու վոսկեբառ,
Խոսքը քաղցըը ու արև՝ ե,
Յերգ ու խաղը կրակից վառ:

Քո հասակը՝ վայրի ռեհան,
Պայծառ գեմքով, կրակ աչքով,—
Բարով յեկար զու Յերևան,
Գնչուական ազատ հոգով:

Յերգեցիր դու իմ պատի տակ,
Դեմ ու գեմն իմ պատուհանիս,
Զայնը այնպես քաղցը ու պարզ,
Ինչպես քնարն Ահմադ խանի:

Սրտիս խորունկ գաղտնաբանում,
Անհանգչելի հուշի պես վառ—
Մնաց քո յերգը թախծանուշ,
Յերգը թովիչ ու վոսկեբառ:

Թու լեռդի մեջ լես զգացի,
Վոր կա մի մեծ, խորունկ կսկիծ,
Վոր ձգտում եր տենչով անծիր
Դուրս գալ մթին, հին աշխարհից:

Ու գուրս լեկար... Թողեցիր գուր
Զեռք կարկառեն ամոթալի.
Բացեց քո դեմ աղատ մի դուռ—
Դործարանը մեր թնդալի...

Քեզ գըավեց լուսն անսպառ,
Շերուտանի¹⁾ արևավոր.
Հոգիդ լցվեց անվիշտ ու վառ—
Նոր լերգերով հազարավոր:

Հանիր վերջին միտքը քո հին,
Վոր գցում եր քեզ դռնե-դուռ
Յերդիր յերգը նոր աշխարհի,
Եեղիր մեղ պես զվարթ ու կուռ:

Յերգիր դաշտը համայնական,
Գործարանի ուժը հղոր:
Ու նոր կենցաղը քրդական,
Վոր ծաղկում ե արդեն այսոր:

Այն ժամանակ ավելի վառ,
Կը հնչի քո լերգը հստակ,—
Իո ջերմ քնարը վուկերառ,
Շերուտանի արևի տակ...

1) Խոբիրգային



Ա. Ն. Ա. Գ. Ր

ՄԱՀՎԱՆԻՑ ԱՌԱՋ

Յերբ լես կոլխոզի արտը զնացէ—
Արև եր անուշ՝ հասած արտի պես,
Ախտել կար նաև մի ծեր գլուղացի,
Մաղերն ըսպիտակ՝ Մասիս սարն ինչպես

Ինձ տեսնելուն պես՝ դանդաղ մոռեցալ,
Հանեց չիբուխը և դրեց բերնին,
Ու պահ մի մեր լավ ներկան մոռացած՝
Մըտաքերեց նա անցած որերն հին:

Ասաց տխրալի. «Քյասիր ելի լես,
Մի կով ունելի միայն կորիւս տակ,

Ու պահում նրան աչքիս լույսի պես—
Ականջըս ձենին պահած անդադար...

Ցերկմբ դատեցի գրանից հետո,
Մինչև մի կով ել ունեցա նորից.—
Նեղն ընկած աեղը՝ նրանց լես հերթով
Լծում ելի միշտ, խոր բերում սարից:

Ունելի տղա—անունը Ազիզ,
Ու մի աղջիկ ել—Խանում անունով.
Բայց, ախ, ունելի ուրիշ լուծ վզիս...
Կանչեց հարուստ բեգն ինձ հանկարծ մի որ

Գոռաց նա վրես և ասաց եսպես.
—Յես քեզ մի կին եմ բաշխել արմադան,
Իսկ զալանի տեղ՝ պետք ե աշխատես
Ամբողջ հինգ տարի ձրի դու իմ տան....

...Մնացին անտեր մալս ել, ոճախս ել,
Մնացի լես ել բեգ-աղին գերի,
Ո՞ւմ կարող ելի ոգնության կանչել,
Սև մնա եղպես անանուն տարի:

Հետո՝ ուրիշ սև ել լեկավ գլխիս,
Իրար լետերից մեռան և իմ կին,
Յեվ իմ Ազիզը՝ սրտով միշտ ազիզ.
Այս, մեռավ նաև Խանումն իմ անգին.

Ու ծերացա լես՝ անխիղճ բեղի մոռ,
Մնացի մենակ, անտեր, անոճախ.

Կնոջ, հարազատ լերեխիս կարուտ—
Աշքըս չուր, անճար

Հազար լերանի՛ ձեզ. նհր ջահելներ,
Հազար լերանի՛ ձեր ուրախ որին.
Կորան, գնացին հին զալում բեգեր,
Դուք եք տերն հիմա ձեր աշխատանքի:

Ունեք լեզերի, քյոխվի տեղ հիմի
Ձեր տավին տեղակ լավ իշխանություն.
Բարով վայելեք ձեր որը կարմիր,
Հետն ել ես դաշտը՝ կանաչ ու սիրուն...»:

* *

Ինձ թվաց հանկարծ, թե նա հոգնելով,
Ալդ տիսուր-տրտում պատմությունից զեր
Իր նստած տեղում ննջեց մի ժամով.
Բայց վհչ... ծերունին հավիտան քննց...

○

U. S. S. P. B. & U. S. P. A.

ԻՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Անափ դաշտեր լես ման լեկա,
Տեսա բամբակն սպիտակ.
Աչքըս լցվեց ուրախությամբ,
Զարկեց սիրտն իմ կրծքի առակ:

Տեսա այնտեղ—դաշտում անծիր
կոմսովով ու պիոներ,
Վորոնց դեմքին լես կարդացի՝
Դաշտում բամբակ չթողնել:

Գործարանը մտա հետո
Տեսա այնտեղ—աղմուկում—
Գործում ելին չիթ ու կտոր
Յեկ գլուզերին ուղարկում:

Ապա անցա հազար քաղաք,
Տեսա մարդկանց մկանուտ.
Ապրում ելին հաշու ու խաղա
Հազար տիսակ ժողովուրդ:

Յելա բարձը զողանները՝¹⁾
Յեվ անձիկ կար, և քամի,
Ալստեղ ելին քոչվորները
Հին կենցաղով տակավին.

Յեկ յես այն եմ տեհնչում, վոր քուրդ
Քոչվորությունը, սակայն, —
Հարկավոր ե վերացնել շուտ,
Ա՛յդ ե ասում ապագան:

1) Զոգան՝ ամարանոց, յայլա



ՑԱՆԿ

ԵԶ

Ն. ԶԱՐՅԱՆ.—Քրդական գրականության առաջին ժաղիկները	5
ԱՐՄԲ ՇԱՄԻԼՈՎ.—Ալագոզի քրդերը. Թարգմ. Սուրեն. Քոչարյան	12
ՀԱՅԵՑՑ ԶՆԴԻ.՝Աբո և Լոյլե. Թարգմ. Ս. Տարոնցի	61
» Զողան Թարգմ. Ա. Ավդալ	65
» Յես իզուր չւսեցի քեզ Թարգմ. Հ. Քոչար.	69
» Չաշան Թարգմ. Ա. Ավդալ	71
» Յեմանչայիր գառնարածները Թարգմ. Ս. Տարոնցի	74
» Խնչ անեմ Թարգմ. Հ. Քոչար.	77
Ա. ԱՎԴԻՆ.՝Քառյակներ Թարգմ. Ս. Տարոնցի	80
» Մեր արտը Թարգմ. Ա. Տարոնցի	83
» Զամբիլ Ֆրու Թարգմ. Ն. Զարյան	84
» Զասըմի ու Թումընը	94
ԶԱՅՍԻՐ ԶԱԼԻՒ.՝Ստալինին Թարգմ. Սարմեն	108
» Յերկան Թարգմ. Ա. Տարոնցի	110
» Խմ որերը Ա. Տարոնցի	112
» Զանգը Ա. Տարոնցի	115
» Մենք և Կարմիր բանակը Ա. Տարոնցի	117
» Զինեն բարգմ. Ա. Տարոնցի	119
» Խմ մանկան հետ Ա. Տարոնցի	121
» Ալագյոզի լճակը Ա. Տարոնցի	123
» Կոլխոզի արար Ա. Տարոնցի	125
» Կարմիր մայլս Ա. Տարոնցի	127
» Ամպ ու անձրև Թարգմ. Ա. Տարոնցի	129
» Գողեն Ա. Տարոնցի	131
» Զ. Գենջային Ա. Տարոնցի	134
ԶԱՐԴՈՅՑ ԴԵՆԶՈՒ.՝Նոր զյուղ Թարգմ. Ա. Ավդալ	136
Ա. Միրզախ.՝ Գուլեն Թարգմ. Ս. Տարոնցի	142
ՆՈՒՐԻ.՝ Յերգ Թարգմ. Ա. Տարոնցի	144
» Գնչուհին Ա. Տարոնցի	147
Վ. ՆԱԴՅՈՐ.՝ Մահվանից առաջ Թարգմ. Ա. Տարոնցի	149
ԱԹԱՐՄ ՇԱՐՈ.՝ Իւ Ճամբարդությունը Թարգմ. Ա. Տարոնցի	152

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Այ	առող	Վ/Ն	առված և	պետք ե լինի
5	3	կ	դարձեն	դարձել
7	7-12	ն	ոյուժելիվ, -Ենթարկեցան սյուժեյով-Ենթարկելիքան	
9	12	ն	Լենինգրամի արևել- Լենինդրագի Արևել	
9	21	ն	միության	Միության
10	23-24	կ	պետական հրատարակչությունը Գետական Հրատարակչությունը	
6	10, 11	եջերում	տպագած և հայաստան պետք ե լինի Հայաստան	

ՀՀ Ազգային գրադարան



NL0319369



ԳԵՐԱԼ 1 Բ. 20 Կ.
ԿՈ. 9 Մ Լ 60 Կ.

9pm



Курдские Советские писатели

Составил А. АВДАЛ
Газ ССР Армении Эривань